



ՀԱՏՈՒՑՈՒՄ



Խմբագիր՝
ԶԱԻԷՆ ԹՈՐԻԿԵԱՆ

Էջադրող-գրաշար՝
ՆՈՐԱ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Վարչական Պատասխանատու՝
ԱՐՄԷՆ ԽԱԶԱՏՐԵԱՆ

Սրբագրիչ՝
ԿԱՐՊԻՍ ԶԵՐՏԵԼԵԱՆ

Ծանուցումներ եւ Վաճառք՝
ԿԱՐԻՆԷ ԳԱԼՍՏԵԱՆ

Կայքէջ՝
ԱՐԱՄ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Նկարագարողւմ եւ էջադրող՝
ՎԱՆԻԿ ԹՈՐԻԿԵԱՆ
Third Eye Communications

HAIRENIK Weekly Հիմնուած՝ 1899
80 Bigelow Avenue
Watertown, MA
02472
Telephone: 617 926-3974
Fax: 617 926-1750
hairenikweekly@hairenik.com

Ծանուցումներու համար ads@hairenik.com
Գրախանութի հարցերով bookstore@hairenik.com

ն Վ ա ն դ ա կ ու թ ի լ ն

- 51 Խմբագրական
- 52 Կիզակէտ.- Համակարգուած Պահանջատիրութիւն
Գ. Աչըզեան
- 53 Տէր Զօրի Հայերը Սուրիական Պատմագրութիւններուն Մէջ
Դոկտ. Նորա Արիսեան
- 59 Ոգեղէն Ապարանքը
Վահէ Թաշճեան
- 63 Տերսիմի Հայութեան Երախտաւորը՝ Գեորգ Հալաճեան
Վարդան Մատթոսեան
- 70 Համշէնահայերը եւ Եղեռնը
Աւետիս Հաճեան
- 72 Լոյսով Յաւերժի...
Աւիկ Տէյիրմէնճեան
- 73 Արամ Հայկազի նկարագրած Շապին Գարահիսարի Հերոսամարտը
Մարգարիտ Խաչատրեան
- 76 Հին Էջեր.- Յուդայի Համբոյրը
Եղուարդ Տարօնեան
- 77 «Դրօշակ»ի Հեռագիրը՝ Թալէաթ Փաշային
- 80 Ապրի՛ր, Ո՛վ Հայ ժողովուրդ
Գարեգին Քինյ. Պետուրեան
- 83 Աշխարհաքաղաքական Առօրեայէն.- Հայ - Ռուսական Յարաբերութիւններ
Պետրոս Քինյ. Շիթիլեան
- 89 Ուրբէն Տէր Մինասեան.- Քաղաքագէտն ու Զինուորական Նախարարը
(Մահուան 60-ամեակին առիթով)
Աւօ Գաթրճեան

Խախտագրական

ՀԱՏՈՒՑՄԱՆ

ԱՆՅԱՊԱՂ ՀԱՆԳՐՈՒԱՆ

Հայոց Ցեղասպանութեան ճանաչման գծով կատարուած հետեւողական աշխատանքն ու պայքարը, իր լայնածիր առկայութեամբ եւ այժմեականութեամբ վայրկեաններ, օրեր ու շաբաթներ կը խլէ, եւ երբ ակնթարթ մը ենթագիտակցիմք ու վերլուծենք, շուտով կ'եզրակացնենք թէ, այդ ճանաչման հեւքին մէջ, մենք իսկ ինկած ենք մեր ծուղակին մէջ:

Ձարմանալի եւ աննշմարելի ծուղակ, որուն դարմանը՝ նոյնիմբն...ՍԵՆՔ ենք:

Այսպէս, ճանաչման հարցով այնքա՛ն մը գեր--գրաւուած, մենք՝ Ցեղասպանութենէն ճողոպրած եւ ապա սերունդներ կերտած հայերս, մոռացութեան մատնած ենք բուն թղթածրարը, իսկական թղթածրարը՝ Հատուցումը: Հաւանաբար, այլ պաշտօնական բեմահարթակներու վրայ աւելի լրջօրէն ահագանգէ մոռացման օտարալեզու (անգլերէն կամ ֆրանսերէն) թարգմանութիւնը՝ oblivion:

Այդ անմեղ նորածիններու, երիտասարդներու, ալեհերներու մասսայական տարագրութիւնը, չարչարանքը, տառապանքն ու վերջապէս անբացատրելին ու զարհուրելին՝ Ջարդն ու հետեւողական Ցեղասպանութիւն - Հայասպանութիւնը, բիրաւոր էջերով, զգացական ու փաղաքշական նախադասութիւններով կը շարունակէ ցնցել հայորդին: Սակայն այս կարմիր լուրերէն անդին, գերազանցող եւ գերակշռող այլ բան մը կայ, որ կը մոռնանք, կամ աւելի ճիշդը Ցեղասպանութեան ճանաչման այդ ժանր ու ճգնաժամային աշխատանքն է որ կը մոռցնէ մեզ: Այո՛...մոռցած հայ բանաստեղծին նկարագրած ՅՈՂԸ.- «Գրասեղանիս վրայ, սա սկաւառակին մէջ կայ բուռ մը հող, բերուած հոն, հայրենիքի դաշտերէն...»

Որքա՛ն կարելի է խօսիլ ու մեւլան հոսեցնել այդ տարրական նիւթին՝ հողին մասին: Իսկ Դանիէլ Վարուժանին ու Յովհաննէս Թումանեանին կատարած ցանքը, մշակումն ու հունձքը..արդէն իսկ բաւարար են բացատրելու եւ բացայայտելու, թէ ին՞չ ըսել է հայրենի հողին վրայ ման գալ, քալել, մտածել ու «մշակել»:

Առանց այդ բուռ մը հողին, ո՛չ մէկ ազգային հաւաքականութիւն եւ ո՛չ մէկ պետական-քաղաքական կառոյց, կրնայ ապրիլ, զարգանալ ու գոյատեւել:

Հողը ժողովուրդի մը...ազգի մը զարգացման ու բարգաւաճման կենսական տարածքն է:

Հայոց Ցեղասպանութեան արդիւնք՝ մարդկային, նիւթական եւ մշակութային կողոպուտներու եւ կոտորածներու կողքին, կատարուեցաւ ամենէն աւելի ահաւորը՝ հայորդիէն խլուեցաւ հայրենի հողին, հողաշերտին, հողատարածքին մե՛ծ մասը եւ իւրացուեցաւ Թուրքիոյ կողմէ:

Այսպէս ՀՈՂ ԵՒ ՀԱՏՈՒՑՈՒՄ...եւ այդ ալ երկար տարիներու վրայ երկարող ցեղաջնջման, ազգասպանութեան, տարագրութեան եւ տեղահանութեան հատուցում: Այսուամենայնիւ, եթէ Ցեղասպանութեան ճանաչումը՝ նկատի առնուի բարոյական - ենթակայական բնագաւառէն ներս, այդ պարագային առարկայական եւ նիւթական հսկայական ու անձայրածիր կորուստն է ՀՈՂԸ, որուն համար տեղին է անյապաղ, հատուցման ու պահանջատիրութեան պայքար մղել:



ՏԵՐ ԶՕՐԻ ՀԱՅԵՐԸ ՍՈՒՐԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ



ԴՈԿՏ. ՆՈՐԱ ԱՐԻՍԵԱՆ

Դամասկոս - Սուրիա

Հայերու գաղթականութեան իրավիճակը կ'արտացոլայ Տեր Զօրի պատմութիւնը ուսումնասիրող սուրիական նորագոյն պատմագրութիւններուն մէջ, մանաւանդ օսմանեան ժամանակաշրջանին քաղաքի պատմական եւ ընկերային իրավիճակի զարգացման ընդմէջէն:

Սոյն ուսումնասիրութիւնը կատարեցինք արաբական աղբիւրներու վերլուծութեան հիման վրայ՝ լուսաբանելու համար 19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարու սկիզբին Տեր Զօրի վիճակը եւ Տեր Զօրի մէջ հայերու ներկայութեան խնդիրը:

Այստեղ կը յայտնաբերենք Տեր Զօրի շրջանը հետազօտող նոյնիքն այդ շրջանի պատմաբաններու աշխատութիւններն ու պատմավաւերագրական արժէք ներկայացնող լուսաբանումները, որոնց հիմք հանդիսացած են նաեւ օսմանեան տարեցոյցերը (սալնամէները):

Տեր Զօրի մէջ հայ գաղթականութեան իրավիճակի մասին օտար հեղինակներու պատմագրութիւնները, մանաւանդ սուրիացիներու ուսումնասիրութիւնները Հայոց Ցեղասպանութեան պատմագրութեան համար բաղկացուցիչ միւթեր կը համարուին:



Եփրատի շրջանի պատմութեան լաւագոյն հետազօտողներէն կը համարուի Տեր զօրցի պատմաբան, ազգագրագէտ Ահմատ Շուհանը (մահացած 2007-ին), որ իր աշխատութիւններուն մէջ ընդգրկած է քաղաքի պատմութիւնը:

«Տեր Զօրի պատմութիւնը» գիրքին մէջ «Տեր Զօրը թրքական իշխանութեան տակ» վերնագրի տակ, Շուհան կը նկարագրէ, որ տգիտութեան, կաշառակերութեան եւ խլրտումներու վիճակ կը տիրէր Տեր Զօրի մէջ եւ մանաւանդ արաբներու թրջացման աշխատանքներ: Տեր Զօրի մէջ թուրքերը այնպիսի Պէկեր նշանակեցին, որոնք հռչակաւոր էին իրենց տգիտութեամբ, դրամաշորթութեամբ:



Թուրքերը որդեգրեցին սովի քաղաքականությունը, այրուեցան հողատարածքներ և բանտարկուեցան անմեղներ:

Միև կողմէ, հեղինակը կը մատնանշէ, թէ Առաջին համաշխարհային պատերազմին Տէր Զօրի Կառավարիչ Յիւնի Պէկ, երբ տեղեկացաւ թուրքերու պարտութեան մասին, անմիջապէս հաւաքեց բոլոր արխիւներն ու պետական արձանագրութիւնները և ուղարկեց Ուրֆա»:

Որպէս բնակիչ եւ շրջանի պատմագրութեամբ զբաղող Շուհան իր տեղեկութիւնները քաղած է տեղի ժողովրդագետներէն ու ազգագրագետներէն: Տէր Զօրի բնակչութեան մասին կը բացատրէ, թէ «Տէր Ալ-Ադիբ»ի բնակչութեան մեծամասնութիւնը հինէն ի վեր արաբ մուսուլմաններ էին: Բնակչութեան թիւը կը փոխուէր ըստ գաղթականական շարժումներուն եւ սպանութեան պատահարներուն:

16-րդ դարուն Տէր Զօրի բնակչութիւնը 4000 մարդ կը հաշուէր, իսկ 1880 թուականին 5000-6000 մարդ, 1500 ընտանիք: 1893-ին բնակչութեան թիւն էր 6000-7000 մարդ, իսկ 1912-ին բնակչութիւնը կը մնայ 5000, ուր կ'ապրէին 1000 ընտանիք եւ անմիջապէս 1916 եւ 1929 թուականներուն կը բարձրանայ 20.000-ի եւ կը բազմապատկուի 1931-ին ու կը դառնայ 40.000, իսկ 1932-ին կը նահանջէ ու կը դառնայ 32.000: Այս ելեւէջը կը բացատրուի պատերազմներու եւ գաղթերու երեւոյթներով: Իսկ քրիստոնեաներու թիւի մասին, կ'ըսէ թէ 1922-ին շատ քիչ էին, անոնց մէջ կ'ընդգրուին նաեւ հայերը: Հետագային հայերու թիւը բազմացաւ, եւ կ'ապ


րէին Առ-Ռըշտիէի մէջ եւ կը զբաղուէին առեւտուրով եւ ոսկերչութեամբ:

Պէտք է յիշել, որ Եփրատի շրջանը ուսումնասիրողներու յուշագրութիւններուն մէջ, 1915-1916 թուականի ակնարկումի ընթացքին, անպայման տեղ գտած են հայերու ջարդերը: Հետեւաբար, Տէր զօրցի յայտնի գրող Ռաշիտ Առ-Ռուէյլին հաւատարիմ մնալով իրականութեան, նոյնիսկ զբօսաշրջութեան մասին «Տէր Զօր նահանգի զբօսաշրջութեան ուղեցոյց» ուսումնասիրութեան մէջ, ակնարկած է հայերու ներկայութեան դրդապատճառներուն, ըսելով, թէ 1916-ին Զէքի պէկ Առ-Չարքասին նշանակուեցաւ Մութասարէֆ եւ իր օրով տեղի ունեցան հայերու ջարդերը, քաղաքի բնակիչները զանոնք պաշտպանեցին թուրքերու բռնութիւններէն:

Անհրաժեշտ է յիշել, որ 18 - 19-րդ դարերու ժամանակ, Տէր Զօրի մասին օտարներու յուշերն ու գրութիւնները, որոնք դարձան արաբներու աղբիւրներ, կը հաստատեն հայերու ներկայութիւնը Տէր Զօրի մէջ:

Բնական էր, որ իրադարձութիւններէն ետք մեծ թիւով հայեր հեռանային Տէր Զօրէն եւ որոշ թիւով հայեր ալ հաստատուէին Տէր Զօր եւ հոն ունեցան իրենց մասնակցութիւնը տեղացիներու կենցաղին մէջ:

Հետաքրքրական պիտի ըլլայ սուրիական պատմագրութիւններէն քաղել տարբեր բնագաւառներու մէջ Տէր Զօրի կեանքին մասնակցութիւն բերած փոքրաթիւ հայերու մասին, մանաւանդ յետ-օսմանեան ժամանակաշրջանին:



Ըստ պատմագրություններուն, կարելի է յիշատակել, որ հայեր իրենց մասնակցութիւնը բերած են նաեւ մարգական բնագաւառին մէջ, անդամակցելով մարգական ակումբներու, ուր մեծ աշխուժութեամբ ներդրում ունեցած են մարգական գործունէութիւններուն մէջ:

1930 թուականին հիմնուած «Ալ-Քուլս» մարգական ակումբին մաս կը կազմէին Տէր Զօր ծնած երկու հայորդիներ՝ ճանիկ Երանոսեան (ծ. 1917) եւ Լեւոն Երանոսեան (ծ. 1924): 1938-ին ակումբին անունը կը փոխուի կը դառնայ «Ֆայսալ», հետագային ալ՝ «Ալ-Ֆուրուէ»:

Տէր Զօրի լաւագոյն մարգական ակումբներէն կը համարուէր «Ուխտէ» (եղբայրութիւն) ակումբը, հիմնուած՝ 1942-ին, եւ ուր ֆուսպոլի, պասքէթի եւ այլ մարզաձեւերու զարկ կը տրուէր ու ճանիկ Երանոսեան վերոնշեալ ակումբին եւս մաս կազմած է :

Գալով բժշկական ասպարէզին, 1939 թուականին Տէր Զօրի առողջապահութեան հայ պաշտօնեաներէն կը համարուին անասնաբոյժ բժիշկ՝ Արթին Նսեպ, ատամնաբոյժներ՝ Գրիգոր Երանոսեան, Յանան Ստեփան Թոսունեան եւ արտօնեալ մանկաբարձ՝ Աղնի Սար Տիօլու:


Պատմաբան Շուհան նկատել կու տայ Տէր Զօրի մէջ ոչ արաբներու առկայութիւնը եւ կը յիշատակէ «Տիշլի»

մակդիրը կրող անձնաւորութիւն մը, հետեւեալ տողերով. «Տիշլին, ոչ արաբ անձ մըն է, որուն արհեստը ատամ քաշելն էր. 1910-ին քալելով եկած է Հայաստանէն եւ ապաստանած Տէր Զօր: Ան դարձաւ հռչակաւոր, մինչեւ որ ատամնաբոյժները ժառանգեցին իր գործը եւ իր աշխատանքի վայրը վերածեցին ատամնաբուժարանի»:

Մեր հետազօտութիւններուն շնորհիւ կը հաստատենք, թէ «Տիշլի»ն՝ Ուրֆայէն եկած Գրիգոր Երանոսեանի ածականն էր, որ իսկապէս երկար տարիներ Տէր Զօրի մէջ որպէս ատամնաբոյժ կ'աշխատէր. յետոյ իր գաւակները՝ ճանիկ, Տիգրան, Լեւոն եւ Գարեգին շարունակեցին այդ արհեստը: Գրիգոր Երանոսեանի ատամնաբուժարանը մինչեւ օրս կ'օգտագործուի տեղացի բժիշկներու կողմէ:

Տէր Զօրի մէջ հայերը նշանաւոր էին նաեւ ոսկերչութեամբ՝ ինչպէս Գարգուրը, դերձակութեամբ՝ ինչպէս Քարիմ Լուլիմ: Իսկ արուեստի ասպարէզի մէջ, նշանաւոր էին հայ լուսանկարիչներ՝ Երուանդ Համբարձումեան եւ Գեորգ Բարսեղեան, որոնք մասնակից դարձան յիսունական եւ վաթսունական թուականներուն նահանգին մէջ արուեստի ծաղկման:

Ուսումնասիրելու համար Տէր Զօրի մէջ հայ գաղթականութեան իրավիճակը հարկաւոր է հասկնալ եւ ծանօթանալ քաղաքի բնակչութեան ընկերային մթնոլորտին: Խորանալով քսաներորդ դարու սկիզբին Տէր Զօր քաղաքի եւ բնակեցման զարգացումներու մանրամասնութեանց մէջ կը նկատուին նոր շինար-



արական աշխատանքները «Ալ-Օսմանիե» թաղամասին, որ կը կոչուէր նաեւ «Ալ-Յուլէքա»: Նկատելի են 1903-ին նոր դպրոցներ, մզկիթներ, մեծ կամուրջի ակարտը եւ այլն: Նոր թաղամասեր կառուցուեցան 1912-ին, ինչպէս «Ալ-Պաաժին», «Ալ-Օսմանիե» եւ «Ալի Պէկ»: Քաղաքի բնակչութիւնը կը հաշուէր 12 հազար մարդ: 1917-ին մեծ գետի ձախ ակիւն կառուցուեցաւ պարտէզ մը: Երբ օսմանցիները դուրս եկան, քաղաքին մէջ գոյութիւն ունէր 11 թաղամաս, 13 հազար բնակչութեամբ: Յիշատակման արժանի է, թէ կարգ մը թաղամասեր զարգացան քաղաքին մօտակայ գերեզմանատուներուն հաշուոյն: Յետագօտող պատմաբան Օմար Սէլպի (1951-2008)՝ կը նշէ, թէ «Առ-Ռըշտիե» թաղամասը կը բնակէին քրիստոնէացիներ՝ ասորիներ եւ հայեր, անոնցմէ քրիստոնէայ ամենահին ընտանիքներէն են Լուլի ընտանիքը, Դերձակ Քարին Լուլին:

Չափազանց մեծ արժէք կը ներկայացնեն Տէր Զօրի շրջանը հասնող հայերու մասին անդրադարձող ժամանակակից հետազօտող Ահմատ Ուասֆի Զաքարիայի աշխատութիւնները, որոնք կը ներկայանան իբրեւ յուշապատում Տէր Զօրի շրջանին: Ան, որպէս գիւղատնտեսութեան մասնագէտ եւ օսմանեան բանակի պահեստային սպայ, 1916 թուականին պաշտօնապէս գործուղուած է Եփրատի հովիտ, զսպելու համար Տէր Զօրի շրջանը տարածուած մարախի համաճարակը: Ան հետագային կը դառնայ Շամի կալուածոցի ընդհանուր քմնիչ:

Այսպէս, Սուրիոյ հիւսիսէն մինչեւ հարաւային շրջանները հնագիտական շրջապտոյտ կատարելու ընթացքին Զաքարիա կը նկարագրէ Կիլիկիոյ շրջանը: Ան հայերը կը բնութագրէ որպէս հին ազնիւ ժողովուրդներէն մէկը: Զաքարիայի համաձայն օսմանցիներու գրաւումէն ետք հայերը մնացին Մեծ Յայքի եւ Փոքր Յայքի մէջ, հետագային պետութեան կողմէ ենթարկուեցան պատիժի: «Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանեան պետութիւնը զանոնք քշեց իրենց հայրենիքէն եւ բռնագաղթի ենթարկեց դէպի Եփրատ, Մուսուլ եւ Շամի արեւելեան շրջանները: Անոնց մեծ մասը, մօտ մէկ միլիոն, սպանուեցաւ», կ'ըսէ ան:

Դամասկոսէն Յալէպ, յետոյ Յալէպէն դէպի Տէր Զօր կ'ուղղուի ու ակնատես կը դառնայ ճանապարհին գտնուող գիւղերու իրավիճակին, հիւանդութիւններուն եւ սովի տեսարաններուն: Ան կանգ կ'առնէ իւրաքանչիւր գիւղի մէջ եւ գրի կ'առնէ գիւղատնտեսական տուեալներ:

Այստեղ խիստ կարեւոր կը նկատենք մէջբերել Զաքարիայի աշխատութիւնները, զորս շատ կարեւոր արխիւային թղթածրար սեպելով, ուզեցինք ուսումնասիրել:

Զաքարիա՝ «Յուշերս Եփրատի մասին, 1916» եւ «Ուղեւորութիւն դէպի Եփրատ» աշխատութիւններուն մէջ, գրի առած է իր ուղեւորութիւնն ու յուշերը, որոնք

կ'ընդգրկեն նաեւ ժամանակի պատմական իրադարձութիւններն ու ընկերային վիճակի մասին մանրամասնութիւններ. այսպիսով իր աշխատութիւնները կը հանդիսանան Սուրիոյ այդ շրջանի մասին հաւաստի աղբիւրներ:

Ահմատ Ուասֆի Զաքարիայի յուշագրութիւններուն մէջ հարագատօրէն պատկերուած են հայկական դէպքերու հետեւանքին նկարագրութիւնները:

Այսպէս, ըստ Զաքարիայի տուեալներուն, 1909 թուականէն սկսեալ ժազիրայի շրջանը մեծաթիւ գաղթականներ խուժած են, որոնց մաս կազմած են տարբեր կրօններու հետեւորդներ, ինչպէս՝ քիւրտեր, ասորիներ, եգիպտացիներ եւ հայեր, որոնք Թուրքիայէն տարագրուած էին:

«Պետեւիներու ցեղախումբերը» աշխատութեան մէջ հեղինակը սուրիական անապատի ցեղախումբերու մասին մանրամասն կը գրէ: Կեդրոնանալով «Ալեքսադր» ցեղախումբին (որ կը համարուէր Տէր Զօրի գիւղական ամենամեծ ցեղախումբը) վրայ, կը բացատրէ, որ ան վնասներ կրած էր թուրք զինուորներու եւ «Ալ-Անէզա» ու «Շուսմար» ցեղախումբերու յարձակումներէն, մանաւանդ սովի եւ վարակիչ հիւանդութիւններու շրջանին: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներուն, երբ անոնք չփնջած մէջ կը մտնէին Եփրատի եւ Տիգրիսի ակիւններուն քշուած հայերու կարաւաններուն հետ, կը վարակուէին անոնց հիւանդութիւններէն, մանաւանդ երբ դիֆուսէն տառապած մեռեալներու հագուստները կը հագնէին:

Խորանալով Ուասֆի Զաքարիայի աշխատութիւններուն մէջ, որոնք կը պարունակեն ակնատեսի վկայութիւններ, կը գտնենք, որ «Ապի Յուրէյրա» շրջանէն անցնելու ժամանակ ան հանդիպած է հայերու կարաւաններու մեծ գաղթավայր մը: Ան կը տեղեկագրէ, թէ թուրք կառավարութիւնը զանոնք արքայութեան իրենց տուներէն եւ հողերէն: Անատոլուէն եւ զանազան վայրերէ տեղահանուելով անոնք հասած էին Տէր Զօրի ճանապարհին զոր շարունակելով կ'ուղղուէին դէպի Մուսուլի անապատները: Ուասֆի Զաքարիա կը գրէ. «Գաղթավայրը կ'ընդգրկէր հարիւրաւոր պրիսմակի ձեւով վրաններ, քով քովի շարուած եւ լեցուած՝ տղամարդոցմով, կիներով եւ երեխաներով: Կը լսուէր անոնց ժխորը մեղուներու տոգոցի նման: Անոնք գանգատելով իրենց տառապանքին եւ վատ վիճակին մասին, մօտեցան ինծի օգնութիւն խնդրեցին եւ հարց տուին իրենց ճակատագրի մասին»:

Միեւնոյն ժամանակ, Ուասֆի, որպէս դէպքերուն ակնատես՝ իր յուշագրութիւններուն մէջ կը վկայէ Տէր Զօրի հայ գաղթականներու կենցաղային վիճակի մանրամասնութիւններուն մասին:

Այսպէս՝ երբ Տէր Զօր այցելած է Մարտ 1916-ին, «Տէր»ի բնակչութիւնը չէր անցնէր 20 կամ 25 հազարը:



Հոն կային խաներ, այդ ժամանակներու պանդոկները, եւ Հալէպէն Պաղտատ գացող կարաւաններու իջեւանատուներ:

Մայր ճամբուն վրայ, կային քաղաքապետարանին մեծ պարտեզը եւ քանի մը հայ գաղթականներու տնօրինութեամբ բանող ճաշարան մը եւ սրճարան մը, ուր կը յաճախէր Ուասֆի Ջաքարիա սուրճ եւ թէյ խմելու:

Պէտք է ըսել, որ Ջաքարիա հիացած էր Տէր Զօր քաղաքի կառուցուածքին վրայ, արեւմուտքէն արեւելք երկարող գլխաւոր փողոցը կը բաժնէր քաղաքը երկու մասի: Ան կը նկարագրէ քաղաքի մանրամասնութիւնները ըսելով, թէ փողոցները զուրկ են կոյուղիներէ, չեն ասֆալթուած: Հարուստներու տուները նորածեւ ոճով կառուցուած են, մանաւանդ «Ալ-Հաուիճա» Եփրատի երկու մասերուն միջեւ գտնուող կղզիներուն մէջ: Անոնց տուները երկու աստիճան բարձր կ'ըլլային եւ առաստաղով պատուած, իսկ պատերը՝ քարաշէն: Պատերու դուրսի մասերը կը ծեփէին ցեխով կամ գաճով: Տուներու դռները ընդհանրապէս շինուած էին Տէր Զօրի մարմար քարով, ունին շատ մեծ բանալիներ: Սենեակներու յատակները եւ պատերը ծեփուած էին գաճով, որ շատ կ'օգտագործուէր Տէր Զօրի մէջ:

Տէր Զօրի մէջ կար միայն մէկ բաղնիք, բնակչութեան մեծ մասը գետափին կը լոգնար: Կային մեծ թիւով սրճարաններ, յատկանշական էր, անոնց գոց գոյնով թէյը:

Ջաքարիա, տեղեկագիրներու ոճով գրուած իր աշխատութիւններուն մէջ Տէր Զօրի բնակչութեան մասին

ակնարկելով կը հաստատէ, թէ քաղաքի մեծամասնութիւնը սուննի իսլամներ էին, քիչ թիւով քրիստոնեաներ եւ հրեաներ կային, սակայն հայերուն դէպի Եփրատի հովիտը եւ Մուսուլի տափաստանը բռնի քշուելէն ետք, անոնց մեծ մասը մնաց այդտեղ եւ հաստատուեցաւ «Տէր Ալ-Ադիք»ի թաղամասը, յետոյ անոնք դուրս քշուեցան դէպի Մուսուլ, ուր հանդիպեցան ծանօթ ճակատագրին:

Տէր Զօրի թաղերը շրջելով Ջաքարիա կը ծանօթանայ քաղաքի հիմքը կազմող եւ դարերու ընթացքին նոյն անունը պահած «Տէր Ալ-Ադիք» ամենահին թաղամասին: Հոն կը տեսնէ նեղ փողոցներ եւ խճողուած տուներ, որոնք կառուցուած էին քարէ կամ չորցուած մածուկէ, սենեակները՝ քիչ, պատուհանները՝ հազարաւէր, մէկ խօսքով՝ զարշահոտ թաղամաս: Ըստ Ջաքարիային, վիճակը վատթարացաւ երբ գաղթական հայերը հասան եւ այդ թաղամասը բնակեցան, հոն տուներ կամ սենեակներ վարձեցին, ուր երկու կամ երեք ընտանիք միասին կ'ապրէին մէկ սենեակի մէջ ու այսպէս մնացին ամիսներ շարունակ մինչեւ, որ վտարուեցան այդտեղէն:

Ջաքարիա, մեկնելով իր մասնագիտութենէն կը հետազօտէ շրջանին մէջ տարածուած հիւանդութիւնները: Տէր Զօրի գիւղերը շրջելով կը նկատէ, թէ տեղի բնակիչները կը կոչուին «Շաուայա», ակնարկելով իրենց գիւղացիական հանգամանքին: Անոնք կը տառապէին զանազան հիւանդութիւններէ, ինչպէս աչքի, սեռային գործարաններու եւ դիֆուսի ջերմութեան հիւանդութիւններէ, որոնց վարակումը, ըստ իր նկարագրութեան կատարուած էր այդ գիւղերը հասած

հայերու դիակներէն: Ան, դէպքին ականատես դառնալով կը վկայէ, թէ հարցը վատթարացաւ երբ գիւղացիները կը յարձակէին հայերու կարաւաններու ուղեւորութեան ընթացքին գետին փռուած դիակներուն վրայ, մեռելները կը մերկացնէին եւ անոնց հագուստները կը հագնէին, առանց տարբերութիւն դնելու կիներու կամ այրերու հագուստներուն, զանոնք աւար համարելով :

Զաքարիա, կ'աւելցնէ. «Միեւնոյն ժամանակ ծիծաղելի եւ տխուր էր, երբ գիւղացի տղամարդիկ կը տեսնուէին մեռել կիներու հագուստներ հագած եւ գիւղացի կիներ՝ մեռել տղամարդոց հագուստներ հագած: Բնականաբար ջերմութիւնը, որ պատճառ դարձած էր գաղթական հայերու մահուան, կը վարակէր գիրենք այդ հագուստները հագնելէն ետք ու կ'իյնային գետին: Քանի անգամ տուներ հասած ենք, սակայն, աւա՛ղ, բնակչները՝ հայր, մայր եւ զաւակներ մահացած էին հայերէն վարակուելով»:

Ահմատ Ուասֆի Զաքարիայի յուշագրութիւնները կը համարուին դէպքերուն ժամանակակից յուշագրութիւններ եւ պատմագիտական բնոյթի ուսումնասիրութիւն, հետեւաբար անոնք կը ստանան Հայոց Ցեղասպանութեան եւ մանաւանդ Տէր Զօրի պատմագրութեան պատմական վաւերագիրներու արժէք:

Մեր յայտնաբերած աղբիւրները կը փաստեն, որ Տէր Զօրի մէջ հայերու առկայութեան հանգամանքը եւ ընդհանուր գիծերով Հայոց Ցեղասպանութիւնը պատմագրութեան է սուրիական պատմագիտական աշխատու-

թիւններուն մէջ: Անոնց վրայ հիմնուելով կ'եզրակացնենք թէ շնորհիւ սուրիական շարք մը աշխատութիւններու մենք ունեցանք լրացուցիչ տուեալներ Տէր Զօրի մէջ հայ գաղթօճախի առկայութեան մասին, յատկապէս հայերու մասնակցութեան տեղական կեանքին մէջ:

Այսպիսով, կը հաստատենք թէ օսմանեան ժամանակաշրջանը հետազօտող սուրիական պատմագրութեան մէջ տեղ գտած է Հայոց Ցեղասպանութեան դէպքերու իրողութեան լուսաբանումը եւ Տէր Զօրի մէջ հայերու առկայութեան թեմային արծարծումը:

Սոյն ուսումնասիրութեան մէջ, Տէր Զօրի պատմութիւնը հետազօտող կարգ մը սուրիական աղբիւրներ յայտնաբերելով, կարելի եղաւ լուսաբանել Տէր Զօրի հայ գաղթականութեան դրութիւնը եւ ընկերային վիճակը, փաստելով, որ սուրիական ժամանակակից պատմագրութիւնները արժէքաւոր են Հայոց Ցեղասպանութեան եւ Տէր Զօրի մէջ հայերու առկայութեան վաւերագրման տեսանկիւնէն:

Օգտագործուած աղբիւրներ.

1. Շուհան Ահմատ, «Տէր Զօրի պատմութիւնը», Տէր Զօր, 1989:
2. Աշ-Շահին Մազէն, «Յաւերժ դէպքեր Տէր Զօրի պատմութեան մէջ», Տէր Զօր, 2007:
3. Սլէպի Օմար, «Զօրի նահանգը Օսմանեան ժամանակաշրջանին, ընկերային եւ տնտեսական», Դամասկոս, 1997:
4. Զաքարիա Ահմատ Ուասֆի, «Հնագիտական շրջապտոյտ», Դամասկոս, 1934:
5. Զաքարիա Ահմատ Ուասֆի, «Յուշերս Եփրատի մասին 1916 թուականին», Տէր Զօր, 1970:

AD



ՈԳԵՂԷՆ ԱՊԱՐԱՆՔԸ

ՎԱՅԷ ԹԱՇՃԵԱԼ
Պերլին – Գերմանիա

Չոկտեմբեր 2010ին կը գտնուէի Պէյրութ: Այցելութիւն մը տուած էի բարեկամիս, որ նոր վերադարձած էր Սիս-Քոզան կատարած աշխատանքային ճամբորդութենէ մը: Խանդավառ ցոյց կու տար իր քաշած լուսանկարները, որոնց շարքին կարելոր տեղ մը կը գրաւէր Եաւէրին Քոնաքը, Սիս-Քոզանի հրաշագեղ տուններէն մէկը: Բարեկամս կը պատմէր, որ սոյն տունը նախապէս պատկանած է հայու մը, տարիներ շարունակ լքուած ու կիսափլատակ մնացած է: Իսկ վերջերս տեղւոյն քաղաքապետարանը, որ կը գտնուի ԱՔ կուսակցութեան ձեռքը, ինք յանձն առած է ապարանքին նորոգութիւնը, վերածած է զայն պանդոկ-ճաշարանի մը, որ Սիս-Քոզանի զբօսաշրջիկական ամենէն աչքառու ու տպաւորիչ վայրերէն մէկն է: Ապարանքին մասին մինչեւ իսկ գոյութիւն ունի համացանցային կայքէջ մը, որուն միջոցաւ կարելի է տեսնել շէնքին թէ՛ արտաքին դիմագիծը եւ թէ՛ ներքին կառուցուածքն ու զանազան սենեակներուն կահաւորումները:

Այս բոլորին մէջ արտասովոր բան մը պէտք չէ անպայման փնտռել: Նոյնիսկ կարելի է զովել այսպիսի նախաձեռնութիւն մը, որ անցեալէն մնացած կառոյց մը կը վերականգնէ իր հարազատ ծնուով եւ երբեմն ալ յանդգնութիւնը կ'ունենայ ապարանքին իսկական սեփականատէրին անունը նշելու: Ի վերջոյ այսպիսի քայլեր մեծապէս նախընտրելի են անցեալի քաղաքականութենէն, որ կը միտէր հայերու հետքը վերջնականապէս ջնջել երբեմնի հայաբնակ այս վայրերէն՝ քանդելով հայերու պատկանած համայնքային կամ անհատական շէնքերն ու կառոյցները ու սրբելով այս տեղերէն անոնց երեւելի հետքերը:

Բայց ո՛չ: Բարեկամիս ցոյց տուած Եաւէրին Քոնաքին պատկերը ուրիշ բան չէր եթէ ոչ մեծ-մեծ հօրս՝ Գրիգոր Մճրգեանին (կոչեցեալ Եաւէր էֆէնտի) սեփական տունը...

Այս պատճառով ալ ապրած անձնական ցնցումս մեծ էր: Մինչեւ այդ այս տունը մաս կը կազմէր մեր ընտանեկան հաւաքական յիշողութեան: Տարիներու ընթացքին մեծերը մահացած էին, իսկ իրերայաջորդ նոր սերունդները նոյնիսկ այլեւս չէին կրնար սոյն ապարանքը տեղադրել Սիս-Քոզան քաղաքի հին կամ նոր համայնապատկերներուն վրայ: Բայց տունը միայն աշխարհագրական կէտ մը չէր, անիկա նաեւ ամբողջ ժառանգութիւն մըն է անձնական յուշերու, որոնք առայսօր վառ կը մնան մեր ընտանեկան-գերդաստանային միջավայրին մէջ:


Առաջին հակազդեցութիւնս եղաւ լուրը հաղորդել մօրս՝ Եաւէր էֆէնտիին թոռնուհիին, եւ ցոյց տալ անոր ապարան-



Գրիգոր Եաւէր էֆէնտի Մճրգեան

քին արդի պատկերները: Լուրը շատ արագ տարածուեցաւ մօրս մօտ 15 զարմիկ ու զարմուհիներու շրջանակին մէջ՝ բոլորն ալ Գրիգոր Մճրգեանին թոռներն ու թոռնուհիները: Պատմագետի փորձառութիւնս գործի դնելով՝ սկսայ համակարգել աշխատանք մը, որ կը միտէր այս ազգականներէս քաղել տան մասին անձնական յիշողութիւններ՝ իրենց հայրերէն ու մայրերէն փոխանցուած: Պատմուածները յուշերու պատառիկներ էին. փաստօրէն անոնցմէ ոչ մէկը այս ապարանքին մէջ ապրած էր. Գրիգորին դուստրը Զարուհին այս տան մէջ դաշնամուր նուագել սորված է. նոյն դաշնամուրին վրայ Գրիգորին կ'ինը Դոնիփսիմէն, կը նուագէր «Դայր Սեր»ը, որ սորված էր նոյն քաղաքին մէջ գտնուող Կաթողիկոսարանի միաբաններէն մէկէն. այլ դուստր մը՝ Երանուհին, մեծ տպաւորութեամբ կը յիշէր տան մեծութիւնը, անոր ընդարձակ փակը, այնտեղ գտնուող նարնջենիները. ան յաճախ կը կրկնէր նաեւ որ իրենց տան մէջ տուշ ու ելեկտրական զանգ կային: Մայրս պահած է տակաւին սուրճի զաւաթներու ամբողջ սէթ մը, որ ժամանակին Եաւէր էֆէնտիին բերած է Երուսաղէմէն ու նուիրած՝ իր կնոջը, որ ընտանեկան յիշողութեան մէջ կը ճշուի «Անա» անունով: Կը պատմուի նաեւ Եաւէր էֆէնտիին հարստութեան «զաղտ-նիք»ը. անոր մայրը՝ Գալինճի Անան, Սիս-Քոզանի բարեկեցիկ ընտանիքներէն՝ Փաշապէգեաններուն մօտ լուացարարուհի էր: Փաշապէգեաններուն դուստրը՝ Դոնիփսիմէն, 21 տարեկան էր, եւ այն ժամանակներուն կը համարուէր այլեւս «տունը մնացած»: Այստեղ է որ կ'որոշուի զայն կնութեան տալ լուացարարուհիին որդիին՝ զեղաղէմ ու պարթեակազմ Գրիգորին: Անունութիւնը կը կնքուի, Գրիգոր անմիջապէս որոշ հարստութեան տէր կըլլայ եւ շնորհիւ իր ձեռներէցութեան՝ շատ արագ կը բարելաւէ նիւթական իր դրութիւնը ու կը դառնայ Սիս-Քոզանի ամենէն երեւելի առեւտրականներէն մէկը:

Տարօրինակը հոն է, որ որքան կը խորանայի այս պրպտումներուս մէջ՝ մտքիս մէջ այնքան աւելի կը վերականգնէր ու կը վերաթարմանար այլ տան մը յիշողութիւնը, որ միայն անուղակիօրէն առնչուած է Սիս-Քոզանի Եաւէր էֆէնտիի ապարանքին: Այս մէկը մեծ հօրս՝ Խաչիկ Մճրգեան-Եաւէրեանին Պէյրութի տունն է՝ երկաթ կամուրջին ճիշդ դիմացը: Այստեղ է որ յաճախ կը հաւաքուէին Եաւէր էֆէնտիի վեց զաւակները՝ Երանուհին, Զարուհին, Դայկուհին, Խաչիկը,



Սիս-Քոզան քաղաքը 1920-ականներուն

Սիսաքը եւ Նուպարը: Անոնց մեծամասնութիւնը այն ժամանակ կ'ապրէր Պէյրութ, յաճախ միասին կը տօնէին Ջատիկն ու Կաղանդը ու շրջապատուած կ'ըլլային իրենց գաւակներով ու թռռներով: Իսկ տան պատէն կախուած էր մեծածաւալ ու գունաւոր պատկերը Եաւր էֆէնտիին, որ կարօժք դարձած ըլլար ընտանեկան իքոնի մը: Պէյրութը ձեւով մը Սիս-Քոզանին տեղը առած էր, ընտանեկան բոյնը վառ կը մնար, բոլորը միատեղ էին ու կեանքը հեզասահ կը շարունակուէր:

1970-ական թուականներուն ծայր առած Լիբանանի պատերազմը աղէտ մը պիտի ըլլար մեր եւ ինչպէս շատ-շատերու ընտանեկան-գերդաստանային այս ապրելաձեւին: Ձինեալ բախումները կացինի հարուած մը պիտի տային գերդաստանային այս գոյնզգոյն մթնոլորտին. Եաւր էֆէնտիի գաւակները, թռռներն ու ծորերը պիտի տարանջատուէին, ամէն մէկը պիտի երթար տարբեր ուղղութեամբ. Մարսէյ, Լոս Անձելըս, Նիս, Սան Ֆրանսիսքօ, Փարիզ, Մոնրէալ, Պերլին եւ շատ քիչեր ալ պիտի մնային Պէյրութ: Իսկ ձեւով մը աղէտին գագաթնակէտը պիտի ըլլար այն ռումբը, որ պատերազմի թէժ օրերուն պիտի հարուածէր մեծ հօրս բնակարանը, տունը անմիջապէս պիտի հրկիզուէր, իր հետ առայաւէտ տանելով նաեւ Սիս-Քոզանէն մնացած լուսապատկերներ, անձնական իրեր, ինչպէս նաեւ պատէն կախուած Եաւր էֆէնտիին մեծադիր պատկերը...

Մեծ հօրս հրկիզուած ու կիսաքանդ տունը տակաւին նոյն տեղն է: Ամէն անգամ որ Պէյրութ երթամ ու անցնիմ անոր առջեւէն սրտցաւութիւն մը կը պատէ զիս: Հաւանաբար ան

ալ Պէյրութի շատ մը հին տուններուն նման օր մը պիտի քանդուի ու փոխարէնը պիտի կառուցուի արդիական շէնք մը: Ինձ համար այս տունը վկայ է աղէտի մը, որուն ամենէն դժուար ու ծանր պահերը ես ինքս ապրեցայ լիբանանեան պատերազմին ողջ տեւողութեան:

Տարբեր չէ պարագան նաեւ Եաւրէին Քոնաքին: Սիս-Քոզանի մէջ... Աւելին, կը կարծեմ որ ան աղէտին սկզբնաղբիւրն է:

Այստեղ էր որ 1918ի սկիզբը պիտի բերուէր Եաւր էֆէնտիի դիակը: Հոն փսիմէն անմիջապէս իր վեց գաւակները վերի յարկը պիտի բարձրացնէր, որպէսզի փոքրիկները չտեսնէին իրենց հօր անշնչացած մարմինը: Շնորհիւ իր ազդեցիկ կապերուն, Գրիգոր էֆէնտիին Աղէտի այս տարիներուն փաստօրէն յաջողած էր ինքն ու իր ընտանիքը գերծ պահել տեղահանութեան հրամանագիրէն: Բայց պատերազմի վերջին տարին իթթիհատական կուսակցութեան անդամ իր թուրք ընկերները ի վերջոյ կը սպաննեն զինք: Քանի մը տարի առաջ երբ Նանթ քաղաքին մէջ հետազօտութիւններ կը կատարէի Կիլիկիոյ ֆրանսական իշխանութիւններուն արխիւներուն մէջ պատահաբար գտայ իրաւական թղթածրար մը, որ կը վերաբերէր Գրիգոր էֆէնտիին սպանութեամբ ամբաստանուած հինգ անձերուն: Անոնցմէ մէկը Սիս-Քոզանի դատական խորհուրդին նախագահն էր, իսկ միւսն ալ՝ քաղաքապետութեան դիւանակալը: Ամբաստանեալները փախուստի մէջ էին, իսկ ֆրանսական իշխանութիւնները կը սպառնային անոնց ընտանիքները Քոզանի շրջանէն վտարել, եթէ տուեալ անձերը արդարութեան չյանձնուէին:



Եաւերնց քոնաքը 1900-ականներուն... ապարանքին վերեւ կ'երեւի Կաթողիկոսարանին Սուրբ Սոֆիա տաճարը



Խաչիկ Մճրգեան-Եաւերնացի Գրիգորի երէց որդին, նկարուած Զաւէլ 1920ականներուն

Վերադարձին ան սրտի կաթւած կ'անցնէ եւ քանի մը տարի ետք ալ կը մահանայ...

Սօս հարիւր տարի անցած է այն օրէն ի վեր, երբ Եաւերնացի Քոնաքին իսկական սեփականատէրերը թողեցին իրենց հայրենի քաղաքը ու վերջնականապէս բնակութիւն հաստատեցին այլ վայրերու մէջ: Տարօրինակը այն է, որ մեծ մեծ հօրս պատկանած ապարանքին յիշատակը, անոր կապուած այսօրուան իրադարձութիւնները կը շարունակեն յուզել ինձ ու ազգականներս: Խորքին մէջ կը դժուարանամ գտնել այս երեւոյթին յստակ ու բաւարարող պատասխանները: Ամբողջ հարցը իր մէջ կը պարփակէ զանազան հակասութիւններ: Փաստօրէն ուրախ եմ որ անձնական աղոտ ու հինաւուրց յիշողութիւններու

Ջետագային, քաղաքական փոփոխութիւններու լոյսին տակ, հետաքննութիւնը կանգ կ'առնէ ու Եաւերնացի դատական թղթածրարն ալ ուրիշ շատերու նման կը փակուի ու կը մոռցուի:

Ընտանիքին միւս անդամները պիտի շարունակէին այս ապարանքին մէջ բնակիլ տակաւին քանի մը տարի եւս: Զինադադարէն ետք, ֆրանսական բանակը կը գրաւէ նաեւ Սիս քաղաքը: Տեղահանուած ու վերապրած հայերը կը վերադառնան այստեղ ու նոր կեանք մը ծայր կ'առնէ: Մեր ընտանիքին մէջ տան անդրանիկ տղան՝ մեծ հայրս՝ Խաչիկը, կարծեք թէ այսուհետեւ ինք կը ստանձնէ տան երեցի պաշտօնը: Ինքն է որ այդ տարիներուն սպաննուած հօր փոխարէն կը վարէ Սիս-Քոզանի երեւելիի դերը՝ ստանձնելով պետական ու համայնքային պաշտօններ: Բայց ժամանակները թաւազոր կը փոխուին: Թրքական զօրքերը մօտեցած էին քաղաքին եւ ֆրանսական իշխանութիւնները հրաման կու տան իրենց զօրամասը քաշել այստեղէն: Մայիս 1920ին, ֆրանսական այս նահանգին կ'ընկերանայ քաղաքին ամբողջ հայութիւնը:

մառանէն նոր ու իրական դիմագիծով մը առջեւ կը պարզուի մեր ընտանեկան ապարանքը: Այլեւս կենդանի իրականութիւն մըն է անիկա. հպարտ եմ անոր շքեղ կերպարով, նոյն հպարտութեամբ ալ զայն ցոյց կու տամ բարեկամներուս, քանի մը տարի վերջ ալ վստահաբար ցոյց պիտի տամ երկու զաւակներուս: Վստահ եմ քանի-քանի հայեր պիտի փափաքէին ու պիտի երազէին նոյն այս վերականգնած վիճակին մէջ տեսնել իրենց նախահայրերուն երբեմնի տունը:

Կայ, սակայն, հարցին դժուարամարս կողմը: Աչքէ կ'անցնեն Սիս այցելած բարեկամիս իր հետ բերած գրքոյկները, ուր գրութիւններ կան Եաւերնացի պատմութեան ու վերակառուցման գործին մասին: Առաջին հերթին հետաքրքրական ու գովելի է որ ամէն տեղ ալ նշուած է ապարանքին տիրոջ՝ մեծ-մեծ հօրս անունը, անոր ազգային ինքնութիւնը: Բայց կայ նաեւ մետալին միւս երեսը. անընդմէջ կը շեշտուի անոր օսմանցի հաւատարիմ քաղաքացի մը ըլլալը, «Եաւերնացի» տիտղոսին տիրանալը: Իսկ ի՞նչ կը նշանակէ այս մէկը: Ո՞վ է հաւատարիմ քաղաքացիի գաղափարը սահմանողը: Արդեօ՞ք այսօրուան Թուրքիոյ մէջ հայու մը տունը պետական միջոցներով վերանորոգելու համար նախ պէտք է արդարացնել անոր հաւատարմութիւնը պետութեան առջեւ: Իսկ աւելի անընդունելի այն փաստն է, որ Գրիգոր-Եաւերնացի Մճրգեանին շառաւիղները ամբողջովին անտեսուած են վերակառուցման այս ամբողջ գործընթացէն: Ի վերջոյ մեծ-մեծ հայրս միայն անուն մը չէ, ունեցած է վեց զաւակներ, ունեցած է բազմաթիւ թոռներ ու ծոռեր, որոնցմէ մէկն ալ ես ինքս եմ: Բայց վերակառուցման ձեռնարկողներուն համար կարծեք մենք բացականեր ենք, մեծ բացականեր: Այո, իրականութիւն է որ տեղւոյն համայնապատկերէն բացականեր են Սիս-Քոզանի երբեմնի հայերը, բայց կարծեք նաեւ բացականեր կը համարուինք ընդհանրապէս, առյաւել:

Բայց մեր ընտանիքին մէջ, Եաւերնացի Քոնաքին կապուած այս պատմութիւնը այստեղ ալ վերջ չի գտներ: Կար տակաւին այլ ժամադրութիւն մը, թէեւ շատ աւելի ուշ: Մեծ հայրս աքսորի իր տարիներուն ընթացքին կապը շարունակած էր պահել Սիսի իր թուրք դրացիներուն հետ: 1960ական թուականներուն անոնք նոյնիսկ կը հրաւիրուին Լիբանան ու կը հիւրընկալուին մեծ հօրս կողմէ: Ինչպէս ալ կարելի է ենթադրել, կը պատմուի որ այսպիսի այցելութիւն մը լաւ չընկալուի հայկական համայնքային պատասխանատուներուն կողմէ: Բայց կարծեմ մեծ հայրս անշեղօրէն կը հետապնդէր այլ ծրագիր մը: Ան ենթահողը կը պատրաստէր վերջին աքթի մը, զոր տարիներ շարունակ երազած էր իրագործել. այցելել իր հայրենի տունը: Իսկապէս ալ, թուրք բարեկամները պէրութեան հիւրընկալութեան կը փոխադարձեն եւ մեծ հօրս կը հրաւիրեն Սիս-Քոզան: Ան իր հայրենի քաղաքը կը հասնի 1960ականներու վերջաւորութեան ու կ'այցելէ Եաւերնացի Քոնաքը, իրենց սեփական տունը...

Խորքին մէջ ամբողջ ոգեղէն անցեալ մը մեզ կը կապէ Եաւերնացի ապարանքին հետ: Կարծեմ ճիշդ այս ոգեղինացման գործօնին մէջ ալ կը կայանայ բուն հարցը: Ապարանքը իմ ու ազգականներուս համար այսքան տարի գոյատեւած է



Եաւէրէնց Քոնաքը ներկայիս

իրբել ոգեղէն կառոյց մը, լի զանազան յիշատակներով, այնպէս ինչպէս ոգեղէն կառոյց մըն է նաեւ մեծ հորս այսօրուայ կիսափլատակ պէյրութեան տունը՝ երկաթ կամուրջին դիմացը: Բայց երկու տուներուն միջեւ բաղդատականը թերեւս միայն այս կէտին մէջ ալ կը սահմանափակուի: Մեծ հայրս Պէյրութի մէջ վարձակալ էր տան մը, որ սկիզբէն իսկ իրը չէր. բնակարանը կը քանդուի ու կը հրկիզուի դառնաղէտ ու խելակորոյս պատերազմի մը ընթացքին, երբ մեծ հորս պատկանած համայնքը ուղղակի թիրախ մը չէր: Մէկ խօսքով այստեղ բացակայ է իրաւազրկումի մոմենթը:

Եաւէր էֆէնտիին Քոնաքին պարագային առաջին հերթին գոյութիւն ունի չլուսաբանուած ու անպատիժ մնացած ոճիւրը, որ մեր ընտանիքին հաւաքական յիշողութիւնը կը կապէ այս տան հետ: Կայ նաեւ ընդհանուր տեղահանութիւն մը, որ վերջնականապէս կը խզէ միւթական կապը մեր ընտանիքին ու այս ապարանքին միջեւ: Ոճիրն ու խզումը կը կարծեն այլ հանգամանք մը կ'ու տան ամբողջ հարցին. այնքան որ խլուած հայրենի տունը, հակառակ տասնամեակներու թաւալումին, կը դառնայ անարդարութեան մը խորհրդանիշը:

Հետեւաբար, ինձ եւ վստահաբար նաեւ շատ մը ազգականներուս համար Եաւէրին Քոնաքին վերակառուցումը, զայն շքեղ պանդոկ-ճաշարանի վերածելը մասնակի եւ ինչու չէ նաեւ գայթակղալի աքթ մը կը համարուի, այնքան ատեն որ մեզ բաւարարող պետական պատասխան մը չունինք: Գրիգոր Եաւէր էֆէնտի Մճրգեանին դէմ գործուած ոճիրին մասին, այնքան ատեն որ պետական մակարդակով յստակ-



Եաւէրէնց Քոնաքը 1963 թուականին

օրէն ու առարկայականօրէն չէ ըսուած թէ ինչու օրին մէկը Եաւէրին զաւակները՝ Խաչիկը, Միսաքը, Նուպարը, Երանուհին, Զարուհին եւ Հայկուհին, իրենց մօր՝ Զոփիսիմէին հետ, փութով թողեցին Սիս-Քոզանը ու այնտեղի իրենց շքեղ ապարանքը ու բնակութիւն հաստատեցին օտար ավերու վրայ:

Համոզուած եմ որ այս հարցերուն պատասխաններ գտնելէ ետք միայն Եաւէրին Քոնաքն ու անոր հետ կապուած պատմական ժառանգութիւնը վերականգնելը նոր իմաստ կրնայ առնել: Այն ժամանակ թերեւս նաեւ կարելի ըլլայ վերականգնել շատ մը այլ տուներ, նոյնպէս ժամանակին հայերու սեփականութիւններ, հայկական համայնքային հաստատութիւններ, որոնց շարքին եկեղեցի, դպրոց, խաչքար: Այն ժամանակ ի վերջոյ կարելի ալ պիտի ըլլայ ստեղծել Սիս-Քոզանի հայերուն մասին նոյն քաղաքապետութեան ծախսերով թանգարան մը, ուր պիտի պատմուի նախահայրերուս պատմութիւնը այս քաղաքէն ներս՝ սկզբնական ժամանակներէն մինչեւ այն դժբախտ օրը, երբ ստիպուեցան լքել իրենց հայրենի տունը: Այսպիսի ձեռնարկի մը ես ինքս ալ պիտի փափաքէի իմ սիրալոյս ժառանգակցութիւնս բերել:

ՏԵՐՍԻՄԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԱԽՏԱԴՈՐԸ՝ ԳԵՈՐԳ ՀԱԼԱՃԵԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԵՆՍԵԱՆ

Նիւ Ծըրզի - Ա.Մ.Ն.

Ծ.Խ.- Նկատի ունենալով, տարբեր աղբիւրներէ օգտագործուած այս գեր-հետաքրքրական ուսումնասրութիւնը, խմբագրութիւնս պահած է կարգ մը յատուկ անուններու եւ վայրերու տարբեր ուղղագրութիւնները:

Անցեալ Նոյեմբեր 19ին, «Սապահ» թրքական օրաթերթը տեղեկացուց «Տերսիմի հայերու դաւանանքի եւ փոխօգնութեան միութեան» հիմնադրութեան մասին թուրքիոյ մէջ: Հիմնադրութիւնը Թիւրքիոյ (Տերսիմ) ծնած ու մեծցած հայերու գործն է: Նորակազմ միութեան անդամակցած են 600 ընտանիքներ: Ան կը հետամտի դաւանափոխ եղած հայերը մկրտել, անոնց հայերէն սորվեցնել եւ հայապատկան կալուածները վերանորոգել: Միութեան առաջնորդող ուժն է 50ամեայ Սելահետտին Կիւլթեքինը (այժմ՝ Միհրան Փրկիչ, ըստ թուրք դատարանի որոշման, ու մկրտուած քրիստոնէայ՝ իր ընտանեկան պարագաներուն հետ):

Թէ՛ վերջին տասնամեակին իսլամացած¹ հայերու վեր-յայտնութեան երեւոյթին եւ թէ՛ 1920ական-1930ական թուականներուն թուրք պաշտօնական քաղաքականութեան բացայայտումին պատճառով, Տերսիմը սկսած է ուշադրութեան արժանանալ:

Օսմանեան Կայսրութեան օրերուն, Տերսիմի բնական սահմաններն էին. արեւելքէն՝ Բաղէշ, հիւսիս-արեւելքէն՝ Կարին, արեւմուտքէն՝ Խարբերդ, իսկ հարաւ-արեւմուտքէն՝ Տիգրանակերտ նահանգները: Լեռնային գօտիներով պատսպարուած, շրջանը արտաքին աշխարհէն կտրուած էր: 1914ի տուեալներով, հոն 384 բնակավայր կար, որոնցմէ 37ը հայաբնակ էր, 210՝ քրտաբնակ, իսկ 137ը՝ խառն բնակչութեամբ: Բնակավայրերուն ընդհանուր թիւը 44.262 տուն էր (289.468 հոգի), 12.273 հայկական (110.386 հոգի) եւ 31.989 քիւրտ (179.082 հոգի) տուններով²:

Տերսիմի անցեալին ուսումնասիրութեան մէջ կարելոր վաստակ ունեցած է ստուերի մէջ մնացած դէմք մը՝ Գեորգ Հալաճեանը (1885-1966), որուն ծննդեան 125ամեակը լրացած էր անցեալ տարի: Տեղեկատուական աղբիւրները չեն յիշեր իր անունը, բացառելով Բախտիար Յովակիմեանը, որուն տուեալները շատ կցկտուր են: Ան զայն նկատած է Ի. դարուն Սփիւռքի մէջ ծնած մտաւորական մը՝ Թափառական ծածկանունով (ծածկանունը վկայուած է սփիւռքահայ մամուլէն, առանց մասնաւորելու)³:

Այս տողերով, կենսագրութեան ուրուագիծ մը պիտի փորձենք միայն: Վստահաբար, աւելի մանրամասն



պրպտում մը կրնայ լրացուցիչ տեղեկութիւններ բացայայտել:

Գ. Հալաճեան ծնած է Երզնկայի շրջանի Խնձորիկ գիւղը, որ կը գտնուէր դէպի Կարին (Էրզրում) տանող ճամբուն վրայ: Խնձորիկ ունէր 150 տուն հայութիւն ու շրջապատուած էր 180 քրտական գիւղերով: Ան վկայած է.

«Խնձորիկ նշանաւոր էր որպէս յեղափոխութեան օրրան: Այնտեղ 80-ական թուականներուն Միացեալ Ընկերութիւնը իր ծախքերով հիմնեց իր ուսումնարանը, որու շնորհիւ Խնձորիկի հայութիւնը կուրծք տուաւ համիտեան բռնութիւններուն եւ քաջաբար ծակատեցաւ 180-է աւելի քիւրտ գիւղերու տեւական հալածանքներուն դէմ: Քրտական հոծ զանգուածի մը սրտին վրայ փոքրաթիւ հայ բնակչութեամբ հայ գիւղի մը գոյութիւնը անհանդուրժելի էր թէ՛ տեղական կառավարութեան եւ թէ՛ քիւրտերու համար, մասնաւոր 90-ական թուականներու յեղափոխական շարժումներու շրջանին»⁴:

Դպրոցը աւարտելէ ետք, մեկնած է լեռնաշխարհի

շրջանը՝ ուսուցչութեամբ զբաղելու հայ եւ քիւրտ միջավայրի մէջ: Հայերէն տառերով քրտերէն սորվեցուցած է քիւրտ երեխաներուն: Ան Տերսիմ ապրած է մինչեւ 1914.

«Եղել են որսորդ, աշիւթի անդամ եւ կռուող, մասնակցել են Երզնկայից Կարին շարժուող չորրորդ զօրաբանակից զինամթերք բռնագրաւելուն, թուրք բռնակալութեան զինուորական արշաւանքների դէմ բնիկների մղած մարտերին: Տարիներ շարունակ ապրել եւ քնել են հայերի ու քրդերի յարկի տակ, ծանօթացել նրանց ընտանեկան կառոյցին, սովորոյթներին, աւանդութիւններին, օջախի պաշտամունքին, վրէժնորդութեան, թշնամութեան եւ բարեկամութեան, հիւրասիրութեան, միստ ու կացի անգիր օրէնքներին, տարազին ու բարբառին: Մասնակցել են անասնապահութեան, թշնամութեան եւ բարեկամութեան, հիւրասիրութեան, միստուկացի կալ կամնող, քաղուոր, խուրձ կապող, բարդ դիզող, ապա հերկող, ջրտուք անող եւ, վերջապէս, լեռնաշխարհում ապրող հայերի ու քրդերի հետ ապրել են ուրախութեան եւ տխրութեան օրեր»⁵:

Հալաճեանի ծնողքն ու ընտանիքին մեծ մասը զոհ գացած է Մեծ Եղեռնին: Ան, ըստ թրքական դատարանին իր պնդումներուն, անցած է Պուլկարիա, իսկ Պոլիս հաստատուած է Ջինադադարէն ետք: Շարունակած է կապ պահել Տերսիմի բնակչութեան հետ ու մասնակցած՝ քաղաքական շարժումներու կազմակերպութեան: Ամուսնացած է Վարդուհի անունով կնոջ մը հետ, որմէ ունեցած է աղջիկ մը՝ Նունօ: Յուլիս 1925ին, Հալաճեան ընտանիքը կ'ապրէր Պոլսոյ Մեծ Կղզին, ուր Գ. Հալաճեան զբաղած է առեւտուրով: Հայ լրտեսի մը մատնութեամբ, ան ձերբակալուած է քիւրտերու հետ կասկածելի յարաբերութիւններու մեղադրանքով: Սեպտեմբերին ղրկուած է Տիգրանակերտ ու ապա՝ Խարբերդ, ուր թուրք Անկախութեան Ատեանը զայն դատապարտած է մահուան, որ փոխարինուած է 15 տարուան շրթայակիր բանտարկութեան եւ 101 տարուան բերդարգելութեան դատավճիռով: Այնուհետեւ, փոխադրուած է Սեբաստիոյ Կեդրոնական բանտը: Կինն ու դեռատի աղջիկը (ծնած՝ 1916ին), որ ստիպուած է յաճախել թրքական վարժարան, դժուարին պայմաններու մէջ ապրած են այդ տարիներուն Պոլսոյ մէջ, այժի կաթ ու հաւկիթ ծախելով:

Հալաճեան Սեբաստիոյ բանտին մէջ համեմատաբար տանելի պայմաններ ստեղծած է, որոշ թուրք պաշտօնատարներու բարեացակամութեան ու իր ճարպիկութեան շնորհիւ, նոյնիսկ հաղորդակցելով շրջանը ապրող հայութեան բեկորներուն հետ: Ան Յունիս 1926ին խմբագրած է Հայաստանի կառավարութեան ուղղուած տեղեկագիր մը՝ գաւառներու հայութեան կողմէ, որ ղրկուած է Պոլիս՝ Անդրկովկասի առեւտրական ներկայացուցիչ Դանուշ Շահվերդեանին.

«Առաջին անգամն է, որ գաւառահայութիւնը ուղղակի

եւ հաւաքաբար կը դիմէ Խորհրդային կառավարութեան՝ խնդրելու որ արտօնութիւն տրուի սեփական ծախքերով Հայաստան տեղափոխուելու:

Խնդրագիրը գրուած է ընդհանուր գաւառահայերու անունով եւ ցոյց տրուած են այն անպատեհութիւնները, որ կը ստիպեն զիրենք հեռանալ Թուրքիայէն:

Թէեւ վտանգաւոր էր, բայց հարկադրուած տեղի տուի հայրենակիցներու միահամուռ բաղձանքին եւ հարիւրաւորներու բերանացի եւ գրաւոր թախանձանքներուն զօհացում տալու համար ճարահատ պատրաստեցի չորս էջոց աղերսագիր մը, տալով ճիշդ պատկերը գաւառահայութեան անտանելի կացութեան»⁶:

Պատմութեան համար, կ'արժէ անելցնել, որ Շահվերդեան պատասխանած է Սեպտեմբեր 1926ին, պահանջելով վիճակագրական տեղեկութիւններ գաւառներու մէջ ապրող հայերուն մասին, ընկերային ու աշխատանքային վիճակին եւ քաղաքական համոզումներուն մասին մանրամասնութիւններ: Հալաճեան դիմած է իր բախտակից տերսիմցի աշիւթապետներուն, որոնց աջակցութեամբ կարելի եղած է ամբողջացնել շրջանի հայերու եւ քիւրտերու վիճակագրութիւնը Յուլիս 1927ին: Այնուհետեւ, Պոլսոյ Հայաստանի ներկայացուցիչ Ա. Վանցեանէն ստացած է նամակ մը, ուր հաղորդուած է, թէ 40 սեբաստացի ընտանիքներու ներգաղթը պիտի թոյլատրուի:

Ան նոյնպէս զբաղած է բռնի ամուսնութեան պայմաններու կամ թրքական որբանոցներու մէջ ապրող հայու խլեակներ փախցնելու եւ հայութեան վերադարձնելու աշխատանքով:

Մայիս 1928ին, Հալաճեան պայմանական ներումի արժանացած է 83 բանտարկեալներու շարքին: Այս ներումը թուրք Ազգային ժողովէն նախատեսուած էր երեք ամսուան ժամանակով՝ լեռները ապաստանած քիւրտ փախստականները ձեռք անցընելու նպատակով: Ան յաջողած է գաղտնաբար մեկնիլ Պոլիս, ուրկէ Օգոստոս 1928ին նաւով անցած է Վառնա (Պուլկարիա): Աւելի ուշ, յաջողած է կինն ու աղջիկը իր մօտ տանիլ:

Շատ քիչ բան գիտենք իր արտասահմանեան տարիներուն մասին: Ըստ երեւոյթին, ապրած է Փարիզի եւ Նիւ Եորքի մէջ: 1931ին Թափառական ծածկանունով աշխատակցած է «Հայրենիք» ամսագրին, ուր Տերսիմի հայութեան մասին իր ստորագրած յօդուածը կ'եզրակացներ հետեւեալ խորհմաստ խօսքերով.

«Լաւ պիտի ըլլար, որ մեր մտաւորականները պահ մը ուշադրութիւններ դարձնէին Լոնտոնէն, Փարիզէն, Պոստոնէն դէպի Երկիր, դէպի հայկական գիւղն ու մեր աներակները եւ փոխանակ օտար երկիրներու փառքերէն ներշնչուած բանաստեղծութիւններ գրելու, մեր նոր սերունդին ծանօթացնէին քիւրտն ու թուրքը,



որոնցմէ մէկը արիւնակից, իսկ միւսը թշնամի, կը տիրապետեն մեր երկրին եւ ինչպէս երէկ ու այսօր, նոյնպէս եւ վաղը գործ պիտի ունենան մեզի հետ»⁷:

Յաջորդ տարին, «Հայրենիք»ի տպարանէն լոյս տեսած է Թափառականի «Դէպի կախաղան» հատորը, որ հեղինակին 1924-1928 թուականներու արհաւիրակից կեանքին պատումն է, հիմնուած՝ օրագրային գրառումներու վրայ, որոնք գաղտնաբար ու տեւաբար կատարած է բանտային պայմաններու մէջ: (Անունը պէտք չէ շփոթել «Հայրենիք» ամսագրի աշխատակից, բանաստեղծ Ս. Թափառականի հետ): Գրեթէ 900 էջ հաշուող ու բազմաթիւ հազուագիւտ լուսանկարներով հարուստ այս հատորը անգնահատելի աղբիւր մըն է հայ-քրտական յարաբերութիւններուն, գաւառներու եղեռնի մնացորդացի (նաեւ՝ թրքացած հայերու) ապրած թշուառութեան եւ ժամանակաշրջանի իրավիճակին մասին: Մեծ արժէք ունի «Կեանքը Թրքահայաստանի մէջ» վերնագրուած յաւելումը (էջ 854-876), որ կը ներկայացնէ իւրաքանչիւր շրջանի ամփոփ պատկերը եւ վիճակագրական տուեալները առ 1928: Ըստ հեղինակի Սայիս 1932ին Պոստըն ստորագրած շնորհակալութեան խօսքին, հատորը լոյս տեսած է զանազան յանձնախումբերու բաժանորդագրութեան աշխատանքին ու նաեւ՝ Զ. Յաշնակցութեան Կեդր. Կոմիտէի եւ «Հայրենիք»ի խմբագրութեան ու վարչութեան աջակցութեան շնորհիւ:

Գ. Հալաճեան այնուհետեւ մեկնած է Ամերիկայէն եւ 1930ական կամ 1940ական թուականներուն ներգաղթած՝ Հայաստան: Բանահիւսական իր գիտելիքները պատճառ եղած են, որ այնուհետեւ ընդգրկուի Գիտութիւններու Ակադեմիայի Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկի աշխատակազմին մէջ: Հոն շարադրած է «Դերսիմի ազգագրութիւնը» հսկայածաւալ աշխատութիւնը (յառաջաբանը արեւելահայերէն գրած ու թուագրած է Օգոստոս 1, 1955), զոր հայրենի բանահաւաք Արամ Ղանալանեան (1909-1983) որակած է «հանրագիտարան» մակդիրով: Թաղման առիթով խօսուած դամբանականին մէջ մշուած է.

«Դերսիմի մասին նա գրեց՝ աւելի քան հարիւր քսան մամուլ աշխատութիւն, ուր նա բազմազան ու հաստատուն փաստերով ապացուցում է, որ այնտեղի ողջ բնակչութիւնն իր կենցաղով, անցեալից մնացած բազմաթիւ յիշատակարաններով, ձեռագիր մատեաններով, աղօթատեղիներով եւ մշակութային այլ գործօններով հայ է: Նրա այդ ձեռագիր աշխատութեան վրայ մի շարք ասպիրանտներ դիսերտացիաներ են պաշտպանել եւ շարունակում են պաշտպանել: Նա գիտութեամբ չէր զբաղւում, բայց 75 տարեկան հասակում գիտական այնպիսի գործ կատարեց որին չեն կարող հասնել 25 տարեկան հասակից գիտութեամբ զբաղուող շատ ու շատ գիտնականներ»:



Յետմահու, 1973ին, աշխատութեան առաջին մասը (301 էջ) լոյս տեսած է Ակադեմիայի «Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն» շարքին մէջ, ազգագրագետ Դերենիկ Վարդումեանի խմբագրութեամբ: Այս մեծարժէք գործը չորս բաժին ունի՝ տեղագրութիւն, տնտեսական զբաղումներ (դաշտամշակութիւն, անասնապահութիւն, որսորդութիւն, ձկնորսութիւն, տնայնագործութիւն եւ արհեստներ, հաղորդակցութեան միջոցներ, փոխանակութիւն եւ առետուր, հաշիւ եւ չափեր), նիւթական մշակոյթ (բնակավայր, շէնքեր, զգեստ եւ զարդարանք, կերակուր եւ խմիչք), եւ ավանդապատումներ:

Աշխատութեան միւս երկու՝ բանահիւսական եւ պատմական մասերը, անտիպ մնացած են եւ հաւանաբար Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկի արխիւներուն մէջ կը մնան: Մաղթելի է, որ Տերսիմի շուրջ բարձրացող հետաքրքրութիւնը անոնց հրատարակութեան ձեռնարկելու առիթը ընծայէ:

Գեղոյ Հալաճեան մահացած է Օգոստոս 1966ին, 81 տարեկան հասակին: Թաղուած է Ծաղկաձորի մէջ: Իր կեանքին նուիրուած թուօցիկ այս ակնարկը գրելու միտքը ծագեցաւ վերջերս, երբ Ազգային Առաջնորդարանի (Նիւ Եորք) գրադարանին մէջ հանդիպեցանք անոր վերաբերող երկու փաստաթուղթերու: Այլ նիւթերու շարքին, զանոնք գրադարանին յանձնած էր

«Հայրենիք»ի երբեմնի խմբագրութեան անդամ ու աշխատակից, հանրային գործիչ Յակոբ Խաչմանեանի (Պարտիզակ, 1887 - Նիւ Եորք, 1968) դուստրը՝ հանգուցեալ Արփինէ Խաչմանեանը: Անհնարին է, ի հարկէ, ճշդել, թէ ի՞նչ պայմաններու տակ այս փաստաթուղթերը Հայաստանէն Նիւ Եորք հասած են: Զանոնք նոյնութեամբ կը հրատարակենք, ուղղագրութիւնը փոխել է եւ աննշան հպումներ ընել է ետք:

Առաջինը՝ Ա. Ղանալանեանէն մեքենագիր դիմումի մը պատճէնն է, ուղղուած՝ Ակադեմիայի Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկի տնօրէն Բաբգէն Առաքելեանին, ուր ան ջերմօրէն կը յանձնարարէ «Դերսիմի ազգագրութիւնը»ի հրատարակութիւնը: (Տպագրական որոշ նշումներու գոյութենէն դատելով, հաւանական է, որ այս դիմումը լոյս տեսած ըլլայ մամուլին մէջ – «Հայրենիք» –, թերեւ՝ Հալաճեանի մահուան առիթով): Երկրորդը՝ Հալաճեանի թաղման առիթով կարդացուած դամբանական մըն է: Նոյնպէս մեքենագիր այս օրինակը բնագրային է, սակայն ստորագրութիւն չունի. այսուհանդերձ, կարելի է զայն վերագրել Ա. Ղանալանեանին, դատելով Հալաճեանի աշխատանքին վերաբերող ծանօթութիւններէն: Հետաքրքրական է նշմարել, որ դամբանականը համեմատաբար արեւի ազատութեամբ կ'ակնարկէ Հալաճեանի քաղաքական գործունէութեան, որուն մանրամասն-

ութիւններուն ծանօթանալու համար հարկ է կարդալ աւելի քան 75 տարի առաջ հրատարակուած յուշագրութիւնը՝ «Դէպի կախաղան»ը:

Նիւ Ծըրզի

Ա.

Հայաստանի Ակադեմիայի Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի դիրեկտոր դոկտոր-պրոֆեսոր
Բ. Ն. Առաքելեանին

Ինստիտուտիդ ազգագրական բաժնի արխիւի նիւթերն ուսումնասիրելիս ես վերջերս առիթ ունեցայ ծանօթանալու այդ արխիւում գտնուող մի մեծածաւալ աշխատութեան, որը եւ դրդեց ինձ գրելու այս խնդրի միջնորդութիւնը:

Խօսքս Գ. Հալաջեանի «Դերսիմի ազգագրութիւնը» գործի մասին է: Ազգագրութիւն բառը նեղ է տուեալ աշխատութեան ողջ բովանդակութիւնն արտայայտելու համար: Աւելի ճիշդ կը լինէր գրել «Դերսիմի հանրագիտարանը», քանի որ ազգագրական հարուստ նիւթերի հետ այստեղ կան նաեւ շատ արժէքաւոր տուեալներ Դերսիմի պատմութեան, բանահիւսութեան, իրեն՝ հեղինակի եւ ուրիշ նշանաւոր դերսիմցիների կեանքի մանկավարժական, հասարակական գործունէութեան եւ այլն: Աշխատութեան համար հիմնական աղբիւր է հանդիսացել հեղինակի տեսածն ու ապրածը, լսածն ու իմացածը: Լինելով բնիկ դերսիմցի եւ ունենալով հիանալի յիշողութիւն, Հալաջեանը կարողացել է յաջողութեամբ ու հարազատութեամբ վերարտադրել հայրենի բնաշխարհի ու նրա մարդկանց կեանքի, կենցաղի նիստ ու կացի, հաւատալիքների, բառ ու բանի ամբողջական պատկերը: Իբրեւ օժանդակ աղբիւր նա օգտագործել է նաեւ Դերսիմի վերաբերեալ առկայ հայ եւ այլ ազգերի ողջ գրականութիւնը, այդպիսով առաւել սպառնիչ դարձնելով իր աշխատութիւնը:

Հալաջեանի գործն աչքի է ընկնում ո՛չ միայն ազգագրական, պատմական, բանասիրական մեծ արժէքներ կայացնող հարուստ նիւթերով, այլեւ գրական պատշաճ մակարդակով, կանոնաւոր շարադրանքով, որոշակի կառուցուածքով, նիւթի մատուցման գիտական եղանակով, իր կատարած աշխատանքի կարեւորութեան մասին հեղինակի ունեցած յստակ գիտակցութեամբ ու այլ բարեմասնութիւններով:

Տուեալ աշխատութեան նշանակութիւնն անուրանալի է ոչ միայն ազգագրագէտի, այլեւ բանագէտների, պատմաբանների, հնագէտների եւ այլոց համար: Ահա թէ ինչու ինքնաբերաբար ծանօթանալով այդ աշխատութեանը, ես պարտք համարեցի դիմելու Ձեզ իբրեւ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի տնօրէնի եւ հայ մշակոյթի բարեկամի, խնդրելով միջնորդել, որպէսզի Դուք յառաջիկայ տարուայ հրատարակչական ծրագիրը կազմելիս՝ նախատեսնէք նաեւ այդ գործը: Տպագրութիւնը հեշտացնելու համար

այն կարելի է բաժանել երեք մասի. նախ ներկայացնել «Դերսիմի ազգագրութիւնը», ապա «Դերսիմի հայ եւ քուրդ բանահիւսութիւնը» եւ ի վերջոյ, «Դերսիմի պատմութիւնը»:

ԱՐԱՍ ՂԱՆԱԼԱՆԵԱՆ
15-3-1966 թ.
Երեւան

Բ.

Թանկագին բարեկամներ, սիրելի յուղարկաւորողներ, Այսօր Ծաղկանց լեռների զովացուցիչ գրկում, հայրենի սուրբ հողին ենք յանձնում Գեորգ Հալաջեանի վաստակած ու մահկանացու նշխարները: Նշխարներ, որոնք մահկանացու լինելով, իրենց մէջ 80 տարի շարունակ կրում էին մի անհանգիստ հոգի, մի վեհ ու փոթորկուն շունչ, որ 80 տարի տրոփեց հայութեան արդար դատին, նրա բռնաբարուած իրաւունքներին, թուրքի կողմից զաւթուած նրա դրախտային հայրենիքի ազատագրութեան համար:

Գեորգ Հալաջեանի անմահ հոգին՝ թողնելով այս թանկագին մասունքները, թռաւ խառնուելու հազարաւոր ու տասնեակ հազարաւոր մեծ հոգիների աստղաբոյլին: Հերոսներ, որոնք զրկուելով սիրասուն զաւակներից, հայրենի օջախից, սիրած աղջկանից, փարթամ ու հանգիստ կեանքից, ամէն փափկութիւն ու բարիքներից, գնում էին հայրենի լեռները՝ ճակատելու հին արիւնարբու ոսոխի դէմ, որ խլում էր հայի եզն ու զութանը, նոր բացուած ակօսի մէջ սպանում էր նրան կամ արատում նրա պատիւն ու օջախը:

Նրանք բոլորն ընկել են հերոսաբար, այլեւս չկան նրանք: Գեորգ Հալաջեանը նրանց վերջին մոհիկանն էր եւ իբրեւ անցեալի կենդանի յուշ, շրջում էր մեր մէջ մասունքի նման:

Այժմ, երբ նա այլեւս չկայ, նրա անմահ հոգին սաւառնում է Երզնկայի, Ալաշկերտի, Մշոյ ու Սասունի հայաթափուր լեռների ու դաշտերի վրայ, որոնց ազատագրութեան համար նա կռուեց նոյնիսկ այն ժամանակ, երբ բոլորը լքուել, վիատուել, պարտուել էին եւ ամէն ինչ կորած էր համարուում:

Գեորգը ոչ մի վայրկեան չհաշտուեց լքման, յուսահատութեան, պարտութեան մտքի հետ: Նա մի անմիջ, անդրդում, անպարտելի ու անուրաճ էութիւն էր եւ այդպիսին էլ մնաց մինչեւ դադարեց բաբախելուց՝ նրա խոնջած սիրտը:

Այսօր, երբ նա հանգիստ պառկած է դազադում, ես Արաքսի այս կողմի մի հայ մարդ, որ ամենից լաւ եմ ճանաչում նրան, շուարանքով ու զարմանքով եմ բռնուած, թէ ինչպե՞ս պարտուեց նա:

Ուղիղ հինգ տարի առաջ նա գօտեմարտի բռնուեց մահուան հետ եւ զգետնեց նրան. մահը պարտուեց նրա կամքի ու հաւատի անսասանութեան առջեւ, իսկ հաւատով, յոյսով, լաւատեսութեամբ, ոսկի երազներով ապրող ու շէնշող այս ազնիւ, այս պայծառ ու սիրուած

ութիւններուն ծանօթանալու համար հարկ է կարդալ աւելի քան 75 տարի առաջ հրատարակուած յուշագրութիւնը՝ «Դէպի կախաղան»ը:

Նիւ Ծըրզի

Ա.

Հայաստանի Ակադեմիայի Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի դիրեկտոր դոկտոր-պրոֆեսոր
Բ. Ն. Առաքելեանին

Ինստիտուտիդ ազգագրական բաժնի արխիւի նիւթերն ուսումնասիրելիս ես վերջերս առիթ ունեցայ ծանօթանալու այդ արխիւում գտնուող մի մեծածաւալ աշխատութեան, որը եւ դրդեց ինձ գրելու այս խնդրի միջնորդութիւնը:

Խօսքս Գ. Հալաջեանի «Դերսիմի ազգագրութիւնը» գործի մասին է: Ազգագրութիւն բառը նեղ է տուեալ աշխատութեան ողջ բովանդակութիւնն արտայայտելու համար: Աւելի ճիշդ կը լինէր գրել «Դերսիմի հանրագիտարանը», քանի որ ազգագրական հարուստ նիւթերի հետ այստեղ կան նաեւ շատ արժէքաւոր տուեալներ Դերսիմի պատմութեան, բանահիւսութեան, իրեն՝ հեղինակի եւ ուրիշ նշանաւոր դերսիմցիների կեանքի մանկավարժական, հասարակական գործունէութեան եւ այլն: Աշխատութեան համար հիմնական աղբիւր է հանդիսացել հեղինակի տեսածն ու ապրածը, լսածն ու իմացածը: Լինելով բնիկ դերսիմցի եւ ունենալով հիանալի յիշողութիւն, Հալաջեանը կարողացել է յաջողութեամբ ու հարազատութեամբ վերարտադրել հայրենի բնաշխարհի ու նրա մարդկանց կեանքի, կենցաղի նիստ ու կացի, հաւատալիքների, բառ ու բանի ամբողջական պատկերը: Իբրեւ օժանդակ աղբիւր նա օգտագործել է նաեւ Դերսիմի վերաբերեալ առկայ հայ եւ այլ ազգերի ողջ գրականութիւնը, այդպիսով առաւել սպառնիչ դարձնելով իր աշխատութիւնը:

Հալաջեանի գործն աչքի է ընկնում ո՛չ միայն ազգագրական, պատմական, բանասիրական մեծ արժէքներկայացնող հարուստ նիւթերով, այլեւ գրական պատշաճ մակարդակով, կանոնաւոր շարադրանքով, որոշակի կառուցուածքով, նիւթի մատուցման գիտական եղանակով, իր կատարած աշխատանքի կարեւորութեան մասին հեղինակի ունեցած յստակ գիտակցութեամբ ու այլ բարեմասնութիւններով:

Տուեալ աշխատութեան նշանակութիւնն անուրանալի է ոչ միայն ազգագրագէտի, այլեւ բանագէտների, պատմաբանների, հնագէտների եւ այլոց համար: Ահա թէ ինչու ինքնաբերաբար ծանօթանալով այդ աշխատութեանը, ես պարտք համարեցի դիմելու Ձեզ իբրեւ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի տնօրէնի եւ հայ մշակոյթի բարեկամի, խնդրելով միջնորդել, որպէսզի Դուք յառաջիկայ տարուայ հրատարակչական ծրագիրը կազմելիս՝ նախատեսնէք նաեւ այդ գործը: Տպագրութիւնը հեշտացնելու համար

այն կարելի է բաժանել երեք մասի. նախ ներկայացնել «Դերսիմի ազգագրութիւնը», ապա «Դերսիմի հայ եւ քուրդ բանահիւսութիւնը» եւ ի վերջոյ, «Դերսիմի պատմութիւնը»:

ԱՐԱՍ ՂԱՆԱԼԱՆԵԱՆ
15-3-1966 թ.
Երեւան

Բ.

Թանկագին բարեկամներ, սիրելի յուղարկաւորողներ, Այսօր Ծաղկանց լեռների զովացուցիչ գրկում, հայրենի սուրբ հողին ենք յանձնում Գեորգ Հալաջեանի վաստակած ու մահկանացու նշխարները: Նշխարներ, որոնք մահկանացու լինելով, իրենց մէջ 80 տարի շարունակ կրում էին մի անհանգիստ հոգի, մի վեհ ու փոթորկուն շունչ, որ 80 տարի տրոփեց հայութեան արդար դատին, նրա բռնաբարուած իրաւունքներին, թուրքի կողմից զաւթուած նրա դրախտային հայրենիքի ազատագրութեան համար:

Գեորգ Հալաջեանի անմահ հոգին՝ թողնելով այս թանկագին մասունքները, թռաւ խառնուելու հազարաւոր ու տասնեակ հազարաւոր մեծ հոգիների աստղաբոյլին: Հերոսներ, որոնք գրկուելով սիրասուն զաւակներից, հայրենի օջախից, սիրած աղջկանից, փարթամ ու հանգիստ կեանքից, ամէն փափկութիւն ու բարիքներից, գնում էին հայրենի լեռները՝ ճակատելու հին արիւնարբու ոսոխի դէմ, որ խլում էր հայի եզն ու զութանը, նոր բացուած ակօսի մէջ սպանում էր նրան կամ արատում նրա պատիւն ու օջախը:

Նրանք բոլորն ընկել են հերոսաբար, այլեւս չկան նրանք: Գեորգ Հալաջեանը նրանց վերջին մոհիկանն էր եւ իբրեւ անցեալի կենդանի յուշ, շրջում էր մեր մէջ մասունքի նման:

Այժմ, երբ նա այլեւս չկայ, նրա անմահ հոգին սաւառնում է Երզնկայի, Ալաշկերտի, Մշոյ ու Սասունի հայաթափուր լեռների ու դաշտերի վրայ, որոնց ազատագրութեան համար նա կռուեց նոյնիսկ այն ժամանակ, երբ բոլորը լքուել, վիատուել, պարտուել էին եւ ամէն ինչ կորած էր համարուում:

Գեորգը ոչ մի վայրկեան չհաշտուեց լքման, յուսահատութեան, պարտութեան մտքի հետ: Նա մի անմիջ, անդրդում, անպարտելի ու անուճ ինքն էր եւ այդպիսին էլ մնաց մինչեւ դադարեց բաբախելուց՝ նրա խոնջած սիրտը:

Այսօր, երբ նա հանգիստ պառկած է դազադում, ես Արաքսի այս կողմի մի հայ մարդ, որ ամենից լաւ եմ ճանաչում նրան, շուարանքով ու զարմանքով եմ բռնուած, թէ ինչպե՞ս պարտուեց նա:

Ուղիղ հինգ տարի առաջ նա գօտեմարտի բռնուեց մահուան հետ եւ զգետնեց նրան. մահը պարտուեց նրա կամքի ու հաւատի անսասանութեան առջեւ, իսկ հաւատով, յոյսով, լաւատեսութեամբ, ոսկի երազներով ապրող ու շէնշող այս ազնիւ, այս պայծառ ու սիրուած



մարդը յաղթական ոտքի կանգնեց:

Յիշում եմ 1961 թուականին, յուլիսեան մի շոգ օր, մահամերձ, շնչահեղձ գամուած էր հիւանդանոցի մահճակալին եւ բժիշկները նրա հաշիւները մաքրած էին համարել այս աշխարհի հետ: Երբ ես այցելեցի վերջին շնչին հասնելու, նա այլեւս չէր խօսում: Տեսաւ ինձ, երանական մի գուարթութեամբ փառաւորուեց դէմքը, գրկեց ու հոգուց եկող մի անծայն հեւքով հասկացրեց, թէ մի՛ վախենայ, չեմ մեռնի: Մենք միասին պէտք է Արեւմտահայաստան գնանք: Բայց աւաղ, այս անգամ չկարողացայ նրա վերջին շնչին հասնել, նրա վերջին խրախոյսը լսել: Պարտուեց նրա մարմինը, սակայն նրա հոգուն չկայ պարտութիւն:

Երբ անյաջողութիւններից յուսահատ, տխուր, նեղսրտւած գնում էր նրան տեսութեան, դրանից յետոյ՝ օրեր բարձր տրամադրութեամբ ոգեւորուած աշխատում էի: Յաճախ միտք էի անում, թէ ի՞նչից է այս, եւ յիշում էի, որ տեսել եմ Գէորգ Յալաջեանին, նրա յուսատու եւ հոգեբուխ խօսքերն եմ լսել:

Գէորգ Յալաջեանը մի մեծ ու աննուաճ հոգի էր: 20 թուականից յետոյ, երբ հին ոսոխն ամբողջ Արեւմտահայաստանը հրի ու սրի ճարակ էր դարձրել, երբ այլեւս ոչ մի հայր չկար մեր դրախտային հայրենիքում, երբ թուրքը բորենու հրճուանքով տօնում էր իր յաղթանակը եւ բոլորը քաշուել էին ասպարեզից, նետել էին փրկարար զէնքը, Գէորգ

Յալաջեանը մեն-մենակ նետուել էր կռուի ասպարեզ, կազմակերպում էր քրդական շարժումներ, հերոսական սխրանքներով թուրքական հարեմներից փախցնում էր հայ կանանց, որոնում ու գտնում էր մայրենի խօսքը մոռացած հայ պատանիներ ու մանուկներ եւ ազատում էր թուրքի անարգ գերութիւնից:

Նա բռնուեց, դատապարտուեց կախաղանի, բայց նրա հերոսական խառնուածքը, մարդկանց գրաւելու նրա բնատուր շնորհքը, խիզախութիւնը փրկեցին նրան:

Իմ թանկագին հայրենակիցներ, մենք այսօր թաղում ենք մի մեծ հայրենասէր մարդու, մի մարդ, որ մի բուն հայ հողը ամբողջ մի այլ աշխարհի հետ չէր փոխի:

Նա եկաւ արտասահմանից, ուր թողել էր փարթան կեանք, լիութիւն: Թող գաղտնիք չլինի, նա այստեղ կրեց տնտեսական ծանր նեղութիւններ, անյաջողութիւններ, բայց մի վայրկեան շյուսահատուեց, ոչ մի վայրկեան Նիւ-Եորքն ու Փարիզը, ուր նա եղել էր՝ նա լաւ չհամարեց Ծաղկածորի այս երկու մետր հողից, ուր ամփոփում ենք նրա մասունքները:

Փառք ու երանութիւն նրան, որ թափառեց աշխարհէ աշխարհ, կոշուեց թափառական, բայց այսօր պէտք է հանգչի հայրենի հողի տակ:

Յիշում եմ նրա սպանիչ ծաղրը, այն դատարկ ու փուչ

մարդկանց հանդեպ, որոնք արտասահմանում փրփուրը բերաններին կոկորդ էին պատռում, հայրենասիրական ճառեր ասելով, սակայն այսօր վատի նման լքում են այս հողն ու հեռանում:

Հալաջեանի հայրենասիրութիւնը արեան աւիշի, հոգու հայրենասիրութիւն էր: Նա հաւատում էր հայութեան պայծառ ապագային եւ ապրում նրա շինարար ոգիով, նրա բարձր մշակոյթով, նրա ամենաչնչին յաջողութեամբ, նրա զարգացման հեռանկարներով եւ իր այդ վեհ ապրումը ներարկում էր իր շրջապատին: Նա ոգեւորում էր իր հետ զրուցողներին եւ նրանց էլ դարձնում իր նման ոգեշունչ եւ իր նման հաւատաւոր: Նա արդար ու նախանձելի, հաւատաւոր մի մարդ էր, որ եկաւ այս աշխարհը, տառապեց, բայց չիմացաւ ի՞նչ բան է տառապանքը: Խաւարի մէջ ընկաւ, բայց միայն լոյս տեսաւ, կորցրեց իր պաշտելի հայրենիքը, բայց ոչ մի անգամ կորած չհամարեց այն: Ամենամայրուսալի վայրկեանին յուսոյ շողերով ողողեց իր մեծ ու անվախճան հոգին, մահուան իսկ պահին միայն կեանքին հաւատաց ու նրա մէջ իսկ միայն կեանքը տեսաւ – հայերի լուսաւոր ու պայծառ ապագայ կեանքը, որը նրա երազանքը եղաւ 80 տարի:

Նա անձնական կեանք չունեցաւ, բոցավառուեց, որպէսզի ուրիշները լուսաւորուեն, որպէսզի այդ բոցից հայի հոգու սեւ մռայլը փարատուի: Յեղափոխականի հզօր կրքով ատում էր ամէն բռնութիւն, բայց անյազ վրեժով էր լցուած թրքական անարգ բռնատիրութեան հետ: Նրա հետ զրուցողը կը կարծէր, որ նա աշխարհ տեսած ու շրջած բազմափորձ մի մարդ էր, յեղափոխականի վեհ խառնուածքով, եւ նա իրօք այդպիսին էր: Բայց երբ ընդունուեց Ակադեմիայի աշխատակից, ան փայլեց իբրեւ Դերսիմի կեանքի, կենցաղի, ազգագրութեան, պատմութեան, մշակութային անցեալի մի անզուգական ուսումնասիրող:

Հայաստանի քարն ու թուփը լաւ իմացող մի մասնագէտ-գիտնական, մինչդէռ նրան աշխատանքի ընդունողները կարծում էին, թէ միայն ձեւի համար պէտք էր տեղաւորել, որպէսզի սոսկ աշխատավարձ ստանար:

Դերսիմի մասին նա գրեց՝ անելի քան հարիւր քսան մամուլ աշխատութիւն, ուր նա բազմազան ու հաստատուն փաստերով ապացուցում է, որ այնտեղի ողջ բնակչութիւնն իր կենցաղով, անցեալից մնացած բազմաթիւ յիշատակարաններով, ձեռագիր մատենաներով, աղօթատեղիներով եւ մշակութային այլ գործօճներով հայ է: Նրա այդ ձեռագիր աշխատութեան վրայ մի շարք ասպիրանտներ դիտարկեցին եւ պաշտպանել եւ շարունակում են պաշտպանել: Նա գիտութեամբ չէր զբաղւում, բայց 75 տարեկան հասակում գիտական այնպիսի գործ կատարեց որին չեն կարող հասնել 25 տարեկան հասակից գիտու-

թեամբ զբաղւող շատ ու շատ գիտնականներ:

Արդար, բարի ու ազնիւ հոգի էր Գեորգ Հալաջեանը: Նրա ընտանիքը կորցրեց իր օջախի առաքելատիպ նահապետին, իսկ մենք, նրա բարեկամներս՝ մեր անկրկնելի հաւատաւորին, մեր սփողող ու ոգեշունչ սիրելի մարդուն: Մի մարդ, որուն բարի աստուածութիւնը ստեղծել էր անձնուրացութեան, մարդասիրութեան, լքուածներին յոյս ու մխիթարութիւն ոգեշնչելու համար:

Հայը սովոր է ննջեցեալի ոգուն հանգստութիւն մաղթելու, բայց ես հանգիստ եմ ասում իմ թանկագին բարեկամի վաստակած նշխարներին, իսկ նրա աննինջ հոգին թող սաւառնի այն ավերի հայաթափուր հայրենիքի վրայ, մինչեւ որ մեր ազատ դաշտերում կը հնչի հայի զուբաներգը, մինչեւ որ մարած օջախներից խնկի նման երկինք կը համբառնայ շէնութեան ծուխը, մինչեւ որ մեր աներակ վանքերում ու սրբավայրերում առ Աստուած կը բարձրանայ հայի խնկաբոյր պատարագը:

Այն ժամանակ Գեորգ Հալաջեանի հոգին կը հանգստանայ, դառնալով հովանաւորող, բարի հրեշտակ:

Թող պայծառ լինի այս մեծ մարդու բարի յիշատակը, եւ այստեղ եկող ամէն մի հայ թող իմանայ, որ հայրենի լերան կրծքին, անտառի փէշի մօտ այս շիրիմն իր մէջ ամփոփում է մի վեհ հաւատաւորի ազնիւ ու մեծ սիրտ:

Անցորդ, մի պահ դադար առ, այստեղ հերոս է հանգչում:
15-8-1966 թ.
Օտաղկածոր

- 1- Հակառակ երբեմն հնչող ոչ-հիմնաւոր առարկութիւններու, ճիշդ բառը «իսլամացած» է եւ ո՛չ թէ «թրքացած», քանի որ կրօնափոխութիւնը օտարացման պատճառ եղած է եւ ո՛չ թէ հակառակը: Այլապէս՝ քիւրտ կամ այլ, ոչ-թրքական ինքնութիւն որդեգրած հայերը կարելի չէ «թրքացած» կոչել:
- 2- Գեորգ Հալաջեան, «Դերսիմի հայերի ազգագրութիւնը. Ա. մաս», Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, միւթեր եւ ուսումնասիրութիւններ, պրակ 5, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1973, էջ 100:
- 3- Բախտիար Յովակիմեան, Հայոց ծածկանունների բառարան, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի հրատարակչութիւն, 2005, էջ 170, 635: Ծանոթան ու մահուան թուականները նշուած են 1973ի հատորին մէջ հրատարակուած լուսանկարին ներքեւ: 1925ին, թուրք ոստիկանութենէն, ձերբակալուելէ ետք, Հալաջեան յայտնած էր, թէ ինք 32 տարեկան էր (Թափառական, Դէպի կախաղան, Պոստըն, 1932, էջ 38):
- 4- Անդ, էջ 21:
- 5- Հալաջեան, «Դերսիմի հայերի ազգագրութիւնը», էջ 7:
- 6- Թափառական, Դէպի կախաղան, էջ 514-525:
- 7- Թափառական, «Կիսանկախ Տերսիմի հայկական ծագումը (փաստեր պատմութեան համար)», Հայրենիք ամսագիր, Գոկտեմբեր 1931, էջ 152:

ՀԱՄՇԵՆԱԳԱՅԵՐԸ ԵՒ ԵՂԵՌՆԸ

ԱՒԵՏԻՍ ՀԱՃԵԱՆ


Նիւ Եորք - Ա.Ա.Ն.

Անցեալ տարի, Ապրիլ 24-ին, խումբ մը թրքաբնակ համշէնցիներ, գլխաւորութեամբ Երաժիշտ Հիքմէթ Աքչիչէքի, գրող Մահիր Եօզկանի, համալսարանական Նեժտէթ Չաքմաքի եւ ուրիշներու, Պոլսոյ մէջ նշեցին հրապարակաւ Մեծ Եղեռնի 95-ամեակը: Յատկանշական է, որ թրքաբնակ համշէնցիներու մեծամասնութիւնը սերունդներ առաջ, մեծ մասամբ բռնիաբար իսլամացուած են եւ, կրօնափոխութեան հետեւանքով, իրենց ակունքներէն հեռացած են, կամ ալ մնացեալ հայերս այնպէս կը մտածէինք: Փաստօրէն, այնպէս չէ: Սակայն թաքուն կերպով, ողջ պահած են իրենց ինքնութիւնը, եւ զգալի մեծամասնութիւն մը՝ նաեւ լեզուն – համշէնահայերէնը, թերեւս խօսակցական հայերէնի ամենահին բարբառը, որ տակաւին գործածական է:

Վերջին տարիներուս, համացանցի եւ մանաւանդ ընկերային կայքէջերու ստեղծած հնարաւորութիւններու շնորհիւ ինչպէս, «Դիմագիրք» (Facebook), Թուրքիոյ կամ բռնագրաւուած Արեւմտեան Հայաստանի տարածքի հեռաւոր գիւղերու մէջ բնակող համշէնցիներ շփում ունին այլուր բնակող հայերու հետ եւ իրենց յուզող հարցերու եւ հարցումներու պատասխանները կրցած են որոնել, եւ յաճախ գտնել, հայկական աղբիւրներու մէջ: Նաեւ, թէն կարելի չէ ներկայ Թուրքիոյ վարչակարգը հայանպաստ համարել, յայտնիօրէն վախի մթնոլորտը նուազած է, ինչ որ կարելիութիւնը ստեղծած է, որ երթալէն մեծ թիւով համշէնահայեր բացէ ի բաց կապեր մշակեն հայրենաբնակ եւ օտարաբնակ հայերու հետ:

Լիբանահայ լրագրող Համօ Մոսկոֆեան յայտնաբերած է պատմաբան եւ հոգեբան Ալիս Ալիյէ Ալթի պարագան, բնիկ Ռիզէի համշէնահայ եւ հարազատ նախկին թուրք վարչապետ Մեսուտ Եըլմազի: Ալթ, որ 1960-ականներուն Գերմանիա փոխադրուեցաւ, իր հայկական արմատները վերայայտնեց – իր ընտանիքը երբեք չէր հերքած ինքնութիւնը – մեր Եկեղեցւոյ վերադարձաւ մկրտութեամբ եւ զաւակները, Տէնիզ եւ Եասմին, հայ մեծցուց: Տէնիզ Ալթը այժմ Գերմանիա յայտնի նկարիչ է եւ անցեալ տարի Եղեռնի 95-րդ ամեակին ցուցահանդէս մը նուիրեց:

Հարկ է հարց տալ, թէ համշէնահայերը ի՞նչպէս ինքնութիւննին պահպանեցին: Մէկ կողմէն, եւ թերեւս գլխաւորաբար, իրենց փրկեց աշխարհագրական



դիրքը: Իսլամականացումէն վերջ, նեղութեան կարելուր ազդակ մը նուազեցաւ: Այս իրենց մէջ ընդհանրացած կարծիք մըն է: Օսմանեան Կայսրութեան տարածքը միայն հորիզոնական չէր այլ նաեւ ուղղահայեաց, եւ 2,000 մեթր (այսինքն՝ 6,500 ոտաչափէ) բարձրութենէ վեր Օսմանեան պետութեան հեղինակութիւնը շեշտուած կերպով կը տկարանար կամ ուղղակի կը դադրէր: Համշէնի գիւղերուն մեծ մասը եւ եայլաները (հովուական կամ արածեցումի դաշտերը) անյաղթահարելի են: Ճանապարհները կը փակուին Սեպտեմբերէ կամ Յոկտեմբերէ մինչեւ Մարտ կամ Մայիսիս Ապրիլ, եւ այնտեղ, ամպերով ծածկուած բարձր լեռներու լանջերուն վրայ կամ գագաթներուն մօտ, Օսմանեան իշխանութեան երկար թելը հազիւ թէ հասներ:

Նաեւ կայ բռնութեան յիշատակը, ինչ որ իր կարգին կ'ամրացնէ իրենց ինքնութեան գիտութիւնը: Երկու դրուաք պիտի յիշեմ՝

Յովակիմ Խուշբուլեան, փախստական ջարդերէ, Ազիզ անունով թրքախօս համշէնցիի մը տունը կեցաւ 1923-ին: Ազիզի ընտանիքը ընդհանրապէս թրքերէն կը խօսէր բայց քանի մը բառ հայերէն կը գործածէր: Բացառութիւնը 90 տարեկան Ազիզի մայրն էր՝, «Մեղքի մէջ կորսուած ենք», կ'ըսէր կրօնափոխութեան ակնարկելով, Յիսուսի եւ Մարիամ Աստուածածնու պատ-



կեր կը պահեր, քրիստոնեական աղօթքներ գիտեր եւ խաչի նշանը կ'ընէր: Միւրմէնէի հայ քահանան խնձորի մէջ թաքնուած միւռոն կը դրկէր մինչեւ 1914, Առաջին Համաշխարհային Պատերազմի սկիզբը, հայ իսլամացած կիներուն: Միսաք Թռչաքեան, 1916-ին տարեց համշէնահայու մը տունը կ'իջնայ: «Առաջին հայն էի որ իր տունը գացած էր»: Սուրբ Գիրք կը պահէր եւ գիտէր կրօնական երգեր, եւ կիմը խաչ կը պահէր բարձիմ տակ ամէն գիշեր:

Վերջը, 1940-ականներուն ՕՖ գաւառի պատմաբան մը այցելեց Պոնտոսի շրջանը եւ ապշած լսեց, որ գիւղերու մէջ հայերէն կը խօսէին: Մարդ մը ըսաւ. «Փորձեցին ասկէ ազատիլ, բայց ձախողեցան»:

Սուրբ Ստեփանոսի եւ Պերլիմի դաշնագիրներու ստորագրութեամբ, 1878-ի Ռուս-Թրքական պատերազմէն վերջ, 200 հոսպայի համշէնցի ընտանիքներ Մաքրիալի կողմերուն անցան մաս կազմելու Ռուսական Կայսրութեան: Առաջին անգամ ըլլալով Օսմանեան ներխուժումէն ի վեր 1480-ին, խումբ մը համշէնահայեր իրենք զիրենց գտան քրիստոնեական իշխանութեան մը մէջ: Սակայն, հոսպայի հեմշինլիները իսլամ մնացին:

Ուրիշ իսլամացուած հայեր, զոր օրինակ Օրտլուի բնակիչները, դիմեցին Կարսի եպիսկոպոսին 1880-ին, որ մկրտուին եւ վերընդունուին հայկական եկեղեցւոյ ծիրէն ներս: Պատուիրակութիւն մը դրկեցին Կարս հայկական ձեռագիրներով եւ Սուրբ Գիրքով, իրենց հաւատարմութիւնը քրիստոնեական փաստելու համար:

Տարբերութիւնը՝ կրօնափոխութեան թուականն էր: Օրտլու, Արտեմեակ մօտ 50-70 տարի Ռուսական ներխուժումէն առաջ իսլամացուած էր: Խոպայի իսլամները, որ դարեր առաջ իսլամացուած էին, իրենց կրօնքին հաւատարիմ մնացին:

Հայկական եկեղեցին ալ քիչ ըրաւ սիրաշահելու համար իսլամացուած հայերուն: Տէր Կարապետ Տաւլաշեան, միակ կղերականը որ իսլամացած հայերուն հետ կապ կը պահէր, բաւարար գումար չկրցաւ հաւաքել իրենց օգնելու համար եւ միայն երկու Պոլսահայ ամիրա իրեն սահմանաբակ օժանդակու-

թիւն տուին: Հաւանաբար, Պոլսահայերը կը վախճային Օսմանեան իշխանութիւններուն բարկացնել: Հայ կղերականներն ալ պատրաստ չէին իսլամացուած հայերուն օգնելու: Օրինակ՝ Տէր Կարապետ մերժեց միւռոն տալ կրօնափոխ ծեր կնոջ մը, եւ միայն հաղորդութիւն տուաւ: Յանձնախումբ մը վեց վարդապետներու մերժեց հաղորդութիւն տալ մահամերձ իսլամացուած համշէնահայ տիկնոջ մը:

Ամէնքս կը փափաքինք իրենց հայ նկատել անշուշտ: Կ'ուզե՞ն իրենք արդեօք հայութեան եւ Հայկական եկեղեցւոյ ծիրին վերադառնալ: Շատ նրբերանքներ կան իրենց յարաբերութեան մէջ հայերուն հետ, որ բարդ են:

ԺԹ դարու վերջին երկու տասնամեակներուն յարաբերութիւնները քրիստոնեայ եւ իսլամացուած հայերու վատացան, շատ անգամ մղուած Ապտիլ Համիտ Բ-ի կողմէ (1876-1909): Ապտիլ Համիտ կը քաջալերէր, որ հեմշինլիները յարձակին հայերուն վրայ:

Մեծ Եղեռնին 1915-ի հեմշինլիները --այսինքն Արեւմտեան, թրքացած Չամլըհեմշինի համշէնցիները-- դաւանեցին իրենց հայ դրացիներուն գիւղերը: Երբ ռուսերը գրաւեցին Խոտորջուրը 1916ին, մի քանի վերապրողներ վերադարձան, բայց երբ ռուսերը քաշեցան 1918-ին հեմշինլի յայտնի աւազակ մը, Պէքթաշ Պէյ Չալմաշուրողլի, յարձակեցաւ այս վերապրողներու վրայ: Երբ այս հայերը բերթի մը մէջ իրենք զիրենց պաշտպանեցին, Պէքթաշ շրջափակեց եւ յարձակեցաւ: Այնքան վայրագ էր, որ նոյնիսկ թուրքերը ձերբակալեցին, բայց ամիս մը վերջ «խորհրդաւոր կերպով» փախաւ: Իրեն աջակցեցաւ ուրիշ հեմշինլի մը հայերու յարձակումին դէմ՝ Միւլէյման Սըրրը Էֆէնտի 150 հոգինոց խմբակով մը: 1918-էն վերջ, Խոտորջուրը բնակուեցաւ հեմշինլի հայերու կողմէ:

Ցեղասպանութենէն վերջ 1915-ին, քրիստոնեական վերջին հետքերը անհետացան Հեմշինի նահիրէն, մանաւանդ Եղեռնի պատճառաւ եւ Խաչքարի վանքի վերջնական փակմամբ: Խոպայի իսլամացուած համշէնցիներ ալ սպաննուեցան Ցեղասպանութեան ժամանակ որովհետեւ համշէնահայերէն բարբառով կը խօսէին:

Նաեւ վկայութիւններ կան համշէնահայերու ինքնապաշտպանութեան մասին --նոյնիսկ համշէնաբնակ զնչուներու աջակցութեամբ-- թուրք ցեղասպաններու դէմ: Սակայն, ինչպէս նշած է Հայաստանի ակադեմիկոս Լեւոն Խաչիկեան «Եղեռնի զոհ դարձաւ նաեւ համշէնահայութեան մեծամասնութիւնը»:

Հիմա, դարերով հեռանալէ վերջ, հայութեան բեկորները քով-քովի կուգան դարերու բաժանումէ վերջ: Համացանցի ստեղծած կարելիութիւններէն անկախ թերեւս երկու ուրիշ պատճառներ կան ասոր համար, որ թերեւս թեական են եւ հաստատօրէն հաւանաբար



թեական են, եւ հաստատ օրէն ժխտական. մէկ կողմէն, Սփիւռքահայութեան գաղութային կառոյցներու տկարացումը մեզի կը մղէ յոյս փնտռելու մեր կորսուած հողերուն վրայ մնացած իսլամացուած հայերուն մէջ, այսինքն՝ թաքուն հայերը կամ կրօնափոխ (եւ հայախօս) համշէնահայերը իբր նորոգութեան աղբիւր սպառած հայկական ոգիի: Այս կրնայ մեզի յուսախափութեան մատնել, քանի որ բացասական կերպով չենք կրնար հաստատել ի՞նչ չափով հայ մնացած են: Նաեւ, կարելի է ենթադրել, որ Արեւմուտքի մէջ ընդհանուր եկեղեցասիրութեան տկարացումը –հանգամանք մը որմէ դժբախտաբար հայ գաղութները գերծ չեն– նաեւ նուազած է նախապաշարունը Սփիւռքահայերուս մէջ (հաւանաբար Պոլսահայ գաղութին բացառութեամբ) կրօնափոխ հայերը մեզի ազգակից համարելու: Վերջապէս միայն դրական կրնայ նկատուիլ սակայն, որ մեր հետաքրքրութիւնը թաքուն հայերով փոխադարձ է՝ իրենք ալ համացանցային եւ ուրիշ միջոցներով կը փորձեն հայերուս հետ կապ հաստատել կամ, հարիւր կամ հարիւրաւոր տարիներ վերջ, վերահաստատել:

Օգտագործուած աղբիւրներ.

Սերգեյ Վարդանեան.- «Կրօնափոփոխ Զանչենահայերի Բարբառը, Բանահիւտութիւնը ու Երգարուեստը»
 Կարէն Զ. Խանկարեան.- «Զայ Բնակչութեան Էթնոկրօնական Վերակերպումները Թուրքիայի Զանրապետութիւնում (1923-2005)»
 Զամօ Մոսկոֆեան.- «Տէր Կանգնիք, Կորուստեալ Զայու Զաւակներուն»
 «Չայն» Զանչենական ամսաթերթ, Hovann Simonian (ed.), «The Hemshin: History, Society and Identity in the Highlands of Northeast Turkey»:



ԼՈՅՍՈՎ ՅԱՒԵՐԺԻ...

Չարի մռչոց, բարու արտասուք,
 Անբառնալի ցաւ, ճանապարհ մահուան,
 Ողորկ նենգութիւն՝ ձեռքեր դահիճի,
 Ընտրանք՝ հաւատքի ու լինելութեան:

Ապրիլեան օրը մթնել էր արդէն,
 Խաւարն էր ձորից երկինք բարձրացել,
 Երգը դաշտերում լռել էր վաղուց,
 Չայ օճախների լոյսն էր դալկացել:

Բացուել էր մահի երախն արնախում,
 Թախծոտ աչքերից սարսափն էր հոսում,
 Գոյժն էր դեգերել հազարաբերան,
 Անմեղ մանուկներ՝ թիրախ են դառնում:

Երկար քարաւան, սովեալ անապատ,
 Ուր մարդիկ անլուր մխանքով ընկան,
 Ծիչեր՝ որ ահից երկինք բարձրացան,
 Վեջին ցոլքերով, վերջին ամոքման:

Աշխարհ անլեզու, աշխարհ հեզնութեան,
 Կեանքի դաւերին սառն ու անհաղորդ,
 Նա ով, անըջեց լոյսը բարութեան,
 Դարձաւ պատանդը, զոհը անկենդան:

Գիտենք որ սին էր որոգայթն հոգու,
 Չայը կարեկցանք էլ չի հայցելու,
 Իր սիրտը արդէն շեղբերից խոցուած,
 Անբարիշտներին էլ չի ներելու:

Մահուան սարսափի ամպն է ցրելու,
 Արեւի պայծառ շողն է ըմպելու,
 Վախճան չունեցող իր նախնիների,
 Անխոնջ հաւատով՝ վեր է հառնելու :

Դարերից եկող մի հին ժողովուրդ,
 Յոյսի եւ լոյսի՝ դռներն պիտ բանայ,
 Երագանքներով անպարփակելի,
 Իր լոյս յաւերժին՝ գամուած պիտի մնայ:

Աւիկ Տէյիրմենճեան
 Պոսթըն

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶԻ ՆԿԱՐԱԳՐԱԾ

ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Արամ Հայկազը (1900 - 1986) Շապին Գարահիսարցի էր: Նա մասնակցել էր Շապին Գարահիսարի հերոսամարտին, հայրենակիցների հետ բռնել զաղթի ճամբան, երբ բերդի կատարին ծածանեցաւ ճերմակ դրօշը անձնատուութեան: Յաջորդ տարիներին նա պարբերաբար անդրադարձել է հարազատ քաղաքի ու նրա անվախ բնակիչների մղած անօրինակ դիմադրութեան, հերոսական մարտերին, ինչպէս նաեւ Զօրավար Անդրանիկի մասին: Անոր հայրենակիցը լինելու հպարտ գիտակցութիւնն ունէր եւ շարունակ այս մէկը կը նշէր, յորելեանների առթիւ:


Յաջողուեց, «Հայրենիք»ի ամսագրի էջերում պահպանուած բազմաթիւ յօդուածներ գտնել եւ ներկայացնել.- «Արամ Հայկազ...Մոռացուած էջեր» գրքի Ա. հատորում: Ահա այդ յօդուածներից երկուսը.- Առաջինը՝ «Շապին Գարահիսարի Հերոսներու Յիշատակին», լոյս է տեսել «Հայրենիք»ի Յուլիս 16, 1924-ի, իսկ երկրորդը՝ «Շապին Գարահիսարի Ինքնապաշտպանութիւնը», Յունիս 28, 1925-ի համարներում:

ՍԱՐԳՐԻՏ ԽԱՉԱՏՐԵԱՆ
Երեւան - Հայաստան

ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ՅԻՇԱՍԱԿԻՆ

Երբ մենք աշխարհ եկանք, արդէն երկու կուսակցութիւններ կային Գարահիսարի մէջ՝ դաշնակցականներ ու հնչակեաններ, որոնց գործունեութիւնը կեդրոնացած էր միմիայն զէնքի եւ զինավարժութեան շուրջ:

Ձմեռ գիշերները, երբ ուրիշ տեղեր հեքեաքներու առասպելական աշխարհները այցի կ'ելնեն, մենք յաճախ կ'ունենդրէինք նոր հետաքրքիր պատմութիւնները մեր մամերուն, որոնց բառերէն կու գային ուրուագծուիլ հերոսական դէմքերը Դանիէլ Չաուշի, Աբէթի, Անդրանիկի ու Ղուկասի: Ու մենք մեր պատանեկան երեւակայութեան վառ թափով կը շինէինք այդ անհետացած հերոսներու շքեղ արձանները՝ ձեւած ատաղձներէն Սասունցի Դաւիթին, զոր հազար զօւլուքիւններով կը կարդար մեզի մեր դաստիարակը: Ու երբ եկան Օսմանեան տիրաառչակ սահմանադրութեան խելամուռ ու խանդավար օրերը, իրենց հետ բերին ձիւնէ մազերով Վահուհին ու Ղուկաս Աղբարը իրենց Աբիոյ աքսորավայրէն. շատ մեծ եղաւ հիասթափումս վերջինին հանդէպ, որովհետեւ շարժուն աչքերով այդ փոքրակազմ մարդուն մէջ չկրցի տեսնել անցեալ ու ապագայ հերոսը, զոր տարիներ վերջ այդքան ճարտարօրէն պիտի վարէր իր ծննդավայրին ինքնապաշտպանութեան շքեղ պայքարը: Ու ով որ տեսեր ու ապրեր է 1915 Յունիս 1, 14 ու 20 13ի այդ պայքարի օրերը, չէ մոռցած ու չի կրնար մոռնալ զանոնք:



Օր մը ան օրերէն:
Ոչ մէկ թշնամի շունչ կամ շուք մեր սահմաններուն վրայ, մինչեւ որ բոցավառուող քաղաքի կրակէ շղթան կը պարտադրէ մեզ քաշուիլ Բերդը, ուր նախօրօք դիրք գրաւած՝ պետութեան կամքին դէմ ծառացող խենթ քաղաքացիներու հետ կարեւոր կարգադրութիւններ կ'ընէ Ղուկասը:
Հոն են վախկոտներն ու թոյլերը՝ խրախուսուած ու սիրտ առած անոնց շունչէն ու օրինակէն:
Վերջապէս հոն են ծերերն ու մանուկները, կիներն ու երեխաները: Բոլորը՝ 5,000 հոգի:
Ու հրավառ քաղաքի պայծառ լոյսին տակ գիշեր ու ցերեկ կը կանգնին պատնէշները, կը բարձրանան դիրքերը, կը նորոգւին ճամբաներն ու աշտարակները: Քարերու տակերէն բոցէ զծերով կը սուլեն կապարները, ու կապոյտ ծուխի թեթեւ ամպիկներ վառօդի հոտով օդը կը խնկեն:
Ու կ'երգուին բոլոր ժամանակներու բոլոր անամուն հերոսներու բոլոր ռազմի երգերը:
Ու մարդիկ, մոռցած տուն ու ընտանիք, կռուի կը բաղձան, կռուով մահը կ'երագեն ու կ'աղօթեն. «Շո՛ւտ դրկէ, Տէ՛ր, շո՛ւտ դրկէ, է, Տէ՛ր, շո՛ւտ դրկէ, Տէ՛ր»:
Վարը՝ Բերդի փէշերուն, թուրք զօրքն ու խուժանն է, որ կ'անտառուի սպասելով օգնութեանը գալիք ուժերուն ուզուած Սեբաստիայէն, Կիրասունէն, Տրապիզոնէն ու երզնկայէն:

ՇԱՊԻՆ ԳԱՐԱՅԻՍԱՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ (Տարեդարձի առիթով)

Գաւառական փոքր ու շէն քաղաք մըն էր Շապին Գարահիսարը: Սօտ 3000 տուն բնակչութիւն ունէր եւ շինուած էր Գայա Պուչի կոչուող հսկայ ապառաժի մը վրայ եւ Միհրդատի ու Պոմպէտի օրով արուեստական աշտարակներով ու պարիսպներով ամրացուած, Բերդ կոչուող քարակոյտէ մը կազմած լայն ու հարթ ծորին մէջ:

Հայոց թաղը՝ իր մօտ 1000 տուններով, կը տարածուէր Բերդին անմիջապէս ստորոտը եւ նոյնիսկ քիչ մըն ալ կողերէն վեր:

Հասնելու համար Բերդ հարկ էր ճեղքել հայոց թաղը եւ մագլցիլ խճուղիէ մը, որ ժապաւնի մը պէս կը գալարուէր վեր՝ դէպի Բերդի կամարակապ ու մեծ դուռը:

Համիտեան շրջանին իսկ թուրքերը չէին սիրտ ըներ Բերդ ելնել կամ ճեղքել հայոց թաղը, ուր անխուսափելիօրէն կը ծծուէին կամ քարահալած կ'ըլլային հայ տղաքներէն:

Այսպէս բոլոր շրջաններուն մէջ հայերը բացարձակ տէրն էին Բերդին, որուն վրայ էին տարւոյն բոլոր եղանակներուն մէջ ալ եւ որուն ամէն մէկ ծակն ու ծուկը կը ճանչնային իրենց գրպաններուն պէս:

Միայլ պիտի ըլլար, եթէ 1915ի Շապին Գարահիսարի հոյակապ ինքնապաշտպանութեան փառքը նսեմացնել փորձէինք՝ զայն վերագրելով իր դիրքին ընծայած առաւելութիւններուն եւ յարմարութեան կամ սա կամ նա կազմակերպութեան կամ մարմնին կանխորոշ ծրագրին:

Որովհետեւ, շարժումը գերազանցապէս ժողովրդական էր եւ 1915 թուի Յունիս 2ին, երբ հայերը զենքի դիմեցին պատուով մեռնելու կամ իրենց գոյութիւնը փրկելու համար, նկատի չունէին Բերդը իբրեւ ապաստան, թէւ, կրնակնին ապահովելու մտահոգութեամբ չէին անտեսած զայն ու պարոն Վարդան Գարեգինի (Եաթախ) առաջնորդութեամբ եւ Գարակէօզեան Հմայեակի թելադրութեամբ խումբ մը տղաք ղրկած էին հոն:

Այսպէս, առաջին օրերուն, կռիւը շարունակուեցաւ քաղաքին մէջ եւ անօրինակ յաջողութիւնով, մինչեւ որ թուրքերը յուսահատ կրակեցին հայոց թաղը՝ սկսելով իրենց սահմանակից տուներէն եւ հեռաւոր ու անպաշտպան հայոց պարտէզի թաղէն:

Կրակը մարելու մասին մտածելն իսկ ժամանակավաճառութիւն էր, որովհետեւ ջրաբաշխական կեդրոնը կը գտնուէր թուրք թաղին մէջ, եւ վերջինները որեւէ վայրկեան կրնային մեզ առանց ջրի թողուլ՝ կտրելով բոլոր աղբիւրները:

Այս պայմաններուն մէջ լաւագոյն փոխվրէժը պիտի ըլլար իրկիզումը թուրք թաղին ու շուկային, որով մոխրի վրայ պիտի նստը մեզի հետ նաեւ ամբողջ թուրք ազգաբնակչութիւնը:


Իսկ մենք պիտի քաշուէինք Բերդ՝ հոն պայքարելու, օգնութեան սպասելու եւ ի հարկին մեռնելու համար:

Մեզմէ ոչ ոք կրցած էր երեսակայել ահագնութիւնը հայաջինջ ծրագրին, ու ամէն ոք վստահ էր, թէ օր մը ուշ կամ վաղ, հին շրջաններուն պէս պիտի վերջ գտնէր «Կոտորեցէք»ի հրամանը արիւնոտ:

Բայց այդ հրամանը չեկաւ:

Կրակը, երկու կողմէն արծարծուած եւ աղուոր հովով մը քաջալերուած, 24 ժամուան մէջ լափեց ամբողջ քաղաքը:

Մենք Յունիս 5ի գիշերը փոխադրուեցանք Բերդ՝ միասին տանելով մեր ամբողջ ռազմամթերքը, նախիրը, անհրաժեշտ տնական գոյքերը եւ կարելի չափով շատ ուտեստի պաշարը: Լուսաբացին (արդէն բոցավառ քաղաքը չէր թողած, որ գիշերը մթնէ) 5000 հոգի Բերդն էր քաշուած, քաղաքը՝ ամբողջութեամբ ածխացած ու 150 կտրիճ տղաք, հրացանները գրկած, պատրաստ նստած էին:



Անմիջապէս ամբողջ ուտեստի պաշարը հաւաքուեցաւ Պարենաւորիչ մարմնի ձեռքին տակ, եւ սննդառութիւնը վերածուեցաւ չափի:

Նորոգուեցան բոլոր պարիսպներն ու դիրքերը, որոնք ժամանակի եւ կլիմայի ազդեցութեան տակ մաշած էին ու կիսակործան: Անհրաժեշտ համարուած տեղերուն վրայ կառուցուեցան նոր դիրքեր, ու ձեռնառումները կողովներով փոխադրուեցան գլխավար Սառնիճ կոչուող ու 40 սանդխամատերու խորք ունեցող փորուածքի մը մէջ՝ իբրեւ ապահովագոյն վայր:

Դիրքերը իրար կապուեցան, պահակներ ու պահապաններ նշանակուեցան ու այս ամէնէն վերջ ժողովուրդին թոյլատրուեցաւ զբաղիլ իր հանգստեան հոգով:

Շուտով ամէն կողմ՝ ապահովագոյն համարուած քարերու եւ անկիւններու տակ, քարէ պատեր բարձրացան, ու հողին վրայ օրուայ յուզումներէն ու աշխատութենէն յոգնած ժողովուրդը, աստղերը համրելով, քնացաւ:

Առաջին քանի մը օրերը յարձակում կամ ուշագրաւ շարժումներ տեղի չունեցան թուրքերու կողմէ: Հատուկտոր հրացանածգութիւններ միայն, մեր չորս կողմէն հասած, մեր պաշարումը կը գուժէին:

Ու մենք մեր իշխող դիրքէն ցաւով կը տեսնէինք ամբողջ շրջանի հայ գիւղերուն աւերումը: Աներգին կը միսար, Չրեխին աւերուած էր, Պուսէյիտը՝ ամայի, ժիպեռին՝ թափուր: Կտրիճ Բուրգին խաչելութեան լուրը օրեր առաջ մեզի հասած էր, ամբողջ հայ աշխարհը կ'աւերուէր:

Մենք վստահ էինք, թէ Մուրատը պիտի գար Սեբաստիայէն մեզի միանալու, ու այսպէսով պիտի կրնայինք շարունակել



դիմադրութիւնը մինչեւ որ Կարինէն ռուս զօրքին հետ, Անդրանիկը՝ հպարտ ճակատով, գար զինքը ծնող հերոս քաղաքին հայութիւնը փրկելու:

Չեկաւ ան, չերեւցաւ եւ Մուրատը:

Բայց գարահիսարօցին մենամիճակ ամբողջ ամիս մը շարունակեց պայքարը՝ այսպէսով ինքզինքը դնելով մեր օրերու հայ աշխարհի տխուր պատմութեան մէջ փառքի տեղ գրաւած հերոսական Վանին, կտրիճ Մուշին, անմամն Ուրֆային ու Սոււտիային քով:

Ու այսօր, երբ պանդուխտի տասը երկար ու տխուր տարիներուս մէջէն կը յիշեմ այն շքեղ պայքարի օրերը, երբ կ'ոգեկոչեմ դիմագծութիւնները անոնց, որոնք ինկան կատաղի եւ անհաւասար պայքարին մէջ, երբ պահ մը տեսնել կը կարծեմ Բերդ ամրացած ամբողջ ազգաբնակչութիւնը Գարահիսարին՝ իր ծերերով, տղաներով, կիներով ու մանուկներով, երբ կ'անդրադառնամ, թէ անոնք բոլորն ալ հերոսներ էին ու այսօր մեր յիշողութիւններուն մէջ ապրող նահատակներ միայն, սիրտս կը լեցուի անսահման ցաւով ու կսկիծով:

Այս տողերը գրողը եղած է հոն՝ կռուի օրերուն եւ վարը թուրքերուն քով պարտութիւններու ամենէն շքեղէն վերջ, ու լսած նկարագրութիւնը այն սարսափին, զոր անոնցն էր եղած:

Անոնք էին, որ ըսին ինծի, թէ Յունիս 20ին՝ կռուի ամենակատաղի օրը, յարձակողականին կը մասնակցէին Կարնոյ ճակատէն ետ բերուած ու Սեբաստիայէն կանչուած 5.000 կանոնաւոր զինուորներ ու չորս թնդանօթներ՝ ընկերակցութեամբ հազարներու հասնող խայտաբղետ ու մոլեռանդ

ամբոխին, որ հրկիզուած քաղաքի մոխիրներուն վրայ, թաւանի իր երազը կորսուած, եկեր էր իր արիւնի ծարաւը մարելու, «ղագի» (յաղթող, նուաճող) կամ «շէհիտ» (նահատակ, մարտիրոս) ըլլալու:

Դեռ յիշողութեանս մէջ թարմ կը մնայ այդ օրուայ պատկերը իր բոլոր տխրօրէն գեղեցիկ մանրամասնութիւններով:

Արշալոյսին հետ սկսած էր յարձակումը, ու հագիւ արեւը նիզակաչափ մը իր ուղին գծած հորիզոնին վրայ, երբ մերոնք արդէն գերագոյն ճիգերով կրնային իրենց դիրքերուն տէր մնալ: Թշնամին՝ քալող անտառներու պէս (եւ ինչո՞ւ ուրանալ) քաջաբար վեր կը խուժէր, թնդանօթները կը գոռային անընդհատ, ու հրացանի մեր անջատ հարուածները հագիւ կը կարողանային կտորակել զիրենք: Արդէն Սրա Սառնիճի մեր ամենէն անվտանգ կարծուած դիրքէն թշնամին վեր ելած էր ու դրան առջեւ ուրիշ վաշտ մը ճիգ կ'ընէր ներս մտնելու: Շիմալրի մեր ամենէն կարելոր մէկ դիրքը գրաւուած էր Յազզը Պէյի կողմէ, ու ամէն վայրկեան թշնամին կ'ակնկալէր տէրը դառնալ Բերդին:

Ահա այն ատեն էր, որ Դուկաս Աղբարը հրաման տուաւ ծեռնառունքերը գործածելու: Արդէն տղոց քով հատեր էր փամփուշտը եւ ամէն դիրք, մէկ կամ անշի վիրաւոր կամ սպաննուած ունենալով, օգնութեան կոչեր կը դրկէր ղեկավար մարմիններուն: Տղաներուն կը մնար, ռումբերը զինարանի վերածուած, զլխիվար Սառնիճէն դիրքերը փոխադրելու գործը: Ու անոնք շքեղօրէն կատարեցին իրենց պարտականութիւնը, երբ կապարի կարկուտին տակ ոչ ոք սիրտ կ'ընէր քարերու ապաստանէն դուրս գալ:

Արդիւնքը հրաշալի էր: Անակնկալին առջեւ սարսափած թուրք զօրքը փախուստի դիմեց: Մերոնք, քաջալերուած, արկածախնդրութիւնը ունեցան դիրքերէն դուրս գալու եւ զանոնք հալածելու: Մեր կռուողներուն միացան կիները՝ քարեր ու ապառաժներ գլորելով վերէն վար:

Գիշերը Բերդը սգաց իր նահատակները ու խաղաղութեան մէջ հանդարտ քնացաւ անխռով:

Բայց ինչ որ թշնամին ու իր թնդանօթները չկրցին ընել, ըրաւ սովը, երբ Յունիսի 25ին ներս մտաւ Բերդէն ստիպելով, որ չորս օր վերջ՝ 29ին, մարտիկները ճեղքեն պաշարման շղթան ու անցնին շրջակայ լեռները՝ կռիւը հոն շարունակելու:

Առաւօտ կանուխ Բերդի անզգայ կատարին անձնատուութեան ճերմակ դրօշակը գլուխը ցցեց ու թշնամին, թերահաւատ իր աչքերուն, ուք ժամ վերջ միայն յանդգնեցաւ վեր ելնել՝ հանդիպելու համար կիներու, երախսաներու, վիրաւորներու (ասոնց ծակատագիրը ամենատակալին եղաւ), մանուկներու եւ ծերերու:

Ու պատահեցաւ այն, ինչ որ կարելի չէ ու պէտք չէ ալ նկարագրել...





ՅՈՒՂԱՅԻ

ԵՂՈՒՐԴ ՏԱՐՕՆԵՍ

Պէյրուք – Լիբանան, 1955

Պոլսոյ երբեմնի Թոքաթեան պանդոկին մասին խօսող թուրք խմբագիրը, այս հաստատութեան անցեալ փառքը վերհիսելու համար, կը յիշատակէ բաւական տպաւորիչ անցքեր, ինչպէ՛ս՝ դիւանագէտներու հանդիպումներ, ազնուապետական խնճոյքներ, գեղարուեստական հաւաքոյթներ, որոնց ամէնուն ալ արժանավայել հանդիսավայրը եղած է այս պանդոկը: Բայց խմբագիրը համեստօրէն զանց կ'ընէ նոյն այս պանդոկին մէջ տեղի ունեցած ուրիշ դէպք մը, որ կրնայ զլուխ գործոցը համարուիլ թուրքի հոգեկան ստեղծագործութեանց, եւ որ իր նշանակութեամբը այդ շէնքը համաստիճան կը դարձնէ Գեթսեմանիի պարտէզին:

Գարնանային երեկոյ մըն է: Ապրիլեան ծաղիկներու եւ ելեկտրական գունագեղ լամբարներու փունջերը արդէն կը գրասանդէն Թոքաթեան սրահին առաստաղն ու պատերը: Պրիճի պահն է, եւ սեղանները կը յարդարուին: Ահա եւ Օսմանեան կայսրութեան բարձրագագաթ քառանդամ խումբը: Սեղանին շուրջ, դէմ առ դէմ նստած են Զօհրապ եւ Թալէաթ (այն ատեն՝ ներքին գործոց նախարար), միւսներուն անունը չկայ: Բաւական խաղալէ ետք Զօհրապ, օր մը իր մտերիմներու յայտարարութեամբ, խաղի սեղանին վրայ ո՛չ շահածովը կը հետաքրքրուէր, ո՛չ ալ կորսնցուցածով, խաղակիցներէն հրաժեշտ կ'առնէ եւ ոտքի կ'ելլէ մեկնելու: Թալէաթ ալ տեղէն կը ցատկէ եւ Զօհրապին փաթթուելով՝ տաք-տաք կը համբուրէ: Այս անձնակալ գեղումէն զարմանահար՝ Զօհրապ կը հարցնէ ժպտագին:

- Ի պատիւ ինչի՞ էր այս համբոյրը:
 - Սիրտէս այդպէս բխեցաւ,- կը պատասխանէ Թալէաթ նոյնպէս ժպտագին:
- Անշուշտ Զօհրապ չի գոհանար այս հակիրճ բացատրութեամբ: Բայց այդ մասին շատ երկար մտածելու պէտք չի մնար, որովհետեւ հազիւ հարիւր մէթր անդին, անկիւնադարձի մը վրայ զոյգ մը ոստիկան իր ճամբան կը կտրեն եւ կը յայտնեն, թէ զինք ձերբակալելու պաշտօն ունին:
- Թիւրիմացութեան մէջ չէ՞ք, զիս կը ճանչնա՞ք:
 - Պատիւ ունինք, Զօհրապ էֆէնտի:




ՀԱՄԱՐՅՐԸ

- Բայց ես հիմա ներքին գործոց նախարարին քովէն կու գամ:

Իսկ ոստիկանները, իբրեւ պատասխան, իրեն կը ներկայացնեն ձերբակալման հրամանագիրը՝ ներքին գործոց նախարարին կողմէ ստորագրուած:

Ապրիլ 24, 1915-ի գիշերն էր...



«ԴՐՕՇԱԿ»Ի ՅԵՌԱԳԻՐԸ՝ ԹԱԼԵԱԹ ՓԱՇՏԱՅԻՆ

Հայոց Ցեղասպանության օրերուն, հետևողական ձեռով լուրերը կը հրատարակուէին Պուլկարիոյ մայրաքաղաք Սոֆիայի մէջ լոյս տեսնող «Հայաստան» թերթին մէջ, որուն թղթակիցներէն մէկն էր հայ կնոջական շարժումի ռահվիրաներէն՝ Չապէլ Եսայեան: Ստորեւ, լոյս կ'ընծայենք ՀՀ Դաշնակցութեան պաշտօնաթերթ «Դրօշակ»ի խմբագրութեան ուղղած սամակ-հեռագիրը (Յունիս 20, 1915), Թուրքիոյ Ներքին Գործոց նախարար Թալէաթին.-



«Խորունկ վշտով համակուած՝ ձեզ կ'ուղղենք այս հեռագիրը, բողոքելով մեր ամբողջ ուժովն ու կարողութեան թափովը՝ քրդերու եւ թուրքերու կողմէ հայ ժողովուրդին վրայ գործ դրուած այն հարստահարութիւններուն դէմ, որոնք, -եւ այդ ամենէն ծանր է եւ շշմեցուցիչ, -ուժ եւ օգնութիւն կը գտնեն թուրք կանոնաւոր բանակէն:

Ո՞վ կազմակերպեց այս ջարդերը, ո՞վ է պատասխանատուն զարհուրելի նախճիրներուն, որոնք իրենց ետին շատ հեռուն կը թողուն համիդեան ռէժիմին սարսափները: Ո՞վ տարածեց սուգի այս քօղը ամբողջ Հայաստանի վրայ՝ սկսած Կիլիկիայէն մինչեւ Արաքս եւ մինչեւ Արարատեան աշխարհը: Ո՞վ վերածեց աւերակներու շեղջակոյտի մը այս դժբախտ այս դժբախտ երկիրը, ջարդելով անգթօրէն ամբողջ արու բնակիչները՝ առանց տարիքի խտրութեան, բռնաբարելով եւ առեւանգելով կիները, ողջ թողելով միայն ծերունիներն ու ցաւագարները՝ որպէսզի լան մխացող աւերակներուն վրայ:

«Ձոհերու թիւը հարիւրներով չէ որ կը հաշուի, այլ հազարներով. Գրեթէ բոլոր գիւղերը դժբախտացած են. անոնց մեծագոյն մասը փճացած, աւերուած է:

Հերիք չէր որ յարձակողները կողոպտեցին բնակիչները եւ բանակը պարենաւորելու պատրուակով յափշտակեցին անոնց ամբողջ ունեցածը: Հերիք չէր որ ժողովեցին զէնք կրելու ընդունակ բոլոր հայ երիտասարդները, վիրաւորեցին անոնց ազգային եւ կրօնական զգացումները, բռնադատելով զանոնք՝ կատարել անպատուաբեր աշխատանքներ, անիրաւաբար ամբաստանեցին զանոնք իբրեւ լրտես ու դաւաճան եւ շատերը կոտորեցին խուլ ծորերու մէջ: Հերիք չէր որ անհետացուցին հայութեան բոլոր ականաւոր անձնաւորութիւնները, բանտելավ, աքսորելով զանոնք հեռաւոր անկիւններ: Հերիք չէր որ սարսափ տարածեցիք ամբողջ հայ ժողովուրդին վրայ. պէտք եղաւ նաեւ հսկայ գերեզմանոց մը դարձնել ամբողջ Հայաստանը եւ Կիլիկեան:

«Ո՞վ է յանցաւորը: Ամբողջ աշխարհը եւ ձեր դժբախտ զոհերը երեսնիդ ի վեր կ'աղաղակեն ձեր ոճիրը: Եւ անոնք իսկ, որ երէկ տակաւին ձեր բարեկամներն էին, եւ որոնց հետ աղ ու հաց կը բաժնէիք:

«Եւ ինչի՞ համար այդ անլուր ոճիրները: Անո՞ր համար արդեօք որ այդ մարտիրոս ժողովուրդը ամբողջ իր ուժերով պայքարեցաւ համիտեան ռէժիմին դէմ եւ մեծ մաս ունեցաւ թուրք յեղափոխութեան մէջ: Անո՞ր համար արդեօք որ անոնք ձեր նոր կառավարութեան տրամադրեցին իրենց ամբողջ երիտասարդ եւ կորովի ուժերը, պաշտպանելու համար սահմանադրութիւնը եւ նորահաստատ ազատութիւնը:

«Կամ թերեւս անո՞ր համար որ համիդեան յետադիմական հարուածին պահուն անոնք միակն էին որ հաւատարիմ մնացին սահմանադրութեան եւ իրենց շիտակ աջակցութիւնը բերին այն ատեն, երբ անգա՛մ ձեր շատ մը ընկերները լքեցին ձեզ:

«Ձեր կառավարությունը բանտած է մեր ընկերներու մեծ մասը, որոնցմէ շատերը դուք բարեկամ եւ խորհրդրդատու կը նկատէիք: Ու սակայն, երբ դուք ամրացուցիք ձեր դիրքը եւ ինքզինքնիդ վտանգէ գերծ գագցիք, հաւատարիմ չմնացիք այն խոստումներուն, զորս ըրած էիք երէկի ձեր դաշնակիցներուն եւ բացայայտօրէն հակահայ դիրք մը բռնեցիք: Սակայն անոնք կը շարունակէին պարկեշտ վերաբերում մը ունենալ ձեր հանդէպ, ջանալով ցոյց տալ ձեզ՝ թէ ի՞նչ մեծ քաղաքական սխալ կը գործէիք թէ՛ իրենց ժողովուրդին եւ թէ՛ առհասարակ օսմանեան կայսրութեան նկատմամբ: Եւ վերջապէս, երբ մենք, այլեւս յոգնած, խզեցինք պաշտօնական կապերը մեր եւ ձեր միջեւ, նոյն իսկ այնուհետեւ թշնամական ընթացքի մը չհետեւեցինք ձեր նկատմամբ, այլ շարունակեցինք մեր պարտքը կատարել եւ ձեր, եւ ընդհանուր հայրենիքին առջեւ:

«Մենք ջանացինք ձեր աչքերը բանալ այն աղէտաբեր քաղաքականութեան վրայ, զոր դուք կը վարէիք, յորդորելով ձեզ՝ չերթալ դէպի կորուստ, թշնամութիւն սկսելով ընդդէմ Ռուսիոյ. չենթարկուիլ Գերմանիոյ ազդեցութեան եւ չքալել Երրեակ Զամաձայնութեան պետութիւններուն դէմ, որոնցմէ երկուքը - Ֆրանսա եւ Անգլիա միշտ անկեղծ բարեկամ եղած էին Թուրքիոյ, մէկէ աւելի անգամներ փրկելով անոր գոյութիւնը:

«Եւ ի՞նչ ըրիք դուք, երբ այդ դարեւոր բարեկամները եւ անոնց հետ ոչ նուազ դարեւոր թշնամին -Ռուսիան-

կը խոստանային Թուրքիոյ անձեռնմխելիութիւնը: Դուք ապերախտ հանդիսացաք, երես դարձնելով ձեր վաղեմի ազատարարներէն եւ նետուեցաք Գերմանիոյ գիրկը, կուրանալով անոր ուժէն, խախտելով ձեր իմաստուն չէզոքութիւնը եւ այդպէս վտանգելով օսմանեան կայսրութիւնը:

«Երկիրը, արդէ՛ն աղքատ, բոլորովին քայքայեցաւ: Դուք ահաւոր բարդութիւններ ստեղծեցիք, արիւնալի պարտութիւններ ունեցաք Զայաստանի սահմաններուն վրայ եւ զոհեցիք անթիւ երիտասարդ կեանքեր: Դուք կը մղէք այսօր մահաբեր կռիւ մը եւ՝ անկարող ասկէ ետք ազատելու ձեր հայրենիքը՝ վատօրէն կը յարծակիք զինաթափ եւ անպաշտպան հայ ժողովուրդին վրայ:

«Ձեր քաղաքականութիւնն է որ ստիպեց հայերը խմբեր կազմել՝ պայքարելու համար ընդդէմ իրենց ցեղին բնաջնջման: Դուք կը հնծէք, ինչ որ ցանեցիք:

«Զ 3 Դաշնակցութեան օրգանը, անջատ կուսակցութեան է իր սեփական պատասխանատուութեամբ, կու գայ յայտարարելու ձեզ, թուրք կառավարութեան ներկայացուցիչներուդ եւ Իթթիհատի անդամներուդ, թէ կ'ամբաստանէ ձեզ եւ բարոյապէս ու իրաւաբանօրէն ձեզ՝ պատասխանատու կը բռնէ՝ հայ ազգի դէմ գործուած ոճիրներուն համար, որոնք ոճիր են նաեւ օսմանեան կայսրութեան դէմ»:

Boston



Պարոն

**Homenetmen Eastern Region
21st Annual Inter-Chapter Games**

Հ.Մ.Ը.Մ. Արևելեան Մ.Ն.
Զ1րդ Միջ-Մասնաճիւղային Խաղեր



JULY 1-4
2011





ԱՊՐԻՒՐ, Ո՛Վ ՀԱՅ ժՈՂՈՎՈՒՐԴ

ԳԱՐԵԳԻՆ ԶՆՅ. ՊԵՏՈՒՐԵԱՆ

Նորթ Էնտովոր - Մասաչուսեթ

Գարուն էր, Ապրիլ ամիս, ապրելու ամիս...

Մեր ժողովուրդի գարունը խլել ուզող եւ փորձող խաւարային ճիւղը, եկաւ անգամ մը եւս իր հակամարդկային ու հակաստուածային նկարագիրը ցոյց տալու մարդկութեան, յայտարարելու իր անբնական եւ գուցէ մտքի ոլորտին համար անբացատրելի ոճով իրագործած իր բարբարոսութիւնը:

Ապրիլ ուզող, կեանքին իմաստը գիտցող ու Աստուածապարգէս կեանքը ապրող հայկազնեան ժողովուրդի զաւակները, յատկապէս մտաւորական ու հոգեւորական դասակարգը, անգամ մը եւս սկսան մահուան ենթարկուիլ, Ապրիլ ամսուան ընթացքին, կեանքի ամսուան ընթացքին սկսան կորուստի մատնուիլ:

Չարը ներկայացնող ու զայն մարմնաւորող թուրքը,

մղուած չարանեմզ, չարաբարոյ եւ չարախորհուրդ հաճոյքներէ, միասնաբար զինք հովանաւորող այլ բարբարոս հաւաքականութեանց կամ այսպէս կոչուած պետութեանց, լծուեցան արինահեղման, անմեղ հոգիներու խլման, դեռատի կեանքերու ոչնչացման, համեստ ու Աստուածավախ մարդոց անհետացման, եւ այսպէս շարքը երկար է մեր ժողովուրդի բոլոր դասակարգերուն, որոնք ճաշակեցին անմարդկային դառն եւ թունաւոր իրականութիւնը:

Սօտաւորապէս դար մըն է անցած այս իրողութենէն, ուր մեր ազգը տակաւին կը տառապի ճշմարտութեան, արդարութեան եւ հատուցման կամաւոր բացակայութենէն, մեր իրաւունքները դարձնելով քաղաքական խաղալիք, զգուելի կատակ եւ պետութիւններու միջական ու նենգ իրագործումներուն մեծ եւ արդիւնաբեր միջոց:

Հովանաւոր՝ Ա. Պայրամեան

Սակայն... ո՞ւր կ'երթաս աշխարհ, ի՞նչ կ'ընեն մարդիկ, զոր արդարությունը ճգմելով կը բարձրանան վեր, որուն ավարտը ահաւոր անդունդն է: Անոնք արդարութեան ձայնը կը փակեն, ի հեճուկս իրենց իրագործումներուն ու հանգիստին:

Մեր ժողովուրդի վերելքը փորձեցին դադրեցնել, մեզ յենարան դարձուցին, ոտնակոխեցին, սակայն ո՞ւր են հիմա, եւ ո՞ւր ենք մենք:

Մեր ժողովուրդը չի՛ մեռնիր, չ'ոտնակոխուիր, չ'ստորկանար, չի՛ յանձնուիր եւ չի՛ տկարանար: Այսօր ահաւասիկ միլիոններ կը հաշուենք, մեր ժողովուրդի միտքը եւ արժէքը տարածուած է համայն աշխարհով, մեր ներկայութիւնը տիրական է միջազգային գետնի վրայ... այս բոլորը եւ ավելին:

Ապրիլը մեր ժողովուրդի նշանաբանն է, կեանքը բոլոր մարդկութեան իրաւունքն է, արդարութիւնը բոլորին համար է, ճշմարտութիւնը ընդունիլն ու անոր համեմատ պատասխանատուութիւն ստանձնելը համակ մարդկութեան պարտաւորութիւնն է, ուստի Աստուած միշտ պիտի յիշեցնէ մարդուն, ամէն տեղ եւ ամէն միջոցով, որ տակաւին արդարութեան ծարաւը ունի այս աշխարհ, տակաւին ազգեր կան, որոնց նախնեաց արիւնը աղաղակ կը բարձրացնէ...

Աստուած կը յիշեցնէ որ բարբարոսներու ձեռքով նետած է այս աշխարհը, զոր կը կարօտի մաքրութեան: Այս աշխարհի գարունը անհատացած է այլեւս, եւ երբէք պիտի չգայ մինչեւ որ այդ գարնան արժանի եղող ժողովուրդը եւ ժողովուրդները իրենց իրաւունքներուն չտիրանան:

Աշխարհ ու աշխարհի «իմաստունները» հարկ է որ հասկնան իրողութիւնը, լաւապէս ըմբռնեն իրականութիւնը, տեսնեն իրենց չորսդին ու կռահեն այս աշխարհի ապագան, որ իր այս ընթացքով կորստական ճամբուն մէջ մտած է արդէն:

Լաւապէս պէտք է գիտակցիլ, որ այս աշխարհի բոլոր փորձանքները մարդկութիւնը իր ձեռքով կը բերէ, Աստուած կապ չունի աշխարհի աղետներուն հետ, ձեռք չունի այս բոլոր չարիքներուն մէջ, այլ ընդհակառակը Իր նախախնամութեամբ է որ աշխարհ կը գոյատեւէ, հակառակ անոր մէջ տիրող խառն, ըմբոստ ու անկարգ վիճակին:

Մարդն ու իր գործերն են այս աշխարհի քայքայման ու անապահովման պատճառը, մարդ արարածին անարդար, եսասէր, փառամոլ ու չար նկարագիրն է, որ մեր Աստուածաստեղծ տիեզերքին վրայ կը բերէ չարիք, պատերազմ, սով, մահ ու հիւանդութիւն:

Մեր ժողովուրդի դէմ գործուած ոճիրը մարդկային որոշումներու, անյագ կիրքերու եւ զազանական հաճոյքներու արդիւնք էր, որուն արդար հատուցումը

անքննարկելի իրողութիւն մըն է: Ամբողջ աշխարհ ընդունած է եւ հասկցած հայոց հանդէպ կատարուած ջարդը, սակայն մարդիկ այնքա՛ն անսիրտ ու անհոգի դարձած են, որոնց մէջ բոյն հիւսած է չարը, թոյլ չի տար անոնց, որպէսզի իրականութիւնը ի յայտ հանեն ու խոստովանին:

Սակայն իրականութիւնը մենք մէջտեղ պիտի բերենք, որովհետեւ իրականութիւնը մենք ենք, ո՞վ հայ ժողովուրդ: Մեր ներկայութիւնը, միասնականութիւնը, միութիւնն ու սէրն է իրականութիւնը:

Հայ լեզուն, նկարագիրը, մշակոյթը, արուեստն ու երաժշտութիւնը, ասոնք են մեր գէնքերը, զորս իւրաքանչիւր հայորդի իր սրտին ու հոգիին մէջ ունի եւ իր հետ կը տանի աշխարհով բոլոր: Հայ ոգին է որ հայկազնեան սերունդներու նկարագրին հետ միախառնուած, կ'ողողէ իրենց էութիւնը:

Հայ ժողովուրդը պէտք չէ միայն ճանչցուի որպէս ջարդ տեսած, կամ անարդարութեան զոհ զացած ժողովուրդ, պէտք չէ ճանչցուի միայն որպէս աշխարհացրիւ ազգ, ասոնք միայն մէկ պատկերն են հայութեան մութ ու տխուր պատկերը, որ ժամանակը երբ գայ պիտի հիմնովին այլափոխուի:

Սակայն մեր ժողովուրդի պարծանքն ու նկարագիրը կը կայանան նաեւ իր հարուստ ու անհատնում ժառանգութեան մէջ, իր հարուստ հոգեւոր ու մշակութեան զանծերով, անգերազանցելի ոգիով, հարուստ պատմութեամբ ու ներկայով, արուեստով ու երգով, ավանդութիւններով ու փայլուն մտքերով... ասոնք են նաեւ մեր ազգի ու ժողովուրդի իւրայատկութիւնները, որոնց պէտք է ծանօթ ըլլայ համակ աշխարհ:

Հայ ժողովուրդի գոյութիւնը կը յաւերժանայ երբ այս բոլորը պահուին, արժեւորուին, օգտագործուին, մշակուին ու հարստանան:

Ապրի՛ ողջ հայ ժողովուրդը ու իր ապրելով գարուն բերէ եւ կեանք տայ մեր ազգին ու ծաղիկներով զարդարէ այդ գարունը:

Բարբարոսը մեր նախնիները անապատ տարաւ եւ պոկեց իր մայրենի հողին մէջ ծիւ տուած ծաղիկը, անապատը վերածելով արեան դաշտի:

Սակայն այդ անապատը վերջակէտ մը չդրաւ հայ ժողովուրդի կեանքին, այլ հայկեան ժողովուրդը յարութիւն առաւ, իւրաքանչիւր սերունդի սրտին ու մտքին մէջ ցանելով մշտադաւար ծաղիկներ, յաւերժացնելով մեր ազգի գարունն ու երբեմնի դառն Ապրիլը:

Յաւերժ յարգանք, յիշատակ ու խնկաբոյր աղօթք, մեր ամենդ հայորդիներու հոգիներուն, որոնց արեան աղաղակը ցայսօր աշխարհ կը դղողէ... մինչեւ հասնի արդարութեան պսակին:



**Մեր շատ սիրելի Գեորգ Վիշապեանի
յիշատակին
(Փետրուար 2, 1940 – Դեկտեմբեր 13, 2010)**

Ընկեր Գեորգ Ե. Վիշապեան:

Ան կողակիցն էր Մարլեն Վիշապեանի (Մերտինեան): Ծնած Պէյրուս - Լիբանան, զաւակն էր Երուանդի եւ Էլիզի (Թորոսեան):

Տարիներ շարունակ ան անդամ էր Փրովիտընսի «Քրիստափոր» Կոմիտեութեան եւ Սուրբ Վարդանանց եկեղեցւոյ, նաեւ հիմնադիր՝ տեղւոյն «Համագգային»ի մասնաճիւղին:

Ան հայրն էր Սօսի Փոմաքեանին եւ իր ամուսնոյն՝ Յակոբին (Վուտլընտ Յիլզ, Գալիֆորնիա), Ծովիկ Չոպանեանին (Սիմի Վալի, Գալիֆորնիա), Տէր եւ տիկին Երուանդ եւ Էրին Վիշապեանի (Նորթ Տայթըն, Մասաչուսեց): Մեծ հայրն էր Յովիկի, Յարութի, Ալինի, Ալեքսանտրի եւ եղբայրը՝ Անահիտի եւ Արշալոյսի (երկուքն ալ Պէյրութաբնակ):



**In Loving Memory of
Kevork Vichabian
(February 2, 1940 – December 13, 2010)**

Unger Kevork Y. Vichabian.

He was the beloved husband of Marlene (Merdinian) Vichabian. Born in Beirut, Lebanon. He was the son of the late Yervant and Elize (Torossian) Vichabian. Unger Vichabian was a Life-long member of the ARF Providence "Kristapor" Gomideh, Life-long member and one of the founders of the Providence Homenetmen, Founder and life-long member of the Providence Hamazkayin, and a member of Sts. Vartanants Armenian Apostolic Church, Providence, RI. A loving husband to his wife, he was also the devoted father of Sossi Pomakian and her husband Hagop of Woodland Hills, CA, Zovig Chobanian of Simi Valley, CA and Yervant Vichabian and his wife Erin of North Dighton, MA; loving and cherished grandfather of Hovig, Harout, Aleen and Alexander; and dear brother of Anahid and Arshalous, both of Beirut.





ՀԱՅ - ՌՈՒՍԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏՐՈՍ ԶՅՆՅ. ՇԻԹԻԼԵԱՆ
Սփրինկֆիլտ - Մասաչուսեթս

Վերջերս երբ կը նայի մեր թերթերէն մէկը, աչքիս զարկաւ յօդուած մը «Հայ-Ռուսական Բարեկամութեան» մասին: Յօդուածը գրուած էր միակողմօրէն: Այդ յօդուածը ինձ մղեց, որ գրեմ Հայ-Ռուսական յարաբերութիւններու մասին, նկատի ունենալով տասնըջորս տարիներ Ռուսաստանի մէջ ապրելու հանգամանքը ու ծանօթ ըլլալս Ռուս մշակոյթին, ռուսական մտայնութեան ու հոգեբանութեան եւ Ռուս Ուղղափառ եկեղեցւոյ:

Միայն պիտի ըլլար այդ յարաբերութիւնները կոչել բարեկամութիւն, որովհետեւ անցեալին միշտ չէ որ անոնք այդպիսին եղած են: Կան եւ ճերմակ, եւ սեւ էջեր: Այս յօդուածին նպատակը պատմական մը կատարելը չէ: Այդ միւթին շուրջ շատ բան կայ գրուած: Այս յօդուածը վերջին տարիներուն, ներկայի եւ ապագայի մասին է:

Ռազմա-քաղաքական յարաբերութիւններ. դժուար թէ զսոսկի ոեւէ մէկը, որ չհասկնայ այս յարաբերութիւններուն վճռորոշ հանգամանքը Հայաստանին համար: Հայաստանին եւ Ռուսաստանի միջեւ գոյութիւն ունին ռազմավարական, դաշնակցային յարաբերութիւններ:

Այդպէս չէր սակայն Խորհրդային Միութեան ժամանակ, որուն կեդրոնական կառավարութիւնը ունէր ատրպէյճանամետ դիրքորոշում: Արցախեան հարցին կապակցութեամբ այն օրերու կեդրոնը՝ Մոսկուան, ամէն ձեւերով աջակցեցաւ Ատրպէյճանին: Միամիտութիւն պիտի ըլլար կարծել, թէ Սունգայիթի ջարդը միայն ատրպէյճանցիներուն գործն էր, որովհետեւ 1988 Փետրուարին երբ տեղի ունեցաւ այդ ջարդը, Խորհրդային կեդրոնական կառավարութիւնը դեռ կատարեալ իշխանութիւն ունէր Խորհրդային Ատրպէյճանի վրայ: Մինչեւ Խորհրդային Միութեան փլուզումը՝ 1991-ը, Խորհրդային ՕՍՕՆ-ը (Յատուկ Նշանակութեան Միլիցիայի Ջոկատներ), Ատրպէյճանական ՕՍՕՆ-ի հետ հետեւողականօրէն կը պարպէին Արցախը իր հայկական բնակչութենէն:

Խորհրդային Միութեան փլուզումով ու Ռուսական Դաշնութեան յայտնութեամբ, կացութիւնը կատարելապէս փոխուեցաւ: Նոր Ռուսաստանն հայանպաստ դիրքորոշում ունեցաւ: Լաւ կը յիշեմ 1993-ին, երբ դեռ պատերազմը կը շարունակւէր, այն ժամանակուան Ռուսաստանի պաշտպանութեան նախարար Կրաչովի բարձր զնահատականը մեր բանակի մարտունակութեան եւ կազմակերպութեան մասին: Ու հարցը հո՞ն է: Արցախեան պատերազմին մեր յաղթութիւնը ամէն բանէ առաջ կը պարտինք մենք մեզի: Եթէ ուրիշները չտեսնէին մեր հոգին, մեր վճռակամութիւնը, դժուար թէ մեզի հետ գործ ունենալ կամենային: Բայց անկարելի է նաեւ ժխտել Ռուսաստանի ունեցած կարեւոր դերը Արցախեան յաղթութեան ապահովման մէջ: Մենք պատերազմեցանք ռուսական գէնըով: Եթէ չէմ սխալի 1993-ի Քարունն էր, երբ հայկական զօրքերը բուն Արցախէն դուրս սկսան յաղթանակներ ունենալ ու հողեր նուաճել Ատրպէյճանէն: Թուրքիան սկսաւ զօրքեր տեղաշաժել Հայաստանի սահմաններուն մերձաւորութեամբ եւ ազդարարեց Հայաստանին: Այդ ազդարարութեան յաջորդ օրը իսկ նոյն Կրաչովը եւ Ռուսաստանի այն ժամանակուայ ազգային անվտանգութեան խորհուրդի նախագահ՝ Պուրպուլիսը, չնայապատեալած ու ցուցադրական ձեւով Հայաստան այցելեցին ու քանի մը յայտարարութիւններ ըրին: Ատկէ ետք նման ազդարարութիւններ այլեւս չեղան Թուրքիոյ կողմէ: Միւս կողմէն նոյն Ռուսաստանն էր, որ ճնշում բանեցուց Հայաստանին վրայ, որպէսզի կեցնէ իր զօրքերուն յառաջխաղացումը 1994-ին ու բաւարարուի իր տարած յաղթանակներով, ապա թէ ոչ այսօր հաւանաբար աւելի տարածքներ ազատագրած պիտի ըլլայինք Ատրպէյճանէն:

Գաղտնիք չէ, որ Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւնը կը կազմէ նախկին Խորհրդային Միութեան տարածքը, չհաշուած երեք մերձբալթիկեան հանրապետութիւնները: Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան տոքթրինը հետեւեալը կ'ըսէ. «Ռուսաստանի Դաշնութեան արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւնն է ԱՊՀ-ի (Անկախ Պետութիւններու Համագործակ-

ցութեան) երկիրներուն հետ երկկողմանին եւ բազմակողմանի յարաբերութիւններուն զարգացումը»:

Ռուսաստանը Կովկասը կը նկատէ իր ազդեցութեան կարելոր մէկ գօտին, իր backyard-ը ինչպէս որ պիտի ըսուէր անգլերէն, ուր ներկայ գտնուած է վերջին երկու հարիւր տարիներուն ընթացքին: Այս պատճառով ան այնքան զգայուն ու ջղագրգռուած էր ամերիկեան նախկին վարչակարգին ոտնձգութիւններէն, մասնաւոր Վրաստանի մէջ: 2008-ի Ռուս-Վրացական պատերազմէն ետք Ռուսաստանի դիրքերը անելի զօրացան Կովկասի մէջ, միւս կողմէն այսօրուան ամերիկեան վարչակարգը անելի զգոյշ է միջամտելու Կովկասի մէջ, բան մը որ դարձեալ կը նպաստէ Ռուսաստանի ազդեցութեան հաստատման: Ամերիկեան նախկին վարչակարգի ունեցած ախորժակը Կովկասի նկատմամբ ու անոր ունեցած լաւ յարաբերութիւնները Ատրպէյճանի հետ կը բացատրուէր այդ վարչակարգին մէջ, քարիւղի հետ կապուած գործարար շրջանակներու զօրաւոր ներկայութեամբ (Չէյնի եւ այլն):

Հայաստանի դիրքը երկու թշնամի պետութիւններու միջեւ, որոնք թաքուն օրակարգը ունին զայն ոչնչացնելու, այս հանգամանքը Հայաստանին կը դարձնէ Ռուսաստանի բնական ու ամենէն վստահելի դաշնակիցը Կովկասի մէջ, բան մը որ կարելոր է նաեւ Ռուսաստանի համար: Հայաստանը պէտք ունի Ռուսաստանին իր անվաճառութիւնը ապահովելու համար, իսկ Ռուսաստանն ալ պէտք ունի Հայաստանին որպէս իր ներկայութիւնը պահպանելու Կովկասի մէջ: Յայտնի է, որ Վրաստանի հետ Ռուսաստանի յարաբերութիւնները զրեթէ թշնամական են: Գալով Ատրպէյճանին, չնայած այն բանին որ Ռուսաստանն մեծ հետաքրքրութիւն կը ցուցաբերէ Ատրպէյճանի քարիւղին ու կազին եւ անոնց փոխադրման հնարաւոր ճամբաներուն նկատմամբ, ռազմավարկանօրէն Ռուսաստանն առաւելութիւն կու տայ Հայաստանին: Մինչեւ հիմա Ատրպէյճանի ջանքերը, Ռուսաստանի հետ իր տնտեսական համագործակցութեան որպէս փոխհատուցում, անոր աջակցութիւնը շահելու Արցախի հարցի կապակցութեամբ, անյաջող եղած են: Ատրպէյճանը կ'ուզէ, որ Ռուսաստանը ճնշում բանեցնէ Հայաստանի վրայ, որպէսզի վերջինս զիջումներ կատարէ Արցախեան հարցով, բան մը որ մինչեւ հիմա տեղի չէ ունեցած: Ռուսաստանն քանի մը անգամներ յայտարարած է, որ ճնշումներ պիտի չբանեցնէ կողմերէն որեւէ մէկուն վրայ: Հոս կ'օճակուի ազդակը, եթէ ոչ առաջնային, բայց իր կարելոր տեղը ունի:

Այսօրուայ Ռուսաստանը, անելի քան Խորհրդային Միութեան յաջորդողը ըլլալէն, յաջորդողն է Ռուսական Ցարական Կայսրութեան: Խորհրդային Միութեան գլխաւոր գաղափարախօսութիւնը համայնավարութիւնն էր, ժամանակակից Ռուսաստանի գլխաւոր գաղափարախօսութիւնը՝ ռուսական ազգայնական կայսերականութիւնն է, իր ժամանակակից փոխուած տարբերակով, այսինքն՝ Ռուսաստանի ազդեցութիւնը լայնցնել, մեծցնել ոչ թէ հողեր նուաճելով, այլ այդ ընել տնտեսական ու այլ միջոցներով: Փութիւնը՝ ռուս կայսերապաշտ է եւ ո՛չ համայնավար: Ան հետաքրքրական խօսք մը ունի.«Ով որ չափստար Խորհրդային Միութեան փլուզման համար՝ ան սիրտ չունի. իսկ ով որ կը կարծէ թէ կարելի է նոյն ձեւով Խորհրդային Միութիւնը վերականգնել՝ ան խելք չունի»: Այսինքն՝ անոր կը յուզէ հսկայ ու հզօր պետութեան եւ ոչ թէ համայնավար սիստեմին անկումը, եւ միւս կողմէն ալ յոյս ունի, որ կարելի է ռուսական ազդեցութեան հովանոց մը ստեղծել նախկին Խորհրդային Միութեան տարածքին վրայ, եւ եթէ կարելի է մեծցնել զայն:

Մեծ, հսկայ, լայն հասկացողութիւնները կարելոր տեղ ունին ռուսական մտայնութեան եւ հոգեբանութեան մէջ: Ռուսական ժողովրդական երգերուն մէջ անոնք օգտագործուած են յաճախ: Այս կու գայ Ռուսաստանի տարածքային մեծութեւնն ու անժայրածիր հորիզոններէն: Ցարական Ռուսաստանի քաղաքականութեան մէկ մասն էր.«Ազատագրել քրիստոնեայ ժողովուրդները»: Ուրիշ հարց է, թէ ինչպէս կիրարուցուի այդ քաղաքականութիւնը այն ժամանակ: Այսօրուայ Ռուսաստանի քաղաքականութեան մէջ որոշ չափով դեր կը խաղայ այս կէտը, այսինքն՝ կ'օճակուի ազդակը: Ասոր հետ կապ ունի՝ եւ պետական մակարդակի վրայ, եւ ժողովրդական մակարդակի վրայ, այսօրուայ Ռուսաստանի ինքնագիտակցութեան մէջ կարելոր տեղ գրաւող «Երրորդ Հռոմի» գաղափարախօսութիւնը, որ կու գայ ցարական շրջանէն: Առաջին Հռոմը՝ բուն Հռոմն էր, երկրորդը՝ Բիզանդիոնը, իսկ երրորդը՝ Ռուսաստանն է (Մոսկուան), որ ժառանգորդն է Բիզանդիոնին եւ ուղղափառ շախարհի կեդրոնն է, հետեւաբար հովանաւորողն ու պաշտպանն է ուղղափառ քրիստոնէութեան: Կրճատուած՝ այս է «Երրորդ Հռոմի» գաղափարը: Եթէ ուղղափառ Վրաստանի պարագային այս գաղափարը չազդէր Ռուսաստանի հետ իր յարաբերութիւններուն վրայ, գլխաւորաբար Վրաստանի մերժումին պատճառով, ապա Հայ-Ռուսական յարաբերութիւններուն մէջ ան իր դերը ունի, որովհետեւ ռազմաքաղաքական պայմանները կ'օճեն այդ յարաբերութիւններուն զարգացման:

Ռուսերը համոզուած են, որ մեր Ցեղասպանութեան գլխաւոր պատճառներն էին կրօնական ազդակը եւ հայութեան ռուսական կողմորոշումը Առաջին Համաշխարհային Պատերազմին ժամանակ: Այս կարծիքը տարածուած ու հիմնաւորուած է Ռուս ժողովուրդի տարբեր խաւերուն մէջ, սկսած մտաւորականութենէն անցնելով համայնավարներուն, ազգայնականներուն ու անգամ ծայրայեղ ու արմատական խումբերուն քով: Ռուսերը Հայաստանին կը նային, որպէս բարեկամ երկիր, ոչ միայն ռազմավարական ու տնտեսական առումով, այլ նաեւ՝ կրօնական ու մշակութային: Եւ իսկապէս, այսօր նախկին Խորհրդային հանրապետութիւններէն անելի քան Հայաստանի մէջ կը շարունակուի ռուսերէն լեզուի օգտագործումը, ռուսերէն լեզուն լայնօրէն կը դասաւանդուի դպրոցներուն մէջ, ռուսական հեռատեսիլի կայանները հասանելի են Հայաստանի ամէն կողմերը, ռուսական մշակոյթն ու արուեստը տարածուած ու յարգուած են ինչքան որ էին Խորհրդային Միութեան ժամանակ, բան մը որ ճիշտ հակառակն է օրինակ՝ Ատրպէյճանի մէջ, ուր ռուսական մշակոյթին տեղը գրաւեցին թրքականն ու արեւմտեան մշակոյթները:

Մեր մասին ռուսական դրական հանրային կարծիք ձեւաւորման մէջ, իր կարելոր դերը ունի նաեւ, այսօր Ռուսաստանի մէջ հայ լրագրողներու կարելոր ներկայութիւնը այդ ոլորտին մէջ, որոնցմէ ամենէն յայտնին են՝ “Russia Today” պետական հեռատեսիլի կայանին տնօրէնուհի՝ Մարկարեթա Սիմոնեանը եւ “Ren TV” հեռատեսիլակայանի հաղորդող՝ Տիգրան Քեօտեանը: Հոս անելորդ պիտի չըլլար մշել քանի մը յայտնի հայերու կամ կիսահայերու, որոնք համառուսական ճանաչում կը վայելեն, որպէսզի պատկերացուն մը կազմենք հայերու ներթափանցման մակարդակին Ռուսաստանի կեանքէն ներս. ներկայիս Արտաքին գործոց նախարար եւ հօրը կողմէն հայ՝ Սերկէյ Լաւրովը, Պետական Տումայի նախկին փոխ-նախագահ ու Հիւսիսային Բելոռիսի հետախուզող՝ Արթուր Չիլիկկարովը, քաղաքական վերլուծաբաններ՝ Անդրանիկ Միհրանեանն ու Սերկէյ Գուրզեմեանը, իրաւապաշտպան՝ Անթուան Առաքելեանը, «Սուխոյ» օդանաւերու ձեռնարկութեան տնօրէն՝ Միխայիլ Պոդոսեանը, գործարար՝



Հարժապատկերի «Մոսֆիլմ» սթուտիոյի տնօրէն՝ Կարէն Շահնազարով



«Սուխոյ» օդանաւերու ձեռնարկութեան տնօրէն՝ Սիխայիլ Պօղոսեան



Աւնթ-Փեփըրգպուրկի «Էրմիթաժ» թանգարանի տնօրէն՝ ու մօրը կողմէն հայ՝ Սիխայիլ Փիաթրովսքի

Ռուբէն Վարդանեանը, դերասան Արմէն Ջիգարխանեանը, շարժանկարի բեմադրիչ եւ «Մոսֆիլմ» սթուտիոյի տնօրէն՝ Կարէն Շահնազարովը, Աւնթ-Փեփըրգպուրկի յայտնի «Էրմիթաժ» թանգարանի տնօրէն ու մօրը կողմէն հայ՝ Սիխայիլ Փիաթրովսքին: Ասոր վրայ պէտք է աւելցնել 30-40 հայ ակադեմիկոսներու ներկայութիւնը Ռուսական Գիտութիւններու Ակադեմիային մէջ: Միւս կողմէն բաւական ազդեցիկ կազմակերպութիւն է Արա Աբրահամեանի գլխաւորած «Ռուսահայերու Միութիւնը», որ համա-ռուսական ճանաչում ունի ու մէկ կողմէն կը պաշտպանէ հայ համայնքի շահերը Ռուսաստանի մէջ (մօտաւորապէս երկու միլիոն), եւ միւս կողմէն ալ կը նպաստէ Հայ-ռուսական յարաբերութիւններու զարգացման, օրինակ՝ նոր ռուսական եկեղեցի մը կառուցելով Երեւանի մէջ: Ահա այս լայն ակնոցով պէտք է դիտել Հայ-Ռուսական յարաբերութիւնները այսօր:

Այս տարուան Օգոստոսին նախագահ Մետվետեի կատարած պետական այցը Հայաստան, կարելոր էր քանի մը տեսանկիւնէն: Ամենէն տպաւորիչն այն էր, որ չնայած այն բանին որ Ռուսաստանն դեռ 1995-ին պաշտօնապէս ընդունած ու դատապարտած էր Ցեղասպանութիւնը, Մետվետե օդակայանէն անմիջապէս ետք այցելեց Ծիծեռնակաբերդ: Այս տեղի ունեցաւ ցուցադրականօրէն ու ուղիղ եթերով սփռուեցաւ Հայաստանի պետական հեռատեսիլի կայանէն: Չնայած այն բանին որ ըստ փրոթոքոլի, Ծիծեռնակաբերդ այցելելը պարտադիր մասն է Հայաստան պետական այցելութեան, այսպիսի ցուցադրական ձեւով այդ մէկը կատարելը իր մէջը պատգամ մը կը պարունակէր, որ Ռուսաստանն՝ Ցեղասպանութեան հարցը սակարկութեան առարկայ չի նկատեր ու երբ որ պէտք է բացայայտօրէն պատրաստ է այդ մասին յայտարարելու դարձեալ ու դարձեալ: Ասոր մէջ նաեւ պատգամ մը կար թուրքիոյ, որուն Կովկասի մէջ թափանցելու ճիգերը մանաւանդ վերջին շրջանին, ժխտականօրէն կը նայուի Ռուսաստանի կողմէ: Ռուսաստանն՝ Իրանին նման, երբեք պիտի չուզէր թրքական ազդեցութեան զօրացումը Կովկասի մէջ:

Մետվետեի այցելութեան ժամանակ նաեւ շատ կարելոր պայմանագիրներ ստորագրուեցան, օրինակ՝ Կիւմրիի Ռուսական զինուորական պազայի ժամկէտի երկարաձգումը 25 տարիէն 49 տարի ու մանաւանդ Հայաստանին ժամանակակից զինամթերքով պապահովելու պայմանագիրը: Ատրպէյճանի տարեկան 3.7 պիլիոն ամերիկեան տոլարի «պաշտպանութեան» պիւտճէթի եւ անոր դիմաց Հայաստանի միայն 400 միլիոն պաշտպանութեան պիւտճէթի տարբերութիւնը նկատի առած (9.25/1 համեմատութեամբ), այս վերջին համաձայնութիւնը առաւել կարելորութիւն կը ստանայ: Հայ

լրագրողի մը այն հարցումին, թէ ի՞նչ պիտի ըլլայ Ռուսաստանի հակազդեցութիւնը, եթէ Ղարաբաղի անվտանգութիւնը խաթարուի, Մետվետե պատասխանեց. «Ռուսաստանն մեծ նշանակութիւն կու տայ հարաւային Կովկասին մէջ խաղաղութեան պահպանման, եւ պատերազմական զործողութիւններուն վերսկսիլը անընդունելի կը նկատէ: Մենք պարտաւորութիւններ ունինք մեր դաշնակիցներուն նկատմամբ: Հայաստանը մեր դաշնակիցն է»:

Հետաքրքրական է, որ Հայաստան այցելելէ երկու շաբաթներ ետք, Մետվետեը այցելեց նաեւ Ատրպէյճան, երեւութապէս հաւասարակշռուած քաղաքականութիւն մը ցոյց տալու համար, որուն ընթացքին գլխաւոր ստորագրուածը, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանները կարգաւորող համաձայնութիւնն էր միայն:

Չնայած այս բոլորին Ատրպէյճանը կը շարունակէ իր ազդարարութիւններն ու սադրանքները: Վերջերս՝ Ալիեւի արտառոց յայտարարութիւններէն մէկը այն էր, թէ այսօրուան Հայաստանը ստեղծուած է պատմական ատրպէյճանական հողի վրայ:

Միւս կողմէն՝ աւելի ու աւելի Ռուս պաշտօնական անձինք չեն թաքցներ իրենց կողմորոշումը արտայայտել Ալիեւի ու ատրպէյճանցիներուն ըրած սանձարձակ յայտարարութիւններուն նկատմամբ: Վերջերս ռուսական Տումայի ԱՊՀ-ի հետ յարաբերութիւններու յանձնախումբի փոխ-նախագահ Քոնսթանթին Չաթուլինը յայտարարեց. «Ատրպէյճանը դարձեալ իր բախտին հետ թող չփորձէ խաղալ, նոր պատերազմ մը սկսելով Ղարաբաղի դէմ»:

Այնպէս կ'երեւի. թէ շնորհիւ նիւթական մեծ ներդրումներու Ատրպէյճանը այսօր աւելի լաւ մատակարարուած է ռազմականօրէն ու եթէ ան պատերազմը վերսկսի, Հայաստան Ռուսաստանէն զինամթերքի կարիք պիտի ունենայ: Պատերազմը սկսելու պարագային, Հայ ժողովուրդը իր սեփական ուժերով դարձեալ ի վիճակի պիտի ըլլայ պաշտպանուելու ու նոր յաղթանակներ արձանագրելու:

Հոս կարելոր է յիշել, որ Հայաստանը «Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան» անդամ է՝ Ռուսաստանի, Պելառուսիոյ, Ղազախստանը, Տաճիկիստանի, Ուզպեքիստանի եւ Ղրղըստանի հետ: Ատրպէյճանը այս կազմակերպութեան անդամ չէ: Այս կազմակերպութիւնը ՆԱԹՕ-ի նմանութեամբ ռազմավարական ու զինուորական օրակարգ ունի, որուն մեզի համար ամենէն կարելոր մասը այն է, որ որեւէ յարձակում այս կազմակերպութեան երկիր-

ներէն որեւէ մէկուն վրայ, յարձակում կը համարուի միւս անդամ երկիրներուն վրայ եւ իրաւունք կու տայ անոնց ամէն միջոցներով՝ մինչեւ անգամ ռազմական, պաշտպանելու յարձակման ենթարկուած երկիրը:

Ատրպէյճանը իր գրաւը կը դնէ այն բանին վրայ, որ Արցախը իրաւականօրէն Հայաստանի մաս չի կազմեր եւ Արցախի անկախութիւնը ընդունուած չէ որեւէ երկրի՝ ներառեալ Ռուսաստանի կողմէ, հետեւաբար՝ վերը նշուած պայմանագիրը չի վերաբերիր Արցախին. նաեւ՝ այն բանին վրայ, որ Ռուսաստանն ինչքան հեռու պատրաստ է երթալու Հայաստանին ու Արցախին օժանդակելու մէջ: Յստակ է, որ եկող ամիսները նոր փորձաքար մը պիտի ըլլան Հայ-ռուսական յարաբերութիւններուն համար: Առ այժմ, Ռուսաստան առիթ չէ տուած կասկածելու Հայաստանին հանդէպ իր ունեցած պարտաւորութիւնները կատարելուն մէջ: Հարցը նոյնիսկ կրնայ պատերազմի չհասնիլ, որովհետեւ եթէ պետք է, Ռուսաստանի նման հզօր պետութեան մը համար դիւրին է Ատրպէյճանին հասկցնել, որ պատերազմը վերջինիս օգտին պիտի չվերջանայ:

Այս հատուածը վերջացնելու համար կարելոր է նշել երկու տեսակետեր: Առաջինը՝ որ Ալիեւը պարզապէս կը ստէ եւ մտքին մէջ չունի լայնատարած պատերազմ մը սկսիլը: Քանի մը օրեր առաջ Հայաստանի արտաքին գործոց փոխ-նախարար Շաւարշ Քոչարեանը յայտարարեց. «Ատրպէյճանին Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծում պէտք չէ, որովհետեւ դա Պաքուի ժառանգական ռեժիմի սնուցման աղբիւրն է»: Այս կարծիքին համամիտ են որոշ վերլուծաբաններ: Այս տեսակետը հաստատող տեղեկութիւն կար նաեւ վերջերս WikiLeaks կայքէջին մէջ: Այս կարծիքը կրնայ ճիշդ ըլլալ, բայց Հայաստան եթէ թուլութեան մշան ցոյց տայ, այս սուտը կրնայ իրականութեան վերածուիլ: Երկրորդը՝ հետեւեալն է. Ռուսաստանի մէջ եւ այլուր քաղաքական վերլուծաբաններու կարելոր խումբ մը կայ, որ կը կարծէ թէ Ռուսաստան հետաքրքրուած չէ Արցախեան հարցին վերջնական լուծումով եւ կ'ուզէ ներկայ գոյալիճակը (status quo) պահել, որպէսզի իր ազդեցութեան լծակները պահէ Կովկասի վրայ: Անոնք կը պատճառաբանեն, որ եթէ խաղաղութիւն հաստատուի եւ սահմանները ու ճամբաները բացուին, ու շրջանի երկիրները իրարու հետ եւ արտաքին աշխարհին հետ ուղիղ առեւտուր ունենան, այս մէկը պատճառ պիտի ըլլայ, որ այդ երկիրները աւելի քիչ կախեալ ըլլան Ռուսաստանէն: Եթէ այս կարծիքին ճիշդ ըլլալը ընդունինք, ապա նոյն տրամաբանութեամբ կրնանք հետեւցնել, որ Ռուսաստան հետաքրքրուած չէ նաեւ Հայ-Թրքական մերձեցման փորձերով: Դարձեալ, նոյն տրամաբանութիւնը շարունակելով կրնանք ըսել, որ ինչքան ժամանակ, որ չէ լուծուած Արցախեան հարցը, այս մէկը պատճառ պիտի հանդիսանայ, որ Ատրպէյճանը նայի Ռուսաստանի կողմը, որովհետեւ ան լաւ կը հասկնայ, որ Ղարաբաղեան հարցին լուծման լծակները հիմնականօրէն վերջինիս ձեռքը կը գտնուին, ու այս մէկը կրնայ սահմանափակել Ատրպէյճանին ձգտումը դէպի արեւմուտք ու ՆԱԹՕ: Ռուսաստանի կողմէն նման քաղաքականութեան ուրիշ պատճառ կը համդիսանայ այն հանգամանքը, թէ ո՞ր ճամբայով պիտի անցնին կազուրիները: Եթէ խաղաղութիւնը հաստատուի եւ սահմանները բացուին, ապա այդ ուղին պիտի շրջանցէ Ռուսաստան՝ Կովկասէն ուղիղ անցնելով Թուրքիա, իսկ եթէ սահմանները գոց մնան պիտի աւելնայ այդ ուղիները Ռուսաստանով անցնելու հնարաւորութիւնը: Այս պատճառով Ռուսաստանը դէմ է Nabucco ծրագրին, որ պէտք է անցնի Ատրպէյճան-Վրաստան-Թուրքիայով դէպի Եւրոպա, ծրագիր մը որ Հայաստանն ալ կը շրջանցէ, եւ կը

ջատագովէ Yujni Potok «Հարաւային Հոսք» իր ծրագիրը, որ պէտք է անցնի Ռուսաստանով: Եթէ այս բոլոր ենթադրութիւնները ճիշդ են, մէկ կողմէն ցոյց կու տան Ռուսական նոր կայսերապաշտութեան ներքին ծալքերը, ապա միւս կողմէն այս ռազմավարութիւնը աւելի նպաստաւոր է մեզի քան ատրպէյճանցիներուն, որովհետեւ պատերազմը յաղթողը մենք եղած ենք եւ ժամանակը կ'աշխատի մեր օգտին: Ռուսաստան շատ լաւ կ'ըմբռնէ, թէ ինչ որ ալ ըլլայ վերջ ի վերջոյ Ատրպէյճանը պիտի յարի Թուրքիոյ, իսկ Հայաստանը իրեն՝ Ռուսաստանի: Այս պատճառով Ռուսաստանի մէջ Հայաստանը ընդունուած է անուանել՝ ռազմավարական դաշնակից (strategic ally), իսկ Ատրպէյճանը՝ ռազմավարական գործակից (strategic partner):

Գալով տնտեսական յարաբերութիւններուն կարելի է մատնանշել հետեւեալը: Հասկնալի է, որ Ռուսաստանն Հայաստանին ամենամեծ տնտեսական գործընկերը կը հանդիսանայ: Հայաստան-Ռուսաստան տնտեսական յարաբերութիւններուն մէջ կշիռը ծանրօրէն կը թէքի Ռուսաստանի կողմը: Այս մէկն ալ հասկնալի է, նկատի առնելով Հայաստանի դիրքը ու տկար տնտեսութիւնը: Բայց Ռուսաստանի հանդէպ Հայաստանի ունեցած պարտքերուն որպէս փոխհատուցում ու մեր ազգային ապահովութեան տեսանկիւնէն անգամ տնտեսական շատ կարելոր կէտերու Ռուսաստանի յանձնումը նտահոգութիւն կը յառաջացնէ (Հայաստանի երեք ջերմային էլեքտրակայաններէն ամենամեծ «Հրազդան» կայանին ամբողջական յանձնումը, Հայաստանի կազային ընկերութեան «Հայռուսկազփորմ»-ին մէջ ռուսական «Կազփորմ»-ին տրուած 58 տոկոսի բաժինը, Հայաստանի ամենամեծ սէմէնթի գործարանի ամբողջական յանձնումը...եւ այլն): Ռուսաստանի ներկայութիւնը այնքան ծանրակշիռ է Հայաստանի տնտեսութեան մէջ, որ այնպէս կ'երեւի, եթէ պէտք ըլլայ, Ռուսաստանի համար մեծ դժուարութիւն պիտի չներկայացնէ Հայաստանին պարտադրել որոշումներ, որոնք չեն բխիր վերջինիս շահերէն: Յայտնի է. «Ամբողջ հարստութիւնը մէկ տեղի մէջ մի դներ» արտայայտութիւնը: Լաւ կ'ստի ըլլար, որ Հայաստանը տնտեսական գետնի վրայ կարելի եղածին չափ աւելի հաւասարակշռուած քաղաքականութիւն մը վարեր Ռուսաստանի հետ: Մենք չենք գիտեր ներքին ծալքերը, բայց հարցը դուրսէն այդպէս կ'երեւայ: Կրնայ ըլլալ, որ այդ մէկը կարելի չէ իրագործել: Պարզապէս մտահոգութիւն մըն է, որ կ'ուզենք արտայայտել:

Մշակութային յարաբերութիւններ. Յայտնի է, որ արեւելահայոց վրայ ռուսական մշակոյթը մեծ ազդեցութիւն ունեցած է: Մենք՝ արեւմտահայերս լաւ պատկերացում չունինք այս մասին, եւ նոյնիսկ երբեմն լաւ աչքով չենք նայիր այս հարցին: Ի գուր, որովհետեւ Ռուսաստան համաշխարհային մակարդակով մշակոյթի կեդրոններէն մէկն է՝ Գերմանիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ եւ Անգլիոյ հետ միասին: Փաստօրէն մեր ժողովուրդի կէսը հնարաւորութիւն ունեցած է ուղիղ շփման մէջ ըլլալու եւ օգտուելու համաշխարհային մշակոյթի եւ արուեստի կեդրոններէն մէկուն հետ: Յարական Ռուսաստանի եւ ետքը Խորհրդային Միութեան կազմին մէջ ըլլալու առաւելութիւններէն մէկը այն էր, որ արեւելահայ մեր եղբայրները դիւրութեամբ իրենց ուսումը առնելու հնարաւորութիւն ունեցան Մոսկուայի, Լենինկրատի (ներկայիս՝ Սէնթ Փիթըրզպուրկի) եւ Ռուսաստանի ամենաբարձր ուսումնական հաստատութիւններուն մէջ: Մեր ժողովուրդը ունենալով բարձրագոյն ուսման զօրաւոր ձգտում, կրցաւ առաւելագոյն օգտուիլ հզօր պետութեան ընձեռած հնարաւորութիւններէն: Հոս պէտք է նշել, որ Խորհրդային Հայաստանի միջին կենսա-մակարդակը աւելի բարձր ըլլալուն պատճառով Խորհրդային Միութեան միւս



Չայ-ռուսական մշակութային յարաբերության կոթողներին՝ Վալերի Պրիստով

հանրապետություններին, Հայաստանին դուրս ուսանած հայերուն մեծ մասը ուսումը ավարտելին ետք վերադարձաւ Հայաստան ու նպաստեց Հայաստանի զարգացման գիտութեան, արուեստի ու այլ բնագաւառներուն մէջ:

(Խորհրդային Միութեան ժամանակ ռուսերը սովորութիւն ունէին ըսելու, որ Հայաստանի ու Վրաստանի մէջ դրամատիկութիւն է եւ ոչ ընկերվարութիւն): Նման ցայտուն օրինակներին են Մակար Եկմալեանը, Մարտիրոս Սարեանը, Ալեքսանտր Թամանեանը, Վիքթոր Համբարձումեանը, Պարոյր Սեւակը, Յովհաննէս Շիրազը, Սիլվա Կապուտիկեանը, Մինաս Աւետիսեանը, եւ շատ ուրիշներ: Իսկ մեր մեծութիւններին անոնք, որոնք շարունակեցին ապրիլ Ռուսաստանի մէջ, նմաններուն մէկ ոտքը եղաւ Հայաստանի մէջ. օրինակ՝ Արամ Խաչատուրեանը եւ Աննօ Պապաջանեանը:

Ռուսաստանի տեսանկիւնէն դիտած այս յարաբերութիւնները այնքան լայն են, այնքան խորն են, որ դժուար է պատկերացնել զայն մէկու մը համար, որ ուղղակիօրէն չէ շփուած այս հարցին հետ: Հազարներու կը հասնի հայերու թիւը, որոնք Ռուսաստանի մէջ յայտնի փրօֆէսորներ են, ինստիտուտներու ղեկավարներ են, յայտնի բժիշկներ են, գիտնականներ են, դերասաններ են, երաժիշտներ են, լրագրողներ են...եւայլն, որոնք հայ տաղանդը կը ծառայեցնեն ռուսական մշակոյթին: Մէկ կողմէն եթէ ցաւալի է այս երեւոյթը, բայց միւս կողմէն ալ ցոյց կու տայ հայուն ստեղծագործ ուժը: Սլավոնական ազգերէն ետք մենք ենք, որ կրնանք համեմատուիլ հրեաներուն հետ մնան ներկայութեամբ կարելու տեղերու վրայ: Այստեղէն կու գան զանազան անբնորոշներ, ստեղծուած ռուսերուն կողմէն, ուր կը պատմուի մեր եւ հրեաներուն մրցակցութեան մասին: Հետաքրքրականը այն է, որ միշտ հայն է գերակայութիւն


ունեցողը այս անբնորոշներուն մէջ: Միւս կողմէն, ռուս մտաւորականութիւնը լաւ ծանօթ է մեր մշակոյթին եւ պատմութեան ու կարելի է հաստատել, որ մեր մասին բարձր կարծիք ունի: Երբեմն ինծի զարմանք պատճառած է անոնց ունեցած խորունկ գիտելիքները մեր մասին:

Չայ-ռուսական մշակութային յարաբերութիւններուն կարելու կոթողներէն մէկն է, միջազգային համբաւ ունեցող գրող՝ Վալերի Պրիստովի խմբագրութեամբ հայ բանաստեղծութեան ռուսերէն թարգմանութեամբ հաւաքածոն, որ հրատարակուած է 1916-ին, որուն նախաբանին մէջ Պրիստովը գրած է. «Ժամանակակից մարդուն զարգացածութիւնը ամբողջական ըլլալու համար, անհրաժեշտ է անոր ծանօթ ըլլալը հայ բանաստեղծութեան»:

Դժբախտաբար տնտեսական պատճառներով Ռուսաստանի հետ զանգուածային բնոյթ ունեցող այս յարաբերութիւնները շատ նուազեցան Խորհրդային Միութեան անկումէն ետք: Հայերը այլեւս ի վիճակի չէղան մեծ թիւերով ուսում ստանալ ու վերադառնալ Հայաստան, երեւոյթ մը որ արդէն սկսած է ազդել Հայաստանի ընդհանուր մշակոյթի եւ արուեստի մակարդակի վրայ: Միւս կողմէն, Ռուսաստանի կողմէն ալ Հայաստանի հետ մշակութային կապերը նուազած են: Այս պատճառով, այսօր տարածուած է հայաստանցի մտաւորականներու կողմէն կիսակատակ ձեւով Հայաստանը՝ Աֆղանիստան, Փաքիստան կոչելը, ցոյց տալու համար Հայաստանի ընդհանուր մշակոյթի մակարդակին անկումը: Իսկապէս, որ Հայաստանի մեկուսացած վիճակը մտահոգութիւն կը պատճառէ: Լաւ պիտի ըլլար, որ հնարաւորութիւններ ստեղծուէին, որպէսզի Հայաստանը մշակութային գետնի վրայ իր յարաբերութիւնները վերականգնէր մանաւանդ Ռուսաստանի հետ, նկատի ունենալով վերջինիս մշակոյթին մէջ դեռ գոյութիւն ունեցող խորութիւնը եւ քրիստոնէական հոգին, արժէքներ որոնք հետզհետէ կը նուազին արեւմտեան մշակոյթէն, որ իր կարգին երթալով կը դառնայ աւելի մակերեսային եւ ծայրայեղ ազատամիտ ու աշխարհիկ:

Միջ-եկեղեցական յարաբերութիւններ. Պաշտօնական մակարդակի վրայ լաւ յարաբերութիւններ գոյութիւն ունին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ միջեւ:

Հոս պէտք է նկատի ունենալ հետեւեալը. եթէ մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին շատոնց յատուկ չեն դաւանական վեճերը, ապա Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ համար այդ մէկը դեռ հարց կը հանդիսանայ: Ռուսերուն կարելու մէկ մասը, դեռ արմատական քաղկեդոնական տրամադրութիւններ ունի: Ասոր ամենէն բացայայտ օրինակն էր, երբ 1950-ականներ-



Պետական Տումայի նախկին փոխ-նախագահ ու Հիւսիսային Բեւեռի հետախուզող Արթուր Զիլինկարով

ուն վերջերս Ալեքսեյ Ա. Պատրիարքը Երջանկայիչատակ Վազգեն Ա. Ամենայն Յայոց Կաթողիկոսին պահանջած էր, որ մեր եկեղեցին ենթարկուեր Ռուս Եկեղեցւոյ: 1983-ին, երբ կեանքիս մէջ առաջին անգամ Ռուս Եկեղեցի մտայ, ինծի վերամկրտուիլ առաջարկուած էր:

Բարեբախտաբար վիճակը բարելաւուեցաւ յետագային: 1991-92 երբ Ռուս Եկեղեցւոյ անդամ խումբ մը հայեր եւ կիսահայեր փորձած էին Յայ Ուղղափառ Եկեղեցի մը (քաղկեդոնական) գրանցել ու հիմնադրել Ռուսաստանի մէջ, այս փորձը չէր յաջողած, Ռուս Եկեղեցւոյ հակառակ ըլլալուն շնորհիւ: Այսօրուան Պատրիարք՝ Քիրիլ Ա. եւ Սինոտի անդամներուն մեծ մասը յարգանք կը ցուցաբերեն մեր եկեղեցւոյ հանդէպ: Պատրիարքը՝ այս տարուան Մարտին, Յայաստան կատարած իր այցելութեան ժամանակ, Երեւանի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ տաճարին մէջ տուած իր պատգամի ընթացքին. «Յայաստանի Ուղղափառ ժողովուրդը» արտայայտութիւնը ունեցաւ: Չնայած այն բանին, որ պաշտօնապէս Ռուս Եկեղեցին դեռ մեզի ուղղափառ չի նկատեր, այս հարցը այլեւս դադրած է արգելք հանդիսանալէ երկու եկեղեցիներուն յարաբերութիւններուն վրայ: Այսօրուայ դրութեամբ Ռուս հոգեւորականութեան կարեւոր մէկ մասը մեզի ուղղափառ կը նկատէ, ուրիշ մաս մըն ալ եթէ ոչ ուղղափառ, մեզի ուղղափառութեան շատ մօտիկ կը մտայէ, իսկ երրորդ մաս մըն ալ կայ որ դեռ բացայայտօրէն մեզի հերետիկոս կը կոչէ: Զարգացած հոգեւորականութեան թուին աճումով, աւելի կը շատնան առաջին խումբին ներկայացուցիչները:

Ռուս Եկեղեցին միակ արեւելեան եկեղեցին է, որ ունի ժամանակակից ակադեմիական աստուածաբանական դպրոց ու ասանդոքիւն: Ան եկեղեցի մըն է որ մէկ կողմէն Եւրոպայի մաս կը կազմէ եւ միւս կողմէն ալ Ասիոյ, ինչպէս ինքը՝ Ռուսաստան: Այս համգամանքը կրնայ օգտակար ըլլալ մեզի համար, եթէ ուզենք ստեղծել մեր աստուածաբանական ժամանակակից դպրոցը: Մենք ունինք աստուածաբաններ, անհատներ, որոնք ոչ սիստեմաթիօրէն զբաղուած են այս ուղղութեամբ, բայց չունինք ժամանակակից դպրոց, որ պիտի հասկնալի դարձներ աստուածաբանութիւնը ու Աստուածաշունչը ժամանակակից հայուն եւ մասնագիտականօրէն մեր եկեղեցւոյ տեսակէտը բացատրեր այն բարդ հարցերուն նկատմամբ, որ մեր եկեղեցին ուրիշ եկեղեցիներու հետ կը դիմագրաւէ այսօր: Ահա այս գործին մեզի օգտակար կրնար ըլլար ռուսերուն մեծ փորձառութիւնը, որոնք Եւրոպացի միւս ժողովուրդներէն աւելի մօտիկ են մեզի ուղղափառ եւ ասանդապաշտ ըլլալով:

Միւս կողմէն Ռուս Եկեղեցւոյ վանական մեծ փորձառութիւնը կրնայ մեզի դարձեալ օգտակար ըլլալ: Այսօր մենք միակ ասանդական եկեղեցին ենք, որ չունինք վանքային համակարգ ու վանականութիւն: Մենք ունինք կուսակրօն քահանայութիւն, բայց չունինք վանականութիւն, որ յաւելեալ կոչում կ'ենթադրէ: Այնքան ժամանակ, որ շատ կարեւոր այս հարցը չենք կրնար լուծել, պիտի մնանք մէկ ձեռքով գործող եկեղեցի: Մեր կուսակրօն քահանայութեան որոշ մասին թով եղած են տրամադրութիւններ վանական կեանք ստեղծելու կապակցութեամբ, որ արդիւնք չէ տուած: Աստուածահաճոյ գործ մը պիտի ըլլար վանական շարժումի մը ստեղծումը, օգտուելով Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ եւ ուրիշ ասանդական եկեղեցիներու փորձառութենէն:

Եզրակացութիւն. Նափուէնը ըսած է. «Երկրի մը պատմութիւնը որոշողը անոր աշխարհագրական դիրքն է»: Եթէ այս խօսքերով կրնանք բացատրել մեր պատմութեան ողբերգ-



Արցախի հիմնահարցին գծով տեսակցութիւններ՝ Ալիեւի, Մետվաւետի եւ Սարգսեանի միջեւ

ական էջերը, ապա մեր հերոսութեամբ եւ մշակոյթով կրնանք գտնել մեր գոյատեւման գաղտնիքը: Յստակ է, որ Յայաստանին դիրքը զայն կը դարձնէ Ռուսաստանի բարեկամ ու դաշնակիցը: Այնքան ժամանակ, որ մեր երկու դրացիներու գիտակցութեան մէջ յեղափոխութիւն մը տեղի չունենար եւ անոնք իսկապէս հրաժարուին Յայաստանն ու հայ ժողովուրդը ոչնչացնելու իրենց նպատակէն, Յայ-ռուսական յարաբերութիւնները վճռորոշ պիտի մնան մեզի համար: Արեւմտեան նաւերը չեն, որ բարձրացած են Յայաստանի լեռները, այլ՝ ռուսականները: Բայց միայն ռազմաքաղաքական անկիւնէն նայիլ սխալ պիտի ըլլար այս հարցին: Այսօր Ռուսաստան, Եւրոպայի զարգացող հսկան կ'անուանեն: Քանի մը տասնամեակներ ետք, հաւանաբար Ռուսաստան պիտի դառնայ Եւրոպայի ամենամեծ տնտեսական ուժը ու աշխարհի տնտեսութեան հսկաներէն մէկը: Այնպէս որ, այս յարաբերութիւններուն միշտ պէտք է նայիլ, որպէս հեռանկարային ու մշտական կարեւորութիւն ներկայացնող երեւոյթ: Շատ կարեւոր է, թէ ինչ գործընթացքներ տեղի պիտի ունենան Յայաստանի մէջ եկող տարիներուն:

Առ այժմ, Յայաստանի ղեկավարութեան նեխած ըլլալու հանգամանքը, ժողովուրդի կողմէն իր պետութեան եւ ղեկավարութեան հանդէպ կատարեալ անվստահութիւնը (բան մը որ հակառակն է Ռուսաստանի մէջ, ուր վերջին տարիներուն ժողովուրդի մեծամասնութիւնը կը վստահի իր վերին ղեկավարութեան), մեր եկեղեցւոյ ապրած ճգնաժամը Յայաստանէն ներս, այս բոլորը պատճառ կ'ըլլան, որ այս յարաբերութիւնները աւելի անհաւասարակշռուած ըլլան ի վնաս մեզ: Փաստօրէն այսօրուան դրութեամբ, բացի մեր աշխարհագրական դիրքէն, ուրիշ բան չունինք ներկայացնելու մեր դաշնակիցներուն: Յոս անշուշտ մեզի կ'օգնէ, Ատրպէյճանի շատ աւելի ծանր վիճակը վերը նշուած հարցերուն կապակցութեամբ: Բայց արդե՞օք ճիշդ է, որ մենք մեզ հանգստացնենք նման համեմատութիւններով: Ներքնապէս, ինչքան որ զօրաւոր ըլլանք, այնքան աւելի արժէք պիտի ներկայացնենք նաեւ ուրիշներուն համար, բան մը որ դրականօրէն պիտի ազդէ անոնց հետ մեր յարաբերութիւններուն վրայ, ու կշիռը պիտի աւելի թեքէ մեր կողմը: Ինչքան որ ալ մեծ է տարբերութիւնը Յայաստանի եւ Ռուսաստանի հնարաւորութիւններուն միջեւ, կը կարծեմ որ մեր կողմէն կարելիութիւններ կան, որոնք դեռ չեն օգտագործուած: Այս մէկը աւելի զօրաւոր, արդար, իր ժողովուրդին վստահութիւնը վայելող ու մասնագիտականօրէն աւելի պատրաստուած ղեկավարութիւն կը պահանջէ, բան մը որ յոյսով ենք, թէ տեղի պիտի ունենայ եկող տարիներու ընթացքին: Բայց անկախ ամէն բանէ, Յայ-ռուսական յարաբերութիւնները պիտի շարունակեն մնալ առաջնային մեզի համար: Այս է պատմութեան տրամաբանութիւնը:

ՌՌԻԲԵՆ ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ

ՔԱՂԱՔԱԳԵՏՆ ՈՒ ՉԻՆՈՒՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ

(Մահուան 60-ամեակին առիթով)

ԱՐԾ ԳԱԹՐՃԵԱՆ

Հալեպ – Սուրիա

Օ.Խ.- Յապաղունով լոյս կ'ընծայենք Հ.Յ.Դ. 120-ամեակին առթիւ պատրաստուած, այս հետաքրքրական եւ ամբողջական ուսումնասիրութիւնը: Ռուբէն Փաշայի նուիրուած այս գրութիւնը նկատի առնուած էր »Հայրենիք«ի Յունուար 1, 2011-ի բացառիկ փոխին համար, որ դժբախտաբար թեքնիք պատճառներով, վերջին վայրկեանին չիրատարակուեցաւ:


Հայ ազատամարտի պատմութեան մէջ իր ուրոյն տեղը ունի Ռուբէնը՝ Ռուբէն Տէր Մինասեան կամ Ռուբէն փաշան: Հերոսութիւններով ու բազմաչարչար մաքառումներով լեցուն է այս հայորդիի կեանքը: Ռուբէն այն անհատներէն էր, որուն համար հայրենիքի ազատութիւնը եւ բարօրութիւնը գերագոյն նպատակ էր: Ան հայ յեղափոխական այն սերունդէն էր, որ մաքառեցաւ Արեւմտեան Հայաստանի ազատութեան համար եւ մասնակից դարձաւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան ստեղծման:

Ռուբէն ծնած է 1882 թուականին՝ Ախալքալաք: Իր նախնական ուսումը ստացած է ծննդավայրի ծխական դպրոցը: Այնուհետեւ մեկնած է Էջմիածին եւ ուսումը շարունակած «Գէորգեան» ճեմարանին մէջ: Պատանի տարիքէն Ռուբէնը կ'երազէր «Հայաստան» երթալ: Ան կրցած էր հասկնալ, թէ բուն Հայաստանը ռուսական սահմանի միւս կողմն է, այսինքն՝ Տաճկահայաստանը:

Քսան տարեկանին կը մտնէ ռուսական բանակի մէջ՝ պահեստի սպայի աստիճանով: Ապա կ'անցնի Մոսկուա, որպէս «Լազարեան» ճեմարանի բարձրագոյն դասընթացի ուսանող: Մոսկուայի մէջ եղած ժամանակ կը մասնակցի յեղափոխական ուսանողներու խմբական գործունէութեան եւ կ'անդամագրուի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերը:

Ռուբէն, Հ. Յ. Դաշնակցութեան շարքերուն մէջ առաջին իսկ օրէն կրցաւ աչքառու դէմք դառնալ իր կուսակցական պատասխանատուութիւններու իրագործման մէջ:

1903-ին Մոսկուայէն կ'անցնի Թիֆլիս՝ երկիր անցնելու որոշումով: Այդ օրերուն հայ յեղափոխականները երկու հնոցներ ունէին, Սասուն եւ Պաթում, Ռուբէն կը նախընտրէ Սասունը: Իր առաջին գործունէութեան փորձառական դաշտը եղաւ Կարսը՝ Արամի շունչի տակ, որ այդ օրերուն Կարսի կենդրոնական դէմքն էր, Ռուբէն ազդուեցաւ անոր յեղափոխական գաղափարներէն:



1905-ին անլի փորձուած ու յեղափոխութեան հնոցին մէջ դարբնուած Ռուբէնը կը մեկնի Վան, ուր Իշխանի հետ կը գրադի Լեռնապարի շրջանի կազմակերպութեամբ: Արամը կ'անցնի Վան, իսկ Ռուբէնը Վարդան Շահպազի մօտ՝ լեռները, այնտեղ սորվելու ֆետայական կեանք:

Ռուբէնի յեղափոխական կեանքը կամաւոր նահատակութիւն էր, ան կը գործէր սուրբ գաղափարի համար, նախնորեց անցնիլ Սասուն ու Տարօն եւ իր մասնակցութիւնը բերել իր հարազատ ժողովուրդին: Տարօնի մէջ ան կ'ըլլայ յեղափոխական գործունէութեան ղեկավար: Գէորգ Չաւուշի հետ անցնելով շրջանի մարտական ուժերու գլուխը, կը վերակազմէ ֆետայական շարժումը, կը մասնակցի բազմաթիւ հերոսական կռիւներու, որոնց գլխավորներէն է Սուլուխի կռիւը, ուր կը նահատակուի Սասնոյ արծիւ Գէորգ Չաւուշը:



Ռուբեն Փաշա (ձախեն աջ նստած՝ հինգերորդ) ... Գ.Յ.Դաշնակցության Ը. Ընդհանուր ժողովին՝ Կարինի մեջ, Յուլիս 1914-ին

1907-ի Մայիս 27-ին, Գեորգ Չաուռչե և Ռուբեն իրենց զինուորներով, գաղտնի գործով հաւաքուած էին Սուլուխ: Երկու ժամ անց զիւրը կը շրջապատեն թուրքերը: Սուլուխի կռիւը սկսած է նոյն օրը և տեւած մինչեւ Մայիս 28-ի առաւօտ:

1908-ին կը հռչակուի Օսմանեան Սահմանադրութիւնը և կը դադրի յեղափոխական գործունէութիւնը: Սակայն, Ռուբեն համոզուած ըլլալով, որ թուրքիոյ կառավարութեան պէտք չէ վստահիլ և պէտք է զբաղուիլ կուսակցական կազմակերպչական գործունէութեամբ:

1909-ին, Ռուբեն կ'անցնի Վառնա և կը մասնակցի Գ. Յ. Դաշնակցութեան 7-րդ Ընդհանուր ժողովին: Ան իր ուսումը շարունակելու համար կը մեկնի ժընեւ՝ քիմիաբանութիւն ուսանելու համար և կը մնայ մինչեւ 1913: Նոյն թուականին կուսակցութեան հրահանգով անաւարտ ձգելով ուսումը՝ կը վերադառնայ Տարօն և կ'անցնի կազմակերպչական աշխատանքի: Ռուբեն, ընդհանուր պատասխանատուն էր Դուրան-բարձրաւանդակի և Տարօն աշխարհի Գ. Յ. Դաշնակցութեան:

1914-ին կը պայթի Առաջին աշխարհամարտը, որուն կը յաջորդէ 1915-ի Գայոց Ցեղասպանութիւնը: Տարօնի ժողովուրդը զոհ չդառնալու համար՝ Ռուբենի գլխաւորութեամբ շրջանի հայութիւնը կը դիմէ ինքնապաշտպանութեան: Սոյն հերոսամարտը կը տեւէ եօթ ամիս, որմէ ետք Ռուբեն կ'անցնի Կովկաս:

1917-ին տեղի կ'ունենայ Ռուսաստանի յեղափոխութիւնը: Կը կ'ազմուի Անդրկովկասի կառավարման համար Սէյմը: Ռուբենը ևս կը մասնակցի Սէյմի աշխատանքներուն և կ'անդամակցի Գայոց ազգային խորհուրդին:

1918-ին Զայաստանի Զանրապետութեան հռչակումէն յետոյ, Ռուբեն կ'ընտրուի Զայաստանի խորհրդարանի անդամ: Զայաստանի Զանրապետութեան օրով ան կ'ըլլայ զօր. Արարատեանի օգնական, իսկ 1920-ի Մայիսին՝ Բիւրօ-կառավարութեան զինուորական նախարար:

Ռուբեն Զայաստանի Զանրապետութեան օրերուն եղաւ ներքին գործոց և ապա զինուորական նախարար ան ո՛չ միայն հիմը դրաւ հայկական պետական բանակին ու կազմակերպեց զայն, այլեւ մասնաւորաբար մեծ և անչափելի եղաւ անոր դերը թէ՛ Զայաստանի ներքին կայունացումին և թէ՛ մեր հայրենիքի հայկականացումի դժուար գործին մէջ:

1920-ին Ռուբեն, Լեւոն Քալանթարեանի հետ կը մեկնի Բաշ Գեառնի, այնտեղ գտնուող հայդուկներուն զգաստութեան բերելու, որպէսզի չենթարկուին պոլշեիկեան լուծին: Զոնկէ կ'անցնի Սիւնիք ու կը ստանձնէ նախագահութիւնը ինքնավար Սիւնիքի կառավարութեան:

Զայաստանի Զանրապետութեան անկումէն յետոյ՝ Ռուբեն կ'անցնի Իրան, ապա՝ Ֆրանսա, Լիբանան, Սուրիա, Եգիպտոս:

Երեսուն տարի յաջորդաբար Ռուբեն եղած է Զայ Ցեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի անդամ: Ռուբեն, միջազգային դիւանագիտական ընկալման առումով՝ կատարեալ մասնագէտ էր նաեւ Միջին Արեւելեան տարածաշրջանի քաղաքական հարցերուն:

Վտարանդի կեանք վարելով սփիւռքահայ տարբեր համայնքներու մէջ՝ Ռուբեն միշտ հաւատարիմ կը մնայ Գ. Յ. Դաշնակցութեան գաղափարներուն ու ամբողջ կեանքը կը

նուիրել ազատագրական ու յեղափոխական գործերուն: Ան, 1948-ին վերադառնալով Ֆրանսա, կը մահանայ 1951 Նոյեմբեր 27-ին:

Ռուբենի կեանքն ու գործունեութիւնը եթէ լուսարծակի տակ ամենելու ըլլանք, անվարանօրէն զինք կ'որակենք, ռազմական ու կուսակցական գործիչ, եւ քաղաքագետ, եւ պետականակերտ անձնաւորութիւն: Ռազմական գործիչի առունով ան անցած է շարքային ֆետայիէն մինչեւ ռազմական նախարարի ճանապարհը: Կուսակցական գործիչի առունով եղած է գաւառական կուսակցական պատասխանատուութենէ մինչեւ ԶԳԲ Բիւրոյի անդամ:

Եթէ Ռուբենը ընդունինք որպէս պետականակերտ անձնաւորութիւն, ապա այս առունով յատկապէս պէտք է արժեւորել անոր դերը Հայաստանի մէջ 1917-1920 թուականներուն թուրք-թաթարական խռովութիւններու ճնշման եւ հայ գաղթականներու վերաբնակեցման գործին մէջ, որուն արդիւնքով հնարաւոր եղաւ ստեղծել ազգային տեսանկիւնէ համեմատաբար միատարր պետութիւն: Ռուբենը եղած է տաղանդաւոր քաղաքագետ. ան ազգային գաղափարախօսութեան, երկրառազմավարութեան խոշոր տեսաբան էր:

Սփիւռքի մէջ Ռուբեն Տէր Մինասեան կուսակցական-կազմակերպական գործին զուգահեռ տասնամեակներ շարունակ սիրով եւ նուիրումով զբաղ է իր յուշերը՝ «Հայ յեղափոխականի մը յիշատակները», պատմութիւնը, այն փառաւոր սերունդին, որ «... մէկ անգամ միայն ծնաւ մեր կեանքին մէջ եւ երկրորդ անգամ այլեւս աշխարհ չտեսաւ»: Իր յուշերուն մէջ Ռուբեն մեզի կը ներկայանայ տաղանդաւոր գրողի յատուկ դիտելու կարողութեամբ ու զրական ճաշակով, խոր վերլուծութիւններ ընելու բացառիկ կարողութեամբ, պատմելու անկաշկանդ ոճով եւ հարուստ լեզուով: Իրաւամբ պէտք է ըսել, որ Ռուբենի «Յիշատակներուն մէջ» յարութիւն կ'առնէ ֆետայական շարժման ողջ դիւցագներգութիւնը, հերոսութեան եւ մարտնչունի փառաւոր պատմութիւնը: Իր յուշերուն մէջ Ռուբենը լաւագոյն վերլուծութեան կ'ենթարկէ հայ ժողովուրդի հոգեբանական գիծերը: Ռուբենի յուշերը նաեւ կարելի է համարել ինքնաքննադատութեան փորձ:

Ռուբենի յուշերը՝ «Հայ յեղափոխականի մը յիշատակարանը» 7 հատորով, մեր ազատագրական պայքարի պատմագրութեան եւ յեղափոխական զրականութեան մէջ բացառիկ արժէք կը ներկայացնէ՝ թէ՛ որպէս փաստացի վկայութիւն՝ դէպքերու ու դէմքերու, եւ թէ՛ որպէս յեղափոխական մտքերու հաւաքածոյ:

Եթէ սկսինք Ռուբենի «ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՄԱԿԱՆԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ» եօթ հատոր մատենաշարի ակնարկութիւն մը ընել,

ապա անհրաժեշտ է ըսել, որ ան առաջին հատորով կը ներկայացնէ ԿԱՐՍԻ ՀՆՈՑԻՆ ՄԵԶ (1904) ժամանակահատուածը: Իր բովանդակութեամբ, իրականութեամբ, պարզ ու հրապուրիչ լեզուով գրուած այս յիշատակները ազգային-յեղափոխական փիլիսոփայութեան, ինչպէս նաեւ ներշնչման ու տեղեկութիւններու աղբիւր են հայ պատանդին, երիտասարդին եւ մտաւորականին համար: Երկրորդով կը ներկայացնէ ԴԷՊԻ ԵՐԿԻՐ կատարուած յեղափոխական գործունեութիւնը, զխաւորաբար Վանի, Լեռնապարի եւ Տարօնի շրջաններուն մէջ: Այս հատորին մէջ եւս պարզ ու հրապուրիչ լեզուով ներկայացուած է ազգային-յեղափոխական գործունեութեան յիշատակները: Երրորդով կը ներկայացնէ հեղինակին իր իսկ բառերով «19-րդ դարու կէտերէն սկսեալ մինչեւ 1906-ի Յուլիս ամսուան Տարօնի յեղափոխական անցեալը»:

Վեցերորդը՝ յեղափոխական գործունեութեան ժամանակագրական շարունակութիւնն է հինգերորդ հատորին եւ կը ներկայացնէ 1909 ժամանակաշրջանը՝ ԿԱՐՍԵՆ ՊՈԼԻՍ: Եօթերորդը կազմուած է երեք մասերէ, որոնք իրարմէ անջատ են եւ շատ տարբեր: Առաջինը՝ արտասահմանի մէջ 1909-ին: Երկրորդը՝ սասունցի խմբապետ Մուշեղին կատարած պատումը 1913-1919 տարիներու փոթորիկին մասին: Իսկ երրորդը՝ Հայաստանի Ա. Հանրապետութիւնը, մասնաւորապէս Նոյեմբեր 1919 Ապրիլ 1920 շրջանը:

Առանձին ուշադրութեան արժանի են քննադատութիւնները, հայ-թրքական յարաբերութիւններու վերաբերեալ Ռուբենի աշխատութիւնները:

Այսպէս իւրայատուկ փորձ է «Հայ-թրքական կնճիռը» աշխատութիւնը:

Աշխատութեան սկիզբը Ռուբեն կ'անդրադառնայ թուրք մտաւորականութեան յայտնած այն կարծիքին, թէ հայերը եւ թուրքերը սկիզբը իրարու հետ հաշտ են: Թուրքերը կը մեղադրեն, որ հետագային հայերը ըմբոստացած են, որուն համար ալ կոտորուած են (նաեւ թուրքերը): Թուրքերու միւս մեղադրանքը այն է, թէ իբր «հայկական յեղափոխութիւնը բնական հետեւանք չէ տաճիկ կառավարութեան եւ իսլամութեան հալածանքներու ու բռնութիւններու, ոչ ալ հայ ժողովուրդի ինքնագիտակցութեան արդիւնք է, այլ ան արհեստականօրէն մտած է հայ ժողովուրդի մէջ արտաքին գրգռման շնորհիւ, զխաւորապէս ցարական Ռուսիոյ եւ յատկապէս ռուսական եւ պարսկական հայերու միջոցով»:

Որպէս պատասխան թուրք ղեկավարներու այն մեղադրանքին, որ իբր թէ հայերը պատճառ դարձած են Թուրքիոյ ներքին գործերուն Ռուսաստանի եւ եւրոպական պետութիւններու միջամտութեան եւ այդպիսով քայքայած են Օսմանեան պետութիւնը, Ռուբենը մասնաւորապէս կը մշէ. «... հայկական շարժումներու նպատակը այն չէր, որ Կիպրոսը անգլիացիին տրուի, երկաթուղիները՝ ռուսին,



Նստած՝ Արշակ Վռամեանի կողքին եւ ծախեն աջ (տղքի) Վահան Մինախորեան եւ Սիմոն Վրացեան

մենաշնորհները՝ օտարին, որոնք այդ բոլորը պիտի ստանային, պիտի չօգտագործեին կամ պիտի օգտագործեին յօգուտ իրենց շահերուն: Այլ շարժումներու նպատակն էր, որ ինքը՝ հայ ժողովուրդը, իր բուն հայրենիքի մէջ մարդկային իրաւունքներու տիրանայ, որ Արեւելքը քունեն արթննայ, որ արեւելքցիները եւ ոչ թէ օտարները ստանան եւ վայելեն իրենց հայրենիքի բարիքները»:

Այս առումով Ռուբեն այն եզրակացութեան կը յանգի, որ ժողովուրդներու բնաջնջումով կարելի չէ ուժեղ եւ ազատ Թուրքիա ստեղծել: Կարելի չէ Հայաստանի խորտակման գնով Թուրքիան քայքայող ու մասնատող Ռուսաստանի եւ Եւրոպական պետութիւններու միջամտութիւններու պատճառները վերացնել: Միջամտութեան համար Հայաստան չըլլայ, սակայն միշտ ալ կ'ըլլան եւ կը գտնուին յայտնի ու անյայտ շատ միջոցներ, քանի որ չէ գտնուած այն արդար հիմունքը, որուն «վրայ պիտի կառուցուի բոլոր արեւելքցիներու համար ստեղծուած Արեւելքի ազատագրութեան հրաշակերտ շէնքը»: Աշխատութեան մէջ Ռուբեն կը բերէ իր կարծիքով Թուրքիոյ անդամահատութեան, բարոյական եւ տնտեսական անկման ու կազմալուծման իսկական հիմնական պատճառները.

- 1.- տիրող ազգի գերիշխանութիւնը,
- 2.- համախլամութիւնը (փանխլամիզմ) իբրեւ պետութեան հիմք,
- 3.- համասոմանցիութիւն (փանսոմանիզմ),
- 4.- համաթուրանականութիւն (փանթուրանիզմ):

Վերջապէս, անդրադառնալով հայ-թուրք յարաբերութիւններու ապագային, Ռուբենը անխուսափելի անհրաժեշտութիւն կը համարէ դասեր քաղել անցեալի սխալներէ եւ համապատասխան քայլերու ձեռնարկել: Որպէսզի հնարաւոր դառնայ հայերու եւ թուրքերու համատեղ ու հաշտ գոյութիւնը, ըստ Ռուբենի, թուրքերը պէտք է հրաժարին «տիրող ժողովուրդ» ըլլալու սկզբունքէն, պետութեան առաջադիմութիւն կասեցնող համախլամական գաղափարներէ, պետութիւնը պառակտող համասոմանցիութեան գաղափարներէ, պետութիւնը արկածախնդրութեան զոհ դարձնող համաթուրանական գաղափարներէ, ինչպէս նաեւ Քեմալի որդեգրած «փանթուրք»ական գաղափարներէ:

Ուշադրութեան արժանի է նաեւ «Հայրենիք» ամսագրի մէջ հրատարակուած Ռուբենի «Նորագոյն Թուրքիան եւ իր ձեւափոխումները» յօդուածը, որ կը վերաբերի Թուրքիոյ մէջ քեմալական բարեփոխումներուն: Յօդուածագիրը նախ կը փորձէ ներկայացնել Սուսթաֆա Քեմալի կողմէ կատարուած փոփոխութիւններու հիմնական նպատակները.

ա.- Թուրքիոյ մէջ վերացնել ապագային իսլամ օթթոման հասկացողութիւնը եւ զայն փոխարինել թուրք ազգային ոգիով,

- բ.- վերացնել օսմանեան առածական, անշօշափելի հայրենիքի գաղափարը եւ զայն փոխարինել թուրք ազգային հայրենիքի գաղափարով,
- գ.- Անատոլիոյ դարձնել Թուրքիա, իսկ թուրքը դարձնել արդիական ազգ յառաջդիմած կեանքի բոլոր ճիւղերու մէջ, ընդունական ինքնուրոյն ապրելու առանց զգալու ուրիշներու օգնութեան կարիքը,
- դ.- թուրք ազգը հզօրացնել թիւով, որակով, ուժով իր գոյութիւնը անկախ պահելու եւ զգալի դարձնելու աշխարհին:

Յօդուածին մէջ Ռուբեն կ'արձանագրէ այն փաստը, որ քեմալական կամ փանթուրանական դեկաւարներու մեծ մասը թրքական ծագում չունին, աւելին՝ անոնց հայրերը կամ մեծ հայրերը «նոյնիսկ ծանօթ չեն թուրք լեզուին եւ գաղափարին»: Հեղինակը կը հետեւցնէ, որ երբ այս ծագումով մարդիկ են թրքութեան գաղափարն առաջ մղողները, այստեղ «կարելի չէ որոնել ցեղային արեան ծայնի արձագանգը, այլ ուրիշ բան մը»:



Չախին...Ռուբեն եւ Համօ Օհանջանեանի հետ

Ըստ Ռուբենի՝ քեմալական Թուրքիոյ «թուրք» ազգային մտածելակերպը հեռու է զուտ ազգային, ցեղային, ինքնամփոփ գաղափար ըլլալէ: Ռուբեն կը գրէ. «Ըստ էութեան, քեմալական «թուրք» հասկացողութիւնը նոյնքան հաւաքական, ընդհանուր անուն է, որքան Սուլթան Համիտի «խլամ» կամ Միդհատ փաշայի «օթթոման», «օսմանցի» գաղափարաբանութիւնը, միայն այն տարբերութեամբ, որ Սուլթան Համիտը երեսը դարձուցած էր դէպի Մէքքէ, Քեմալն ալ երեսը դարձուցած է դէպի Թաւրիզ, Սամարղանտ»:

Կարելի է ըսել, որ այսպիսով Ռուբեն ցոյց կու տայ հետեւեալը. Քեմալի բարեփոխումները աւելի շուտ փանթուրքիզմի ուժեղացումին նպատակաւորուած էին, եւ ոչ թէ Թուրքիան Եւրոպականացնելուն, ինչպէս կը մշտն թուրքերը:

«Հայ-թրքական կնճիռը»ի եւ «Նորագոյն Թուրքիան եւ իր ձեւափոխումները»ի տրամաբանական շարունակութիւն կարելի է համարել Ռուբենի «Ռ՛ր կ'երթայ Թուրքիան աշխատութիւնը: Այս վերջինը գրուած է նախորդներու ոգիով, սակայն այստեղ հեղինակը կը կատարէ նոր եւ չափազանց ուշագրաւ ընդհանրացումներ:

Այլ յօդուածի մը մէջ «Իրան եւ Թուրան կամ արիական ճակատը թուրանական վտանգի համդէպ», Ռուբեն նախ կը խօսի հայերու եւ պարսիկներու դարերու խորքէն եկող բարեկամութեան մասին, որ կը բխի երկու ժողովուրդներու փոխադարձ վստահութենէ: Այդ փոխադարձ վստահութիւնը, ըստ Ռուբենի, ոչ այդքան քաղաքական շահերու, որքան երկու արիական ժողովուրդներու ցեղային բնագոյնի հետեւանք է: Իրանի եւ Թուրքիոյ միջեւ եղած հակամարտութիւնը Ռուբեն կը պայմանաւորէ Թուրքիոյ որդեգրած փանթուրանիզմի գաղափարախօսութեամբ, որու

իրականացման ճանապարհին մեծագույն խոչընդոտ է Իրանը: Իրանն ալ իր հերթին պատրաստ է դիմագրավելու թուրանականության նետած մարտահրավերը:

Փանթուրքիզմի վտանգի հրատապության առումով կարելու է նաեւ Ռուբենի՝ «Հայաստան եւ Ատրպէյճան» յօդուածը: Ռուբեն Ուտիք եւ Աղուանք երկիրները Ատրպէյճան կոչելու թիրիմացութիւնը տգիտութեան հետեւանք չի համարեր, այլ՝ մտածուած որոշ քաղաքական ձգտումներու: Ատրպէյճան բառը ըստ էութեան միայն անուն չէ, այլ բնորոշումը քաղաքական ծրագրի մը: Հակառակ, աղուանի եւ ուտեաց ժողովուրդներու աւելի փոքրաթիւ ըլլալուն, հայերը յարգանքով մօտեցած են անոնց ինքնուրոյնութեան: Այս երկիրները շատ անգամ զօրքով օգնած են իրարու՝ ելլելով հաւաքական ապահովութեան անհրաժեշտութենէ: Այս ժողովուրդներու համակեցութիւնը նպատակայարմար եղած է նաեւ տնտեսական տեսակետէ:

Սակայն այլ վիճակ է «Ատրպէյճանի» ի յայտ գալէն յետոյ: Այսօր ալ, այլ է Ատրպէյճանի նախընտրած ուղին: Ռուբենի բնորոշումով «մեր հիւսիսի կողմը ստեղծուած է ժողովրդական զանգուած մը, որ իր քաղաքական օրինետացիայով բոլորովին տարբեր է Աղուանէ եւ Ուտեացի ուղղութիւններէն, եւ թէ այս նոր օրինետացիան հիմնապէս դէմ է հայերու շահերուն եւ նոյնիսկ գոյութեան»: Այս ուղղութեամբ ձգտում կայ Հայաստանի վրայէն միամալ թուրքերուն: Որպէս եզրակացութիւն՝ Ռուբենը Ատրպէյճանը կը համարէ փանթուրքիզմի առաջապահը, որ վտանգ է Հայաստանի եւ հայ ժողովուրդի համար: Իսկ հայ ժողովուրդին նպատակը պէտք է ըլլայ Հայաստանին միացնել անոր անբաժան մասերը, որոնք կը գտնուին Ատրպէյճանի տիրապետութեան տակ:

Ռուբենի յաջորդ յօդուածը՝ «Իրանի եւ Թուրանի բարենորոգումներու զուգակշիռը»-ի մէջ հեղինակը համեմատութեան մէջ կը դնէ Իրանի եւ Թուրքիոյ մէջ իրականացուող բարենորոգումները: Այստեղ Ռուբենի նկատած ամենակարեւոր հանգամանքը այն է, որ մինչ Թուրքիոյ մէջ փորձ կը կատարուի վերէն վար բարենորոգումներ կատարել, Իրանի մէջ ընդհակառակը վարէն, ժողովրդական խաւերէն են բարենորոգումներ կը թելադրուի դէպի վեր:

«Հայրենիք» ամսագրի 1931, Մարտի թիւին մէջ լոյս տեսած «Սիոնական աշխարհի մէջ» յօդուածին մէջ Ռուբեն կը նկարագրէ Պաղեստինի տարածութիւնը եւ ազգաբնակչութիւնը, հրեայ սիոնականներու հողային պահանջները:

Իր հրապարակագրութեան մէջ Ռուբեն տեղ յատկացուցած է նաեւ արաբներուն: «Արաբական աշխարհի մէջ», «Սուրիան եւ արաբները» յօդուածներուն մէջ, ան, կը վերլուծէ արաբ ժողովուրդներու անցած պատմական ուղին, անոր մղած պայքարը Օսմանեան կայսրութեան դէմ, այդ պայքարի շահարկումը եւրոպական մեծ պետութիւններու կողմէ: Ռուբեն կը ներկայացնէ նաեւ արաբ ժողովուրդի միասնականութեան գաղափարախօսութիւնը:

Ըստ Ռուբենի ուսանելին հայերու համար այն է, որ ըլլալով դրացի արաբ ժողովուրդին, պէտք է ճշդէն իրենց վերաբերմունքը դէպի այդ ժողովուրդը եւ երկիրները, ուր ապրող հազարաւոր հայորդիներ իրենց գոյութեան համար երախտապարտ են արաբներուն: Ռուբեն կը գրէ. «Մեր պատմութեան մէջ պիտի գտնենք ուսանելի կէտեր, եւ երբ Բագրատունիներու ճկունութեան տիրանանք, լաւ հարեւաններ պիտի գտնենք յանձինս արաբներու, եւ գուցէ շահակից դառնանք այդ խնդիրներու մէջ, որոնք կը սպառ-

ան հայ ու արաբ ժողովուրդներուն նոյն ատեն»:

Այստեղ լուսարծակի տակ կ'առնենք Ռուբենի հրապարակագրութեան այն մասը, որ կը վերաբերի յատկապէս Հայաստանին, անոր կորսնցուցած տարածքներուն, անոնց նշանակութեան, Միացեալ Հայաստանի գաղափարին, Հայաստանի ռազմավարական դիրքին:

Քաղաքագտ-վերլուծաբանը Հայաստանի համար Նախիջեւանի ունեցած կարելուր նշանակութեան մասին կը խօսի. «Շարուր-Նախիջեւան եւ թուրք-թաթարական քաղաքականութիւնը» եւ «Նախկարայր եւ անոր նշանակութիւնը Հայաստանի համար» յօդուածի մէջ: Ռուբեն, Շարուր-Նախիջեւանի մէջ եղած կռիւներու հիմնական պատճառը կը համարէ այն, որ «թուրքերը եւ թաթարները ամէն գնով կը ճգնին այդ գաւառները խարխիս դարձնել համախլամական եւ համաթուրանական գաղափարներու»: Նախկարայի (Նախիջեւանի ինքնավար հանրապետութիւն) ստեղծումի պատճառը Ռուբեն կը գտնէ Նախիջեւան գաւառի աշխարհագրական դիրքի մէջ: Այս ան տարածքն է, ուր խաչմերուկի կը հանդիպին Ատրպէյճանէն, Պարսկաստանէն, Թուրքիայէն եւ Ռուսաստանէն եկող ճանապարհները:

«Նախկարայր եւ անոր նշանակութիւնը Հայաստանի համար» յօդուածին մէջ Ռուբեն վիճակագրական փաստերով ցոյց կու տայ Նախիջեւանի Հայաստանին միացման անհրաժեշտութիւնը թէ՛ տնտեսական, թէ՛ աշխարհագրական առումով: Այդ մեծ ազդակ կը համարէ Հայաստանի տնտեսութեան զարգացումին, բնակչութեան համաչափ տեղաբաշխման եւ սփիւռքահայութեան հայրենիք վերադարձին:

Նախիջեւանի միացումը Հայաստանին, Ռուբենը կարելուր կը համարէ նաեւ ժողովուրդի անվտանգութեան տեսակետէ, խնդիր, որ այսօր ալ առկայ է եւ իրմէ մեծ հրատապութիւն կը ներկայացնէ:

Շատ ուշագրաւ են նոյնպէս Ռուբենի «Գանձակ-Ղարաբաղի վէճը», «Հայաստանը Անդրկովկասեան Դաշնակցութեան մէջ», «Չանգեզուրի պայքարը» եւ «Ախալքալաքի պայքարը» յօդուածները:

Վերոնշեալ յօդուածները ամէն մէկը առանձին առանձին, զուտ վերլուծողական եւ լուրջ հիմնաւորումներով կը բացատրուի, որպէս աշխարհագրական, քաղաքական, հայկական հողամաս ու մանաւանդ տարածաշրջանի եւ վրացիներու (համայնավարներու) եւ թուրք-թաթարական վարած հայալած քաղաքականութեան մասին:

Իսկ «Միացեալ Հայաստանը» յօդուածին մէջ Ռուբեն կը խօսի Միացեալ Հայաստանի ծրագրի գաղափարի մասին: Միացեալ Հայաստանի ծրագիրը ըստ Ռուբենի կը բխի հետեւեալ հիմնական պատճառներէ.

- 1.- հայ ժողովուրդի եւ Հայաստանի պատմութենէ,
- 2.- հայկական յեղափոխական շարժման հետեւողական ընթացքէն,
- 3.- հայ ժողովուրդի եւ սերունդներու անապաստան, հայրենագուրկ վիճակէն,
- 4.- ներկայ Հայաստանի անվտանգութեան պահանջէ,
- 5.- Հայաստանի աշխարհագրական եւ տնտեսական ամբողջութիւն կազմելու ձգտումէ,
- 6.- Առաջաւոր Ասիոյ մէջ վերջնականօրէն խաղաղութիւն հաստատելու եւ ամէն գոյնի աշխարհակալութիւններուն եւ խաղերուն վերջ տալու պահանջներէ:

Իսկ «Վասպուրականը իբրև անկլինաքար Միացեալ Հայաստանի» յօդուածին մէջ Ռուբէն կը փորձէ քանձրացնել, շօշափելի ձեւով կը պատկերացնէ Միացեալ Հայաստանի գաղափարը եւ հիմնաւորել գայն սերունդներու ուժի ու կարողութիւններու տուեալներով:

Ռուբէն, Հայաստանի գրաւած աշխարհագրական դիրքի կարեւորութեան մասին կը խօսի «Հայաստանի արեւելքը (Բագրեւանդ եւ Սուրմալու)» յօդուածին մէջ: Ռուբէն, այս յօդուածին մէջ անգամ մը եւս կը փաստէ, որ Հայաստան երկիրը բնաւ չէ զլացած իր գաւակներու պաշտպանութեան համար, եւ իր գաւակներն են, որ տգիտօրէն չեն ըմբռնած Հայաստան երկրի յարմարութիւնները: Ռուբէն, հիմնականին մէջ կ'ընդգծէ Հայկական լեռնաշխարհի կեդրոնը, Մասիսի երկու փէշերուն ինկած Սուրմալու եւ Բագրեւանդ գաւառներու ռազմավարական նշանակութեան մասին, կը նշէ, որ ճիշդ այս երկու շրջանները միշտ ալ կռուախնձոր եղած են Օսմանեան կայսրութեան եւ Ռուսաստանի միջեւ: Այսօր Թուրքիան այդ շրջանները կը պահէ իր ձեռքին մէջ, որովհետեւ շատ կարեւոր դեր կը խաղան մասնաւորապէս առեւտրական, ինքնապաշտպանական, յարձակողական եւ յատկապէս թուրանական աշխարհակալական նպատակներու համար:

Ռուբէնի յօդուածներն ու գիրքերը կը փակենք, այսօր իսկ իր այժմեականութիւնը չկորսնցուցած իր քաղաքագիտական-վերլուծական աշխատութիւններու գագաթնակէտին հասած «Հայաստան միջ-ցամաքային ուղիներու վրայ» հիմնական աշխատութեան:

Այս հատորին մէջ, Ռուբէն կը ներկայացնէ իր կատարած ուսումնասիրութիւններէն երկուքը: Առաջինը՝ «Հայաստան միջ-ցամաքային ուղիներու վրայ», իսկ երկրորդը՝ «Մ. Արեւելքի ժողովուրդներ եւ երկիրներ», որ իր կարգին բաղկացած է՝ «Սեմական ժողովուրդները», «Արաբական աշխարհի մէջ» եւ «Սիոնական աշխարհի մէջ» բաժիններէն:

Այս աշխատութեամբ Ռուբէն ցոյց կու տայ, որ համաշխարհային քաղաքական կեանքի տեղաշարժերը պատմական-հասարակական զարգացման, ուժերու յարաբերութիւններու եւ աշխարհագրական պայմաններու արդիւնք են: Ըստ Ռուբէնի, մարդկային պատմութեան ընթացքը կը բնորոշուի Արեւմուտքը եւ Արեւելքը կապող ուղիներու գոյութեամբ: Այդ հիմնական ուղիները երեք են.

- 1.- Մոսկուա-Վոլկա-Յեռաւոր Արեւելք, որու մէկ ծայրը կը հասնի մինչեւ Սախալին, ճափոն, իսկ միւսը՝ Փեքին, Յոնք-գոնկ:
- 2.- Լոնտոն-Սուէյզ-Թեհրան-Հնդկաստան, որու մէկ ծայրը կը հասնի Ջելանտիա, միւսը Փեքին եւ Յոնք-գոնկ:
- 3.- Պոլիս-Էրզրում-Թեհրան-Հնդկաստան, որ Ռուբէն կ'անուանէ նաեւ Մոնկոլապոլսական ճանապարհ:

Ռուբէն, աշխատութեան վերջաւորութեան կ'եզրակացնէ, թէ Հայաստանը պէտք է բաւականաչափ ուժեղ ըլլայ, որպէս քաղաքական գործօն հետաքրքրելու համար մեծ պետութիւնները: Անոր համար Ռուբէն կ'առաջարկէ շարժիլ «Ան եւ տուրի» եւ ոչ թէ «Տուր եւ առի» ուղիով, որ հնարաւորութիւն կու տայ շղթայագերծ ընել «Թանկագին Էրզրումը» եւ Հայաստանը կը կատարէ «իր միջազգային դերը»:

Վերջապէս ուսումնասիրելով Ռուբէնի «Հայաստան միջ-ցամաքային ուղիներու վրայ» գիտաշխատութիւնը, «Հայրքական կնճիռը», «Հ.Յ.Ղ. կազմակերպութիւնը» եւ միւս անկորըն-

չելի գործերը, կը տեսնենք, որ իր այժմեական հնչեղութիւնն ունին եւ քաղաքագիտական մտածումները, մեծապէս օգտակար կրնան ըլլալ հայոց ազգային գաղափարախօսութեան եւ անվտանգութեան հայեցակարգի մշակման գործին մէջ:

Յետեւաբար, մեծ ու անզնահատելի է Հ. Յ. Դաշնակցութեան մարտիրոսացած սերունդին պատկանող Ռուբէն Տէր-Մինասեանի սխրալի գործունէութիւնը՝ հայ ազատագրական պայքարի գործին մէջ, իսկ միւս կողմէ, անոր քաղաքական գիտաշխատութիւնները պահպանելով իր այժմեականութիւնը մեր ժողովուրդի եւ հայկական հողատարածքներու մասին, ուսանելի եւ զգօնութեան հրաւիրող աշխատանքներ են:

Քաղաքագէտ, զինուորական նախարար, հայկական յեղափոխութեան անզուգական յուշագիր եւ Դաշնակցական Ռուբէն Տէր Մինասեանի մահուան 60-ամեակին առիթով խունկ ու աղօթք անոր անմար յիշատակին, եւ կը գետնէնք ծաղկեպսակ ու պատուանշան, խոնարհելով անոր ռազմիկի պլեծուի եւ հերոսական նուիրումին:



ՌՈՒԲԵՆ ՓԱՇԱՅԻՆ Խօսք՝ Աւօ Գաթրճեանի Երաժշտ. Բաֆֆի Ապճեանի

«Կարսի հնոցին մէջ» թրծուեցար, Սասուն ու Մուշի ներսուն ղեկավար, Հայրենիքը փրկելու ուխտեցիր, Թուրքին ու քիւրտին գետին փռեցիր:

Կրկներգ.- Ջաւախքի ծնունդ, արծիւ վիթխարի, Ռուբէն փաշա, մեծանուն պաշտելի, Հեռատես ու քաղաքագէտ ռազմիկ, Բոցակէզ դաշնակցական փոթորիկ:

Տարօնի քաջերուն հետ միասին, Նետուեցար ազատութեան մեհեանին, Կտրելով անարգ թշնամու շղթան, Կովկասը գտար, որպէս ապաստան:

Կրկներգ.- Ջաւախքի ծնունդ, արծիւ վիթխարի...

«Հայոց Ազգային Խորհուրդ»ի անդամ, Մասնակից Մայիսեան յարութեան, Արիւնդ կ'եռար երակներուդ մէջ, Զանգի դարձար իտեալ, տարիներ վերջ:

Կրկներգ.- Ջաւախքի ծնունդ, արծիւ վիթխարի...